ՈՒՂԻ ԱՐԱՐԱՏԻ

Թիվ 1 (15), փետրվար – մարտ, 2008թ.

21-ՐԴ ԴԱՐԸ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԳԱՐԱՇՐՋԱՆԻ ՀԵՌԱՆԿԱՐՈՒՄ

1988-ին հայությունն ու Հայաստանը ահազանգը հնչեցրին, որի դողդոջները առ այսօր չեն մարել: Սա այն իրողությունն է, երբ համայն մարդկության առաջ դրված է լինել-չլինելու հարցը, որով ընթացավ ամբողջ արյունալի 20-րդ դարը, ուստի, առկա է մի բնականոն իրողություն. մարդկությունը, ի վերջո, պետք է ձերբազատվի ինքնաոչնչացման տանող այս այլանդակությունից, իսկ հայությունը վերականգնի իր ամբողջ կորցրածը:

Հայաստանը, ելնելով իր հազարամյակների քաղաքական ավանդույթից, չպետք է մասնակցի ընթացք տրված համաշխարհային այս նոր քաոսին: Պետք է կոչ անի մարդկության առաջադեմ երկրներին՝ անցնել համապարփակ, գործուն ինքնապաշտպանության, և որևէ կերպ չմասնակցել երրորդ աշխարհամարտին. թո՛ղ Արևմուտքն ինքն իր մեջ պատերազմի, եթե իր ժողովուրդները դա թույլ կտան:



Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

21-րդ դարը իրավունքի և օրինականության հաստատման դարաշրջանի հեռանկարում	էջ 1-6	
Չեզոքություն	էջ 7	Յուրի Բարսեղով
Թուրքիայի ռազմական օգնությունը Ադրբեջանին	էջ 8-9	Հայկ Դեմոյան
Թուրք մեսխեթցիների հարցի շուրջ	էջ 10-11	Կարեն Վերանյան
Հայկական հողատարածքների փոխանակումը Պարսկաստանի ու Թուրքիայի միջև	էջ 12-13	Հայկ Գաբրիելյան
Արդարադատության վերականգնումը պետք է սկսել Սումգայիթի ոճրագործության դատավարությունից	էջ 14-15	Ջեմմա Բաղդադյան
Մարտիկ. խիզախ զինվորի հայր	էջ 16	Մկրտիչ Գասպարյան
«Նեմեսիս»-ի աչքերն ու ականջները՝ Հրաչ Փափազյան	էջ 17	Հակոբ Մանջյան
Շենգավիթ. վերջին մի հրապարակման առթիվ	էջ 18	Զ. Պ. Մուղդուսյան
Հայերին առնչվող գրքեր Գերմանիայում	էջ 19	Ժիրայր Քոչարյան
Նոր ուսումնասիրություն Հայաստանի առաջին Հանրապետության պետական անվտանգության համակարգի մասին	էջ 20-21	
Մեր դժվար ժամանակների գրականությունը	էջ 22-23	Վիկտորյա Բուռնազյան
Ծովի երգչի հայաշունչ կտավները	էջ 24-25	Դիանա Մակինյան
Արմենականութիւն եւ Հայք	էջ 26-27	Վարդան Նիկողոսյան
«Հայ քաղաքացիության փորձադաշտը»	էջ 28-29	Սերգեյ Գալոյան
Թեոդիկի եղեռնապատումը	էջ 30-31	Արթուր Անդրանիկյան
Հայ մտավորականի պատկառելի կերպարը	էջ 31	Արփինե Ալավերդյան
Կիրակոս Երզնկացի	էջ 33	Աշխեն Գրիգորյան
Չինացիների կրոնը	էջ 34	Արշակ Գաբրիելյան
Անաշա	էջ 35	Ջեմմա Բաղդադյան
Հայաթափ էրզրումը	էջ 36	Հովիկ Մկրտչյան

Շապիկի վրա պատկերված է **Խուստուփ լեռը**
Լուսանկարը՝ **Հարություն Ստեփանյանի**

Լրատվական գործունեություն իրականացնող «Ուխտ Արարատի» ՍՊԸ, հասցեն Կասյան 6/19, վկայական N-03A 069706, տրված 12.10.2005թ.

Տպաքանակը՝ 500
Ծավալը՝ 4.5 տպ. մամուլ

Համարի թողարկման պատասխանատու՝ Տիգրան Փաշաբեզյան

Տպագրված է «ՍԱՄԱՐԿ» տպարանում, ստորագրվել է տպագրության՝12. 05. 2008

Խմբագրության հասցեն՝ 375010, Երևան, Ագաթանգեղոսի 7բ
Հեռ. (37410) 52-51-90

Official periodical of "Oukht Ararati" LTD

EDITORIAL BOARD
Responsible of the issue: Tigran Pashabezyan

Address: 375010, Yerevan, Agatangeghos 7b
Tel. (37410) 52-51-90
E-mail: oukhtararadi@yahoo.com

Գինը՝ 300 դրամ

«Ուխտ Արարատի» ամսագրից նյութեր արտատպելիս՝ խնդրում ենք հղում կատարել:

Հարգելով հեղինակային իրավունքը՝ ստացված հոդվածները չենք խմբագրում:

21-ՐԴ ԴԱՐԸ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՀԵՌԱՆԿԱՐՈՒՄ

«Առաջավոր Ասիայի հետագա քաղաքակրթական հետադիմության համար ամենամեծ պատասխանատվությունը ընկնում է պարզապես Հռոմի վրա»:
Հակոբ Մանանդյան, «Տիգրան Բ և Հռոմը», Արմֆան-ի հրտ., Երևան, 1940, էջ 11:

«Եթե դուք Գերմանիայում որևէ տեղ հարցնեք Հայաստանի մասին, ապա հիմնականում կտեսնեք շփոթված դեմքեր ու հազվադեպ կլսեք պատասխան. «Հայաստա՞նը, որը զանգ է հնչեցնում...»:
Վոլֆգանգ Կաշուբա, «Ինքնության քաղաքականություն. Հայկական դեպք, Հայաստանը Եվրոպայի ճանապարհին», «Անտարես», Երևան, 2005, էջ 104:

Վերապրելով 20-րդ դարի Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմներն ու Հայոց և այլոց նկատմամբ իրականացված ցեղասպանությունը՝ դժվար չէ կռահել, թե ի՞նչ մեծ աղետի առաջ է կանգնած մարդկությունը նոր՝ աշխարհակործան պատերազմի նախաշեմին: Իրադարձությունների ծավալման ներկա բուռն ընթացքը լավատեսության իրական երաշխիքներ չի տալիս:

Պարզ է, որ բոլոր մեծ և փոքր պատերազմներից, ցեղասպանություններից և մարդկության դեմ գործած այլ հանցանքներից խուսափելու միակ ճանապարհը մնում է միջազգային իրավական նորմերով առաջնորդվելը, որոնք հստակ ձևակերպված են ՄԱԿ-ի հիմնարար սկզբունքներում և ամրագրված են հռչակագրերով, կոնվենցիաներով: Այդ նորմերի կոպիտ խախտման և շահարկման պարագայում հայությունն իր գոյատևման կենսունակությունը փաստագրել է բազմիցս, բայց խնդիրն այսօր արդեն վերաբերում է կործանման տարվող մարդկության ճակատագրին: Կկարողանա՞, արդյոք, միջազգային կոչված հանրությունը վերակազմակերպվել, դիմակայել և վերջ դնել արդեն իսկ համայն մարդկության գոյությանը սպառնացող այս մեծ արհավիրքին, որը հետևողականորեն գործադրվող դավադրության տպավորություն է թողնում:

20-րդ դար... 21-րդ դա՞ր...

- **Երրորդ աշխարհամարտ.** Դեռ 1990-95թթ. քաղաքագիտական վեճի առարկա էր համարվում հիվանդագին մտածողությամբ ձևավորվող աշխարհի գլոբալ վերափոխման նպատակային գործընթացը, որին իր բարձրակետի փուլում պետք է նախորդի ՄԱԿ-ի չեզոքացմանը հաջորդող երրորդ աշխարհամարտը: 1990-ից առ այսօր գերտերությունների ու մի շարք երկրների վարած ներպետական ու արտաքին քաղաքականության բոլոր վերլուծությունները, սակայն արժեզրկվում են ԱՄՆ նախագահի թեկնածու Մաքքեյնի առաջարկների դիմաց, ըստ որի ՄԱԿ-ը պետք է փոխարինել Դեմոկրատիայի Լիգա կոչվող միջազգային նոր կառույցով, իսկ ՆԱՏՕ-ի մեջ պետք է ներառել Վրաստանը, Ուկրաինան, Կոսովոն: Ասել է թե կրկնվում է Երկրորդ աշխարհամարտի սցենարը: Պարզապես Բալկանների լարվածության թեժացմանը զուգահեռ, գործի են դրվում նաև Սևծովյան, Կովկասի և Միջին Արևելքի հակամարտությունները ևս բորբոքելու ծրագիրը: Դա կսկսվի ապրիլից ոչ շուտ, քանզի համաձայն Ֆրանսիայի նախագահ Սարկոզիի հայտարարության՝ մարտ ամսին նախատեսվում է ավարտել Եվրոմիությունը գերտերության վերածելու գործընթացը: Այսինքն, բացահայտվում է 50 տարի շարունակ Ալան Դալեսի նախագծով իրականացված եվրոպական խաբված ժողովուրդների դանդաղեցված հեղափոխության բուն նպատակը՝ Եվրոպա տարածաշրջանը մեկ ընդհանուր գերտերության վերածելու խնդիրը, ծրագրողներին էլ հենց առաջնահերթորեն պետք է երրորդ աշխարհամարտ հրահրելը, որպեսզի Կոսովոյում տեղակայված զինուժով զսպեն եվրոպական բոլոր այն ազգերին ու պետություններին, որոնք կփորձեն խոչընդոտել ծրագիրը և ընդդիմանալ եվրո-գերտերության վերազգային վարչակարգի կամքին:

Ինչ վերաբերում է Աֆրիկայի և Միջին Արևելքի Միացյալ Նահանգներին և դրանք ստեղծելու համար հրահրվող հակամարտություններին, ռազմա-քաղաքական ու ահաբեկչական այլ գործընթացներին, ապա դրանց կարող եք ծանոթանալ մեր պարբերականի նախորդ համարներում: (Տե՛ս, թիվ 10, 11, 12, 13):

Տվյալ իրադրությունում վտանգավոր ենք համարում այն, որ Ռուսաստանի նախագահական ընտրություններից հետո կարող է փոխվել ռուսական արտաքին քաղաքականությունը, որպես Արևմուտքին շահեկան ինքնամեկուսացման տարբերակ (իբրև թե՝ «Մենք չենք խանգարում Ռուսաստանին, Ռուսաստանն էլ թող մեզ չխանգարի»): Սակայն ակնհայտ է, որ հակամարտությունների ծավալմանը զուգընթաց Ռուսաստանին, այդուհանդերձ, ներքաշելու են քաոսի մեջ: Այս անգամ Գերմանիայի փոխարեն վայրի գործիքի դերակատարությունը դրված է ԱՄՆ-ի վրա, որի քաղաքական վերնախավի վարած արտաքին քաղաքականությունը, ինչպես ակնհայտ է, ամենևին էլ չի համապատասխանում ԱՄՆ պետության և ժողովրդի շահերին: Իսկ թե ինչպե՞ս է պատահում, որ այդքան հզոր պետությունը հեշտությամբ կառավարելի է դառնում այլոց կողմից, հասկանալի կլինի, եթե նայեք ԱՄՆ Սահմանադրությունը՝ նախագահին վերաբերող հոդվածները, բիլերը...

Աշխարհի շատ երկրներ, ակամայից իսկ, հակամարտությունների մեջ ներքաշելու հիմնական տեխնոլոգիան կրկին արհեստականորեն ստեղծվող համաշխարհային տնտեսական մեծ ճգնաժամն է, որը, փաստորեն, ընթացքի մեջ է դրվել 2008-ի հունվարի 17-18-ից: Դա նախ կհանգեցնի համաշխարհային տնտեսական մեծ քաոսի, իսկ հետո աշխարհամարտի, որի հետևանքով առաջացած կորուստները հնարավորություն կտան, որպես փրկություն, արդեն իսկ բացահայտ ներկայացնելու համաշխարհային կառավարություն ստեղծելու մոլագար գաղափարը: Այսպես է ծրագրված, իսկ թե դրանից ի՞նչ դուրս կգա, ցույց կտա կյանքը...

- **ՄԱԿ-ի լուծարման հարցադրումը նախորդ փորձի՝ Ազգերի Լիգայի օրինակով.** Պատահական չէ, որ 1992-93թթ. առ այսօր ՄԱԿ-ի երևանյան գրասենյակը ընդամենը լրատվական դեր է կատարում, այն դեպքում, երբ առնվազն ավելի բարձր կարգավիճակ և լիազորություններ են պահանջվում՝ հաշվի առնելով տարածաշրջանում առկա ռազմա-քաղաքական ակտիվությունը: Ըստ այդմ, կարելի է պնդել, որ ՄԱԿ-ը Հայաստանում իր իսկական առաքելությամբ հանդես չի գալիս. զբաղված է ծխել-չծխելու, ընտանիքի պլանավորման, կանանց ու երեխաների, կրոնական աղանդների ու մարդու եվրո-իրավունքների հարցերով: Իսկ ՄԱԿ-ի կառույցներից Համաշխարհային Բանկն էլ զբաղված

է Հայաստանի կրթական համակարգը պլանավորված չարափոխելու խնդիրներով: Ասել է թե, ՀՀ քաղաքացիները, իրենց անմիջական փորձից ելնելով, չեն ընկալում ՄԱԿ-ը, որպես իրավական միջազգային լրջագույն կառույց: Փոխարենը՝ ՀՀ-ում շատ ակտիվ են Եվրոմիության և ԱՄՆ-ի պետական ու ոչ պետական մեծաքանակ կառույցներն ու գրասենյակները: Կրկին, ինչպես 1930-ական թթ. դրված է բոլոր՝ առաջադեմ, առողջ մտածողության ու միջազգային իրավական նորմերի վերացման հարցը: ՄԱԿ-ի միջազգային դատարանը կամակատար կառույցի վերածելու, դա իրավական առումով իմաստազրկելու խնդիրը: Ազգերի Լիգան չեզոքացնելու միջոցով հնարավոր եղավ սանձազերծել Երկրորդ աշխարհամարտը: Ուստի, երրորդ աշխարհամարտի նախաշեմին լիովին բացահայտվում է այն քայլերի տրամաբանությունը, որը 1995-ից ուղղված է ՄԱԿ-ի դերն ու նշանակությունը արժեզրկելու նպատակին: Օրինակ՝ ՄԱԿ-ի մերժումին հակառակ՝ ԱՄՆ-ն ու Մեծ Բրիտանիան ներխուժում են Իրաք: ՄԱԿ-ի ներկայացուցիչը հրաժարվում է Աֆղանստանում պաշտոնավարել: Այս ու այնտեղ պայթում են ՄԱԿ-ի առաքելություններն ու գրասենյակները: Եվ վերջապես, ավելի քան մտահոգիչ վերջին քայլերից մեկը՝ Կոսովոյի հարցում, կանոնադրությանը հակառակ, ՄԱԿ-ի Անվտանգության Խորհուրդը փորձում է իր լիազորությունները զիջել Եվրոմիությանը:

- **Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, Կոսովո.** Կոսովոյի անկախության ճանաչումը, իրոք որ, չի կարող օրինակ լինել Արցախի անկախության ճանաչման համար, քանզի դրանք հակոտնյա իրողություններ են: (Տե՛ս, Ю.Г.Барсегов, Обязателъная сила права народов на самоопределение и средства его обеспечения, Москва, 1993, МГФА, 34 стр.): Արցախի խնդիրը միջազգային իրավունքի նորմերով կարգավորվող՝ բռնազավթումից ազատագրվելու օրինական խնդիր է: Կոսովոյում հակառակ պատկերն է. օտարերկրացիները՝ այսպես կոչված ալբանացիները, դեռ 1945-ից, կանխավ ծրագրված, խաղաղ էքսպանսիայի՝ ներխուժման միջոցով, տեղավորվել են Կոսովոյում, իսկ Հարավսլավիայի ուժային մասնատման հայտնի դեպքերի հոլովույթում՝ սերբերին բռնի դուրս քշել երկրամասից, դարձել այնտեղ մեծամասնություն. ի դեպ, հար ու նման ԽՍՀՄ - Ադրբեջան հանցագործ համաձայնության ծեռագրի, որն իրականացվեց 1921-ից Նախիջևանի նկատմամբ, և որը սակայն չհաջողվեց Արցախում: Այսինքն՝ Կոսովոյում դրված է միջազգային իրավունքը ոտնահարելու, տարածքներ զավթելու ու մասնատելու, այլ ոչ թե ազատագրելու խնդիր: Ջուգահեռ ստիպում են ազգերին մոռանալ հայրենիք հասկացողությունը, փորձում են մարդկության հիշողությունից վերացնել ազգ, ընտանիք, հայրենիք սրբությունները: Բայց քանի որ հենց բնության օրենքների համաձայն ազգերը չեն կարող մոռանալ իրենց ինքնությունն ու լքել իրենց հայրենիքը, ուստի, միջոց են համարում բոլոր հին ազգերի ոչ միայն ֆիզիկական, այլև բարոյահոգևոր ու քաղաքակրթական արժեքների ոչնչացումը:

- **Բարոյական ցեղասպանություն.** Մեջբերենք երկու օրինակ. 1. Եվրոպական երկրներում մի քանի տասնյակ քրիստոնեական եկեղեցիների աճուրդով վաճառքը, որն ավելի կործանարար է քան մարտնչող անաստվածությունը՝ աթեիզմը: 2. Եվրո-ծաղրանկարիչների ոտնձգությունները իսլամի սրբերի ու սրբությունների նկատմամբ, որով բացի ատելություն սերմանելուց, նաև բարոյազրկման են տանում քրիստոնյա եվրոպացիներին:

- **Մշակութային ցեղասպանություն.** Սա է մարդկության դեմ ուղղված 20-րդ դարի առաջին հանցագործության՝ 1915-23թթ. Հայոց ցեղասպանության քաղաքականության որդեգրման բուն նպատակը: Իրականացվում է մշակութային ցեղասպանություն բոլոր հին քաղաքակրթությունների, հին ազգերի մշակույթների նկատմամբ: Օրինակները շատ են և ամենուր: Հիշենք Աֆղանստանը, Բուդդայի արձանների ոչնչացումը և չգիտես ինչո՞ւ թալիբների ձեռքով, Բաղդադի ամբողջ հնագիտական հավաքածուների թալանն ու կողոպուտը, Նախիջևանի հայկական խաչքարերի ոչնչացումը հենց Ադրբեջանի ռազմական կառույցների ներգրավմամբ, հայկական հուշարձանների ռմբակոծություններն ու ավերումները թուրքական բանակի կողմից, Կոսովոյում սերբական հուշարձանների ավերումն ու ոչնչացումը, Հարավային Կորեայի հոգևոր կենտրոնատեղիի՝ Հարավային դարպասների, անհեթեթության հասնող հրկիզումը, չգիտես ինչո՞ւ և ո՞ւմ պատվերով: Նման դեպքերը շատ-շատ են, մանավանդ, վերջին 50 տարիների ընթացքում: Ծրագրված այս վանդալիզմի սկիզբը կա, նպատակն էլ է պարզ, որ որոշակիորեն արտահայտել է անգլիական հետախույզ Լուրենս Արաբացին. «...ինչպես հայերն են, ինչպես բոլոր այն հին ազգերը, որոնց պետք է ոչնչացնել», սակայն վերջը չի երևում: Այս ծրագրի մաս են կազմում նաև հին քաղաքակրթությունների, հին ազգերի պատմության նենգափոխումն ու խեղաթյուրումը:

- **Միջազգային նոր վտանգներ և հանցագործ գործիքներ.** Մարդկության վերջին երեք հազարամյա պատմության մեջ «Միջազգային ահաբեկչություն» կոչվածը իր ծնով և ծավալով աննախադեպ հանցագործ երևույթ է: Առանձնապես չի քննարկվում դրա առաջացման պատճառը: Իսկ կատարված գործողությունների բովանդակությունն ու նպատակներն էլ համոզիչ չեն: Այլ խնդիր է, թե ինչու են լռում երկրների ղեկավարները, քաղաքական գործիչները, քաղաքագետները, երբ հայտնի է այդ հանցագործ գործիքի ստեղծման բուն պատճառը: Պատճառն այն է, որ անգամ ամենաագրեսիվ արևմտյան երկրների ժողովուրդները դեմ են բռնությանը ու չեն ուզում պատերազմել: Դա հստակ երևաց Առաջին աշխարհամարտից հետո, երբ համաշխարհային արյան ու մահվան այդ խառնարանում ներառված երկրների ժողովուրդները այդպես էլ չհասկացան, թե ո՞վ, ո՞ւմ դեմ և ինչո՞ւ էր կռվում... և ինչի՞ համար էին այդ բոլոր կորուստներն ու ողբերգությունները: Երկրորդ աշխարհամարտը սանձազերծելիս, նախապես քաջատեղյակ, որ ժողովուրդները իրապես դեմ են նոր պատերազմին, ծնեցին ֆաշիզմը՝ այսպես կոչված նացիոնալ - սոցիալիզմը, որը, փաստորեն, հակադրեցին ինտերնացիոնալ - սոցիալիզմին. և համաշխարհային ստրկացումից խուսափելու համար էր, որ ժողովուրդները կռվեցին և հաղթեցին: Ինչ վերաբերում է ֆաշիզմի զավթեողական քաղաքականությանը, ապա դա էլ ծառայեցվեց ընդամենը եվրոպական ժողովուրդներին համոզելու, որ անհրաժեշտ է ստեղծել համաեվրոպական պետություն, գաղափար, որը հաջողվեց զարգացնել վերջին 40 տարիներին:

Այսօր իրողությունը այլ է: Նույն ճանապարհով ժողովուրդներին խաբել հնարավոր չէ: Ուստի, բանակների ու հատուկ ծառայությունների ողջ ներուժը, «Միջազգային ահաբեկչություն» անվան տակ, ուղղորդվեց հենց միայն բնակչության, ժողովրդային զանգվածների վրա, գրեթե բոլոր երկրներում: Ասել է թե, խաղաղ և ինքնուրույն ապրել կամեցող ժողովուրդներին պետք էր ցույց տալ, որ չնայած երկրի իրավապահ և ուժային կառույցների առկայության, նրանք լիովին անպաշտպան են անգամ իրենց տան մեջ, քանզի դա կարող է պայթել գազից կամ հրդեհվել, տրանսպորտում, որը նույնպես կարող է պայթել, կամ դրսում՝ հասարակական վայրերում, ծննդատանը, մանկապարտեզում և դպրոցում: Նման մարդատյաց դաժանություն իրավամբ մարդկությունը չէր տեսել: «Միջազգային ահաբեկչությունը» կազմակերպվում է աշխարհում «եղանակ ստեղծող» և մեծ միջոցներ տնօրինող որոշ հատուկ ծառայությունների միջոցով: Ցավոք, դրա իրագործմանը նպաստում են նաև մի շարք երկրների ինչ-ինչ իշխանավորներ ու հանցագործ տարրեր: Պատահական չէ, որ ելցինյան Ռուսաստանում բնակչության դեմ մոլեգնող ահաբեկչությունը կտրուկ նվազեց Պուտինի ղեկավարման շրջանում: Իսկ Եվրոպայում նա ի հայտ է գալիս այն երկրում, որի ղեկավարը կամ ժողովուրդը ինչ-որ հարցերում դեմ է Եվրոմիություն կոչվող ընդհանուր պետության ստեղծման գործընթացին: Ինչ վերաբերում է սեպտեմբեր 11-ին, ապա հենց ամերիկյան աղբյուրներից հայտնի է, որ բուն կազմակերպիչներին պետք է փնտրել երկրի հատուկ ծառայություններում: Հազարամյակներից եկող հայտնի ճշմարտություն է. ոչ մի հայրենասեր ու ազգային անհատ, ազգային-ազատագրական պայ-

քարի կամ այլ խնդիրներից մեկնած չի կարող սպանել խաղաղ, անպաշտպան մարդկանց, առավել ևս կանանց ու երեխաների: Սրանք նոր տիպի՝ վարձու մարդասպաններ են, ոճրագործներ, որոնց նկատմամբ, ի դեպ, եվրոպական մարդու իրավունքները պահանջում են ներողամիտ լինել և մահապատիժ չկիրառել:

- **Կլիմայական փոփոխություններ.** Իհարկե այստեղ բնական գործընթաց էլ կա, կա նաև ջերմոցային էֆեկտ, ինչպես նաև բնության և մարդկության հրատապ խնդիրների նկատմամբ անհոգի ու անպատասխանատու վերաբերմունք: Սակայն կա նաև քաղաքական գործոնով պայմանավորված օդերևութաբանական զենքի կիրառման հարց: Տարօրինակ չէ՞, որ աշխարհի ոչ մի վերլուծաբան չի անդրադառնում այդ զենքի կիրառման փաստերին, երբ դա ԱՄՆ-ն գործածել է դեռ Վիետնամի պատերազմում: Հիշենք նաև 1968թ. ԱՄՆ - ԽՍՀՄ պայմանագիրը օդերևութաբանական և երկրաֆիզիկական զենքեր (արհեստածին եղանակներ, ցունամիներ, երկրաշարժեր) չկիրառելու մասին: Պարզ է, որ վերջին 40 տարիների ընթացքում դրանք ավելի են կատարելագործվել: Դա, հավանաբար, օգտագործվում նաև Եվրոպայում: Ինչո՞ւ: Որովհետև Եվրոպան պետք է դառնա ընդհանուր պետություն՝ գերտերություն: Այդ զենքն է, որ օգնելու է եվրոպացիներին, օրինակ՝ իսպանացիներին, պորտուգալացիներին, հույներին, գերմանացիներին, նաև անգլիացիներին համոզելու, որ «բնական» աղետներին հնարավոր չէ միայնակ դիմակայել: Ստեղծվում է երաշտի շրջան, ապա հրդեհվում են անտառները կամ էլ գալիս է անձրևների շրջանը, և բերքն է կորստի մատնվում, և կամ առաջանում են տվյալ տարածաշրջանին ոչ համապատասխան ճնաքքեր, սառնամանիքներ. արդյունքում, Եվրոմիությունը, որպես «բարի քեռի», օգնության է հասնում և համապատասխան քարոզչություն իրականացնում, թե միայն ընդհանուր պետության կազմում կարող ենք պաշտպանվել այդ ամենից: Մի բան ակնհայտ է, որ եթե մինչև ԽՍՀՄ-ի փլուզումը այդ զենքին տիրապետում էին ԽՍՀՄ-ն ու ՆԱՏՕ-ն, ապա ԽՍՀՄ-ի փլուզումից հետո դրա «մենաշնորհը» ՆԱՏՕ-ինն է: Ամենևին տարօրինակ չէ, որ լրատվամիջոցները այնպիսի թյուր կարծիք են ստեղծում, թե նման զենքերի գոյությունը անհավանական է:

- **Գլոբալացո՞ւմ, թե՞ համաշխարհային իշխանություն.** Դեմոկրատական Լիգայի և համաշխարհային տիրապետման արդի այլ տեխնոլոգիաների, բաց սահմանների, համայնքներին ինքնիշխանություն տալու ծրագրերի միջոցով իրականացվելու է բնական ռեսուրսների շահագործումը: Ըստ 2007-ի սեպտեմբերի 17-ի ՄԱԿ-ի Բնիկ ժողովուրդների իրավունքների մասին հռչակագրի որոշ դրույթների, մոլորակի բնական հարստությունները փորձելու են կուտակել վերազգային, վերպետական կոորպորացիաների ու կապիտալի ձեռքում: Այդ է հաստատում մեր ժողովրդի կողմից երկու անգամ մերժված ՀՀ Սահմանադրության եվրոնախագիծը, որտեղ ներկայացված է առաջիկայում կիրառվելիք քաղաքականությունը ՀՀ-ի նկատմամբ. սեփականության և ինքնիշխանության մեծ իրավունքներ են տրված համայնքներին՝ վերածելով նրանց պետական իշխանություններից տարանջատ, ինքնուրույն իշխանությունների:

Ի դեպ, պարոն Բուկիգոն՝ ԵՄ Վենետիկի հանձնաժողովի նախագահը, ոգևորված, որ հաջողվեց անցկացնել ՀՀ Սահմանադրության նոր տարբերակը, այժմ էլ իրենց ծառայություններն է առաջարկում ԼՂՀ-ի հիմնահարցի «իրավական» կարգավորմանը…

- **ԱՄՆ-ի անփառունակ վախճանը, որպես գերտերություն.** Առաջին փորձը կա. 1929թ. տնտեսական լավ մշակված արհեստական ճգնաժամը: Նույն գործընթացը ընթացքի մեջ է դրված: Չնայած Ֆրանկլին Ռուզվելտի ԱՄՆ-ն փրկելու պատմական հաջողված փորձին, ենթադրում են, որ ԱՄՆ-ի համար հետքայլի հնարավորություն այլևս չկա: Մինչ այդ նրանք պետք է հրահրեն պատերազմել Իրանի հետ, ակնկալելով, որ դա շղթայական հակամարտություններ կծավալի ամբողջ Արևելքում, ըստ Ռալֆ Պիտերսի քարտեզի, որտեղ ԱՄՆ-ին մեծապես պետք է աջակցի Թուրքիան, որից հետո ակնհայտ է, որ Թուրքիան կմնա անօգնական, երբ Ամերիկան գերտերություն չի լինի, ուստի, ուզի թե չուզի, ենթարկվելու է Եվրոմիություն կոչվող գերտերության թելադրանքներին: Ուշագրավ է, որ անցյալ տարի, երբ Սարկոզին հայտարարեց Միջերկրածովյան ընդհանուր պետության ստեղծման մասին, Գերմանիան իր նախկին դիրքորոշումը փոխեց և համաձայնեց, որ Թուրքիան չանդամակցի Եվրոմիությանը, այլ, որպես ասիական երկիր, ներգրավվի Միջերկրածովյան ընդհանուր պետության կազմում: Եվրոմիության բուն իշխանությունը հիմա տանում է Գերմանիան տնտեսապես կախվածության մեջ գցելու քաղաքականություն, հիշելով նախկին փորձը, որպեսզի նա լինի դյուրին կառավարելի, առանց սեփական նախաձեռնությունների և հավակնությունների: Այնպես որ ֆիննական «Նոկիայի» Ռումինիա տեղափոխելը երկու խնդիր է լուծում. մի կողմից՝ ճնշել գերմանական հավակնությունները, մյուս կողմից՝ ցույց տալ Ռումինիային, որ նա պետք է ապավինի միայն Եվրոմիությանը և չընդբոստանա իր սևծովյան առափնյա մասը անջատելու խնդրում: Բուլղարիային հատուկ շահագրգռելու կարիք չկա, քանի որ այդ երկրի խորհրդարանի 30 տոկոսը թուրքեր են, և իրենք այդ խնդիրը հաճույքով կլուծեն առանց ավելորդ ծախսերի ու խոստումների: Օրեր առաջ պարզվեց, որ Հունաստանի թեթև արդյունաբերությունը տեղափոխվում է Բուլղարիա, ըստ երևույթին, Հունաստանը թուլացնելու, ծնկի բերելու համար:

Առաջին հայացքից է միայն տարօրինակ, որ Եվրոմիության բոլոր երկրները դարձան Շենգենյան գոտու անդամներ՝ բացառությամբ Բուլղարիայի և Ռումինիայի: Իրականում դա նշանակում է, որ առաջիկայում այդ երկրներում պետք է սպասել ներքին անջատողական գործընթացներ, որոնց հետևանքում դրանց ծովափնյա մասերը կանջատվեն այդ երկրներից և կմիանան Սևծովյան ընդհանուր պետությանը: Դա նախատեսել են իրականացնել Ղրիմի և Օդեսայի մարզերը Ուկրաինայից անջատելուց հետո միայն, գուցե զուգընթաց (դրանով է բացատրելի վերջին տարիներին Յուլիա Տիմոշենկոյի անտրամաբանական թվացող վարքագիծը): Դրա համար է կարևոր, որ Վրաստանն ու Ուկրաինան, Կոսովոյի հետ միասին, դառնան ՆԱՏՕ-ի անդամ, որպեսզի Սևծովյան ընդհանուր պետության ստեղծումը լրիվ ուղղորդվի, հսկվի ՆԱՏՕ-ի կողմից:

- **Քաղաքակա՞ն, թե՞ իրավական լուծումներ ներպետական և միջազգային խնդիրներին.** Իրավունքը մշտապես խաթարվել է քաղաքական լուծումներ հանդիսացող այլանդակությունների կիրառման հետևանքով թե՛ միջազգային, թե՛ ներպետական խնդիրներում: 20-րդ դարը դարձավ մարդկության պատմության ամենադաժան ու արյունալի դարը, քանզի թե՛ Առաջին, թե՛ Երկրորդ աշխարհամարտերից հետո Ազգերի Լիգայի և ՄԱԿ-ի ամրագրած միջազգային իրավական լուծումները արհամարհվեցին. նախապատվությունը տրվեց, այսպես կոչված, քաղաքական լուծումներին: Իսկ քաղաքական լուծում ասվածը, ըստ էության, գերտերության կամ գերտերությունների ուժի դիրքերից այլ երկրներին իրենց կամքը թելադրելու, պարտադրելու իրողություններ էին: Եթե Առաջին աշխարհամարտից առաջ միջազգային հանրությունը արգելում էր քիմիական զենքի գործածումը, ապա պարզվեց, որ նա այնուամենայնիվ գործածվեց այդ պատերազմում: Կանխարգելելու համար հետագա պատերազմները, ստեղծվեցին մի շարք միջազգային իրավական նոր նորմեր, օրենքներ, սկզբունքներ, որոնք

բնականաբար իրագործվելու էին հենց Ազգերի Լիգայի գործունեության միջոցով: Դրանք գործեցին այնքան, քանի դեռ վերականգնվում էին հաղթած և պարտված երկրները: 1930-ականներին արդեն, երբ խնդիր դրվեց նոր աշխարհամարտի հրահրման, դրան կողմնակից գերտերություններն ու իրենց ազդեցության տակ գտնվող փոքր երկրները անգործության մատնեցին թե՛ Ազգերի Լիգան, թե՛ միջազգային իրավունքը: Նույնը կատարվեց և Երկրորդ աշխարհամարտից առնվազն մի հինգ-տասը տարի հետո: Այդ գործընթացը մեծ թափ ստացավ 1995թ. ԽՍՀՄ-ի և Սոց. ճամբարի ինքնափլուզման փաստով, որի ընթացքում, առաջին հերթին, ոտնահարվեցին բոլոր այդ երկրների ժողովուրդների իրավունքները, խախտվեցին նրանց նկատմամբ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հռչակագրի բոլոր դրույթները, իսկ միջազգային քաղաքականություն ասվածը իրավականից տեղափոխվեց, այսպես կոչված, կամային - քաղաքական լուծումների դաշտ: Վերջին տասը տարիներին ՄԱԿ-ի շարունակական հեղինակազրկման հետևանքում, այսօր արդեն, անամոթաբար դրվում է ՄԱԿ-ը լուծարելու խնդիրը: Հարց է ծագում. այդ տերությունների, այսպես կոչված, քաղաքական կամք ցուցաբերող գործիչների համար ի՞նչ է, քի՞չ է թվում մեկ հարյուրամյակ ձգվող համամարդկային ողբերգությունը, երբ արդեն նորովի, օրեցօր հրահրում են երրորդ աշխարհամարտ:



20-րդ դար... 21-րդ դա՞ր...

Ասել, թե դա անշրջելի գործընթաց է և կանգնեցնել չարիքը անհնար է, սխալ է: Դեռ ուշ չէ, հնարավոր է կանխարգելել, միայն թե պետք է, որ առնվազն առաջադեմ երկրների մեծ մասը, հենվելով իրենց ժողովուրդների համահավաք կամքի վրա, պաշտպան կանգնի ՄԱԿ-ին և կանխի նրա հեղինակազրկման ու լուծարման նկրտումները: Նաև ՄԱԿ-ը առաջնորդվի իրավամբ համամարդկային բնական գործընթացները կարգավորելու ունակ ու հզոր կառույց դարձնելու ճանապարհով: Ինչպես նաև, անկախ պետության ռազմաքաղաքական հզորությունից և ագրեսիվությունից, հենց ՄԱԿ-ում պատասխանատվության կանչվի պատերազմի քարոզչությամբ ու նախապատրաստությամբ զբաղված քաղաքական, պետական, հասարակական յուրաքանչյուր գործիչ: Որ հետո Երկրորդ աշխարհամարտի օրինակով չլինի պատերազմի հանցագործներին ողբերգությունից հետո ուշացած պատասխանատվության ենթարկելու ու դատապարտելու նոր Նյուրնբերգ: (Տե՛ս, էջ 15, «Սերբիան դատի կտա Կոսովոն ճանաչած երկրներին»):

Վստահաբար ոչ մի երկրի ժողովուրդ, առավել ևս ԱՄՆ-ի, ինքը չի ուզում պատերազմել, չի ուզում անգամ, որ ուրիշ երկրներ պատերազմեն: Չասելու համար, որ Երկիր մոլորակի վեց միլիարդանոց բնակչության մեջ պատերազմի քարոզիչների ու հրձիգների թիվը անգամ մեկ հազարերորդական տոկոս չի կազմում: Հարց է ծագում՝ այս անգա՞մ էլ միջազգային հանրությունը, իր միջազգային կառույցով հանդերձ, թույլ է տալու մի բուռ հանցագործների մարդկությանը նետել համաշխարհային քաոսի, աղետի, ողբերգության մեջ…

- **Եվրոմիություն գերտերության և ԱՄՆ-ի հնարավոր հակամարտությունը.** 1947 թվականից Ալան Դալեսի հայտնի ծրագրով՝ եվրոպական երկրների ժողովուրդներին խաբելուց, ապակողմնորոշելուց և մի լավ մշակելուց հետո, այսօր արդեն բացահայտ դրվում է Եվրոմիությունը տարածաշրջանային համագործակցության միջազգային կառույցից գերտերության վերածելու խնդիրը: Ասել է թե նախկին ԽՍՀՄ - ԱՄՆ երկու բևեռների վերադասավորման միջոցով ստեղծվում է մի նոր բևեռ՝ գերտերություն, առանց իսկ հարցնելու Եվրոպայի ժողովուրդների կամքը, իսկ նրանք ուզո՞ւմ են, թե՞ ոչ… Չեն հարցնում, քանզի գիտեն, որ առնվազն ֆրանսիացիներն ու հոլանդացիները հանրաքվեով արդեն իսկ մերժել են դա: Ճիշտ են ասում, որ այս ամենը կոչվում է ժողովրդավարության «եվրոչափանիշներ», քանզի նրանք ոչ մի աղերս չունեն իրական, բնական ժողովրդավարության հետ:

Մի՞թե Ժողովրդավարության «եվրոչափանիշների» կամ գերտերության ղեկավարի առաջիկա դիրքերից չէր, որ Թերի Դևիսը ամիսներ առաջ ՀՀ իշխանությունների ու ժողովրդի նկատմամբ ակնհայտ վերամբարձ տոնով, մի կողմ շպրտելով դիվանագիտական վարքը, անտեղի ու անհարգալից համեմատություն անելով, քաղաքական ու իրավական ոչ ճշգրիտ ձևակերպումներ թույլ տվեց Արցախի պետության ու ժողովրդի հանդեպ: Մեծ հարց է ծագում, արդյո՞ք Եվրոմիության բարձրաստիճան պաշտոնյան լավ ծանոթ չէ միջազգային իրավունքին, եթե այո, ուրեմն, չի՛ համապատասխանում իր զբաղեցրած պաշտոնին: Իսկ եթե ծանոթ է, բայց արհամարհում է միջազգային իրավական նորմերը, ուրեմն, չի՛ համապատասխանում ժողովրդավարության եվրոպական իրական չափանիշներին, եթե այդպիսիք կան: Ի դեպ, ՀՀ իշխանությունները փորձեցին չնկատելու տալ փաստը, սակայն, չենք կարծում, թե մեր ժողովուրդը կամ անողոք սլացող ժամանակը մոռացության կմատնի Թերի Դևիսի խոսքը: (Տե՛ս, էջ 16, «ԵԽԽՎ Գլխավոր Քարտուղար Թերի Դևիսի այցը Հայաստան»):

Սակայն, վերադառնանք մեր նյութին: Ակնկալվում էր եվրո-գերտերության հիմնադիր փաստաթուղթն ունենալ սույն թվականի մարտ ամսին: Դրանով պայմանավորված Եվրոպան աշխատում էր Կոսովոյի անկախության հռչակումը հետաձգել մինչև մայիս ամիսը: Այդ հարցում շտապեց ԱՄՆ-ն և, փաստորեն, երկու մասի բաժանեց ԵՄ-ն՝ վտանգելով նաև ԵՄ Սահմանադրության ընդունումն ու վերազգային իշխանությունների ձևավորումը: Այս փաստը խոսում է այն մասին, որ ԱՄՆ-ն այլևս հրաժարվում է ԵՄ-ին զիջել համաշխարհային գերտերության իր դիրքերը:

- **Կոնգո, Կոսովո, Կովկաս.** Կոսովոյի վերջին ամիսների զարգացումները իրական լույս սփռեցին Ռալֆ Պիտերսի հոդվածի առեղծվածային թվացող մի հատվածի վրա. **«Իսկ բոլոր նրանք, ովքեր մերժում են պատկերացնել աներևակայելին՝ հայտարարելով, թե սահմանները վերջնական են և անփոփոխ, արժե հիշեցնել, որ սահմանները երբեք էլ ստատիկ, կայուն չեն եղել: Դարերի ընթացքում փոխվել են և հիմա էլ են փոխվում (Կոնգոյից սկսած մինչև Կոսովո և Կովկաս)»**: Առաջին հայացքից անհասկանալի է այս երեք տարածքների միասին հիշատակումը: Սակայն եկեք հիշենք, որ վերջերս արդեն բաց տեքստով է ասվում, որ Կոսովոն լինելու է Եվրոպայի Միացյալ Նահանգներ ընդհանուր պետության ռազմական - ոստիկանական ուժերի կուտակման կենտրոնակայանը, կախվածություն չունենալով եվրոպական երկրներից, որի հիմնական դերը լինելու է ոստիկանական ուժային գործողությունների իրականացումը ԵՄ-ի վերազգային իշխանություններին հակադրվող եվրոպական որևէ երկրի նկատմամբ: Ստացվում է, որ նմանատիպ խնդիրների իրականացման դեր ու նշանակություն է տրված Կոնգոյին՝ Կենտրոնական Աֆրիկայում, Աֆրիկայի Միացյալ Նահանգների երկրների նկատմամբ: Ինչ վերաբերում է Կովկասին, ապա նա հսկողություն է սահմանելու քաղաքակրթությունների հայկական խաչմերուկում և հսկողություն է սահմանելու միջերկածովյան, սևծովյան, կասպիական միությունների նկատմամբ, նաև համակարգելու է ԱՄՆ-ի, ԵՄ-ի քաղաքականությունը այս տարածաշրջանների նկատմամբ: Հենց դրանով են պայմանավորված տարածաշրջանի երկրներից, հատկապես Հայաստանից ու Վրաստանից, հայերի ու վրացիների արտագաղթի ուժգնացման գործընթացները: Քանզի բնիկ ժողովուրդները կխանգարեն իրենց երկրներում ռազմական - ոստիկանական կայանների տեղակայմանը: Իսկ արտագաղթի ուժգնացմանը նպաս-

տում են արդյունաբերության ոչնչացումը, գիտության ու կրթության փոշիացումը: Ինչ վերաբերում ՆԱՏՕ-ի ռազմակայանը սպասարկողներին, ապա այստեղ այդ դերը հավանաբար վերապահվելու է քրդերին:

- **Պաղեստինա - իսրայելյան հակամարտության բուն պատճառը.** Արդեն մի քանի տասնամյակ է ինչ պաղեստինցիների և իսրայելցիների համար իրար սպանելը դարձել է առօրյա իրողություն: Հարց է ծագում, արդյո՞ք չհոգնեցին, ո՞րն է այս ոչ բնական կենսաձևով ապրելու բուն պատճառը: Պաղեստինա - իսրայելյան հակամարտությունը պայմանավորված է մեկ հանգամանքով. չեն ուզում, որ Պաղեստինը ելք ունենա դեպի ծով, քանզի դա չի համապատասխանում Միջերկրածովյան ընդհանուր պետության ստեղծման ծրագրին, որտեղ Իսրայելը պետք է լինի առանց Պաղեստինի: Կասկած չկա, որ Իսրայելը հաճույքով կհամաձայնի նույնիսկ Պաղեստինի անկախ պետության ստեղծմանը, եթե Գազայի հատվածի բոլոր պաղեստինցիները տեղափոխվեն երկրի խորքը: Ըստ վերջերս Կիպրոսի հունական մասի ընտրություններին մասնակցած եվրո-դեսանտի տվյալների՝ առաջիկա ամիսների ընթացքում, Սարկոզին նախաձեռնելու է Միջերկրածովյան ընդհանուր պետության ստեղծման գործընթացը, որին մաս կկազմի Եվրոմիությունից դուրս մնացած, այսպես կոչված, Կիպրոսի Հյուսիսային Թուրքական Հանրապետությունը: Նույն տրամաբանությամբ էր, որ Լիբանանի հյուսիսում ծովին մոտ գտնվող պաղեստինյան ճամբարը քարուքանդ արվեց, քանզի նա նույնպես, ըստ Ռալֆ Պիտերսի քարտեզի, պետք է միանա Միջերկրածովյան ընդհանուր պետությանը:

- **Ժողովրդավարությո՞ւն, թե՞ նեոստրկատիրություն.** Արդեն 20 տարի է առօրյա շրջանառությունից դուրս չեն գալիս «եվրոպական արժեքներ», «արևմտյան ժողովրդավարություն» բառակապակցությունները: Ոչ պակաս հաճախակի հեռուստաֆիլմերով ցույց են տալիս Հռոմեական կայսրությունը, իբրև քաղաքակրթության տարածման ժողովրդավարության օրրան: Շրջանցվում է այն, որ անտիկ շրջանի Հռոմեական կայսրության ժողովրդավարություն ասվածը ստրկատիրական պետության իշխանությունը ընտրություններով ձևավորելու միջոց էր, որը ոչ մի կապ չունի բնականոն ժողովրդավարության հետ: Որպես արևմտյան ժողովրդավարության օրինակներ նշվում են ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի սահմանադրությունները, բայց արժե հիշել, որ թե՛ ԱՄՆ-ն, թե՛ Մեծ Բրիտանիան պաշտոնապես ստրկատիրությունից հրաժարվեցին 1860-65թթ. միայն: Անգամ դպրոցականի քաղաքագիտական մակարդակով կարելի է բացահայտել, որ ժողովրդավարության արևմտյան մոդելները, ըստ էության, ստրկատիրական ժողովրդավարական պետությունների մոդելներ են՝ համապատասխան հեռահար նպատակներով, ձգտումներով, ակնկալիքներով:

- **Եվրոինտեգրո՞ւմ, թե՞ Եվրոպա նոր տերության գերիշխանություն.** 2001 թվականից ՀՀ-ն պաշտոնապես ստանձնել է պարտավորություններ, այսպես կոչված, եվրոինտեգրման քաղաքական կուրս անվան տակ: 2005-ի անհաջող փորձից հետո արդեն վիճահարույց չէր, որ Եվրոպական Երկրների Միություն կոչված տարածաշրջանային միջազգային կառույցը բացահայտել է իր բուն խնդիրը և ըստ վերջին հավաստիացումների՝ առաջիկա մեկ-երկու ամսում, անգամ եվրոպական երկրների ժողովուրդների կամքին հակառակ, վերածվելու է վերազգային կառավարման գերտերության: Հարց է ծագում, հիմա ինչպես վարվել. շարունակե՞լ ինքնախաբեությունը և շարունակե՞լ ենթարկվել գերտերության գերիշխանությանը, թե՞ վերադառնալ միջազգային հանրություն, որպես ինքնուրույն արտաքին ու ներքին քաղաքականություն վարող ազատ, անկախ և ինքնիշխան երկիր…

- **Ինչո՞ւ միջազգային դատարանը դեռևս չի դատապարտել Հայոց ցեղասպանությունը.** Այն որ 1921-ից մինչև 1988-ի գարունը Սովետական Հայաստանի ժողովուրդը իրավունք չուներ պետական մակարդակով միջազգային դատարանում բարձրացնելու ցեղասպանությունը դատապարտելու հարցը՝ բացատրելի է հայտնի պատճառներով, ցավոք, սակայն անուշադրության է մատնվել այն, որ 1986-ից սկսած արևմտյան քաղաքականությունը նույնպես ամեն ինչ արեց, որ պաշտոնական Հայաստանը ցեղասպանության հարցով ՄԱԿ և Հաագայի դատարան չդիմի: Մոռացության է մատնված և այն, որ դեռ 1986-ին ԽՄԿԿ Կենտկոմի պատվերով Հայաստանի գրողների միության նախագահը գիրք գրեց ցեղասպանությունը ներելու, անցյալով չապրելու մասին, որը, ի դեպ, զուգահեռ թարգմանվեց հենց սերբերեն: Ինչո՞ւ գրվեց, հայտնի եղավ 1988-ի փետրվարից հետո, իսկ թե ինչո՞ւ սերբերեն թարգմանվեց, հայտնի դարձավ Հարավսլավիայի կազմալուծման և Կոսովոյի ողբերգական դեպքերից հետո: Ակնկալվում էր, որ սերբերին էլ պետք է բացատրել, որ եթե հայերը այդօրինակ ցեղասպանություն են ապրել և բարեկամանում են թուրքերի հետ, ապա սերբերը պետք է, որ հանդուրժեն իրենց տարածքների զիջումը թուրքերին: Այնուհանդերձ, Մոսկվան ու Արևմուտքը, ինչպես նաև հայաստանյան շարժման ղեկավարությունը չկարողացան 1988-ի նոյեմբերի 22-ին կասեցնել Սովետական Հայաստանի Գերագույն Խորհրդի՝ ցեղասպանությունը դատապարտող օրենքի ընդունման համաժողովրդական պահանջը: Այլ խնդիր է, որ նրանց հաջողվեց հարցի ՄԱԿ ու Հաագայի դատարան տանելը կասեցնել մինչև ԽՍՀՄ փլուզումը: Դրանից հետո կանխարգելողի դերը ստանձնեց Արևմուտքը:

Քանի դեռ ՀՀ իշխանությունները, լսելով այլոց, մեղմ ասած, հորդորները, չեն դիմել միջազգային դատարան, դրանով իսկ ճանապարհ են հարթում առաջիկայում ոչ միայն Հայաստանում, այլև աշխարհի մի շարք այլ երկրներում ցեղասպանությունը նույն վայրագությամբ կրկնելու փորձերին: Ստացվում է, որ դրանով նպաստում են մարդատյաց, ռազմատենչ ուժերին, որոնց համար խիստ կարևոր է լինելու երրորդ աշխարհամարտի անվան տակ անպատիժ իրականացնելու մարդկության դեմ ուղղված մի շարք հանցագործություններ: Պատահական չէ, որ եվրո-կոմիսարները թելադրական հորդորներով ՀՀ իշխանություններից պահանջում են բացել Թուրքիայի հետ սահմանը ու դիվանագիտական հարաբերություններ հաստատել, առանց հաշվի առնելու, թե ի՞նչ սահման է բացվում և ի՞նչ երկրների միջև: Ի դեպ, ՀՀ քաղաքական վերնախավի ներկայացուցիչները բարձրաձայնում են այդ հրահանգը կատարելու իրենց պատրաստակամությունը, առանց դույզն իսկ խորհելու, որ իրենց դրդում են մարդկության դեմ հանցագործության մեղսակից դառնալ: Քանի դեռ հանցագործը պատժված չէ, նրա հետ «բարիդրացիական հարաբերությունների» ստեղծումը, ըստ էության, ցեղասպանության բացահայտ քարոզչություն է՝ համաձայն ՄԱԿ-ի կանոնադրության և միջազգային իրավական նորմերի: (Տե՛ս, էջ 7 և էջ 32, «Անկարայում դատավարություն է սկսվել թուրք գրողի նկատմամբ» և «Հրեա ցեղասպանագետների վրդովմունքը...»):

- **Հայ-թուրքական հարաբերություններին քաղաքական լուծումներ տալու խնդրի շուրջ.** Վերջին տարիներին բարձր ակտիվությամբ, Աստծո ամեն օր, տարին 365 օր, Հայաստան մուտք ու ելք անող եվրո-կոմիսարներն ու էմիսարները՝ մեր իշխանավորների շնչին նստած, բոլոր միջազգային իրավական լուծում պահանջող խնդիրներին առաջարկում ու պարտադրում են հենց միայն քաղաքական լուծումներ: ՀՀ ԱԺ-ում հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանը նվիրված քննարկումներին մասնակից Պիտեր Սեմնեբին, անշուշտ, շատ լավ գիտի, որ հարցն ամբողջությամբ գտնվում է միջազգային իրավական դաշտում, առավազն՝ «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» (1948), «Պատերազմի հանցագործությունների և մարդկության դեմ հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին» (1968), «Միջոցներ, որոնք պետք է ընդունվեն նոր պատերազմի քարոզչության և հրահրողների դեմ» (1947) կոնվենցիաներով: Այսինքն, միջազգային իրավական տեսանկյունից հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը ենթադրում է.

1. Համաձայն ՄԱԿ-ի «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և դատապարտելու մասին» կոնվեն-

ցիայի՝ 1915-23թթ. Հայոց ցեղասպանությունը իրականացրած երկրի ու նրա իրավահաջորդի՝ Թուրքիայի, դատապարտում ՄԱԿ-ի Հաագայի դատարանում: Այստեղ տեղին է հիշեցնել Գարեգին Նժդեհի խոսքը. «Թուրքին մեկ հանցանք ներել՝ նշանակում է ևս երկուսը արտոնել»:

2. Համաձայն նույն կոնվենցիայի և ՄԱԿ-ի կանոնադրության՝ ցեղասպանության հետևանքների վերացում, որ նշանակում է. բռնազավթված տարածքների ազատում, ՄԱԿ-ի խաղաղապահների միջոցով հայության անվտանգ հայրենադարձի ապահովում, վնասների հատուցում:

3. Երբ Հայաստանի Հանրապետությունը լրիվ կարգավորված ռիթմով ապրող երկիր կդառնա, հնարավոր կլինի դիվանագիտական հարաբերությունների հաստատում ՀՀ-ի և ԹՀ-ի միջև:

Ասել, թե Պիտեր Սեմնեբին այս ամենը չգիտի, մեղմ ասած, սուտ կլինի, սակայն նա իր ելույթներում հորդորում էր ՀՀ իշխանություններին հարաբերություններ հաստատել, սահմանները բացել, ներկայացնելով դա որպես քաղաքական լուծում և քաղաքական կամք պահանջող հարց: Դրան ի պատասխան ՀՀ ԱԺ նախագահն ասում է, որ ՀՀ իշխանությունները ի զորու են քաղաքական կամք դրսևորել, ինչպես հարաբերություններ հաստատել Թուրքիայի հետ, այնպես էլ սահմանները բացել: Մտահոգիչն այստեղ այն է, որ երկու հռետորներն էլ շատ լավ գիտեն, թե ո՞վ է ժողովրդավարական երկրում որոշում քաղաքականությունը, ո՞վ է դրսևորում քաղաքական կամք, և ո՞վ է դա իրագործում: Երկուսն էլ լավ գիտեն, որ ժողովրդավարական ՀՀ-ում քաղաքականությունը, հանձին ժողովրդի համահավաք կամքի դրսևորման, որոշում է ժողովուրդը: Լավ գիտեն և այն, որ համաժողովրդական որոշումով դեռևս 1990թ. օգոստոսի 23-ին ընդունված և 1991թ. սեպտեմբերի 21-ի համաժողովրդական հանրաքվեով վավերացված Հայաստանի Անկախության Հռչակագրով տրված են հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման թե՛ ձևը, թե՛ բովանդակությունը՝ ըստ միջազգային իրավական նորմերի:

- **Ապօրինի զենքի առգրավո՞ւմ, թե՞ աշխարհազորի զինաթափում.** 1988-ին՝ Սումգայիթից հետո, սովետական իշխանությունը մեր տարածաշրջանում ապրող ամբողջ հայությանը զինաթափեց: Դրան հաջորդեցին ադրբեջանական վայրենաբարո հորդաների ոճրածին հարձակումները անպաշտպան մնացած Արցախի և Հայաստանի Հանրապետության բնակավայրերի վրա: Արժե արդյո՞ք հիմա հիշեցնել, թե ի՛նչ իրական արժեք (և ո՛չ թե գին) ուներ մեկ որսորդական հրացանը կամ մեկ ժանգոտած ատրճանակը այդ օրերին... 1908-ին երիտթուրքական հեղափոխական ու սահմանադրական կոչերով զինաթափվեց արևմտահայությունը, 1915-ին տեղի ունեցավ Հայոց մեծ եղեռնը: 1918-ին Բաթումում կնքված Հայ-թուրքական բարեկամության պայմանագրով զինաթափվեցին մայիսյան հաղթանակներ ձեռք բերած արևմտահայ կամավորականներն ու ազատագրական պայքարի ելած արևելահայությունը, 1920-ին թուրքական բանակը նոր ագրեսիա ձեռնարկեց Հայաստանի Հանրապետության նկատմամբ: Բաթումի պայմանագրի 6-րդ կետում, մասնավորապես, ասված էր. **«Հայկական Հանրապետության կառավարությունը պարտավորվում է գործուն կերպով հակազդել, որպեսզի ոչ մի բանդա չկազմավորվի և չգինվի իր տերիտորիայի սահմաններում, ինչպես և զինաթափել ու ցրել բոլոր բանդաները, որոնք կփորձեն թաքնվել այնտեղ»:** Այսօր հաշտության կամ խաղաղության պայմանագիր դեռևս կնքված չէ Ադրբեջանի հետ, ավելին՝ վերջինս ամեն օր սպառնում է նոր պատերազմով ու ագրեսիայով Արցախի և ՀՀ-ի նկատմամբ: Հարց է ծագում՝ ո՞ւմ խորհրդով կամ քաղաքական կամքով է, որ ՀՀ նախագահական ընտրություններում բացահայտ, թե շղարշված, իրականացվեց Հայոց աշխարհազորի զինաթափման քարոզչություն: Եվ այդ ինչպե՞ս է իրականացվելու Հայոց համապարփակ ինքնապաշտպանությունը, ևո՛ր հնարավոր ներխուժման պարագայում…

- **Հայաստան և հայություն.** Փաստացի իրողություն է, որ ՀՀ-ի տնտեսությունը, ի տարբերություն 1988-ի, հասցված է մի այնպիսի վիճակի, որ նույնիսկ մի քանի ամիս, գուցե մի քանի շաբաթ չի կարող դիմադրել համաշխարհային քաոսի այս սպառնալիքին: Սա պատահական չէ արված. դա թելադրված է դրսի պատվերներով ու հորդորներով: Սակայն վիճակն ամենևին էլ անհուսալի չէ, և ցանկության դեպքում, ազգային պետական քաղաքականություն իրականացնելու պարագայում հնարավոր է մեծ արագությամբ վերակազմավորել տնտեսությունը և դիմանալ սոցիալական, տնտեսական ճնշումներին: Ինչ վերաբերում է մեր տարածաշրջանում ռազմական գործողությունների ու հակամարտությունների սցենարներին, ապա այդ դեպքում շատ ավելի հեշտ է կազմակերպվել, և վստահ ենք, որ նախապատրաստած բոլոր դժվարություններն ի չիք կդառնան, քանզի հայությունը նահանջելու տեղ չունի և ինքնակազմակերպման փորձ էլ կուտակել է դարեր շարունակ: Եկել է պահը, որ դեռ անցյալ դարասկզբից Արևմուտքի որոշ շրջանակների կողմից ոչնչացման դատապարտված հնագույն ազգերը, հին քաղաքակրթություններն իրենց խոսքը ասեն, իրենց անելիքը անեն: (Տե՛ս, էջ 6, «Արդի աշխարհում ոչնչացնում են նրանց, ովքեր ծնկի են գալիս»):

1988-ին հայությունն ու Հայաստանը ահազանգը հնչեցրին, որի ղողանջներն առ այսօր չեն մարել: Սա այն իրողությունն է, երբ համայն մարդկության առաջ դրված է լինել-չլինելու հարցը, որով ընթացավ ամբողջ արյունալի 20-րդ դարը, ուստի, առկա է մի բնականոն իրողություն. մարդկությունը, ի վերջո, պետք է ձերբազատվի ինքնաոչնչացման տանող այս այլանդակությունից, իսկ հայությունը՝ վերականգնի իր ամբողջ կորցրածը:

Հայաստանը, ելնելով իր հազարամյակների քաղաքական ավանդույթից, չպետք է մասնակցի ընթացք տրված համաշխարհային այս նոր քաոսին: Պետք է կոչ անի մարդկության առաջադեմ երկրներին՝ անցնել համապարփակ, գործուն ինքնապաշտպանության, և որևէ կերպ չմասնակցել երրորդ աշխարհամարտին. թո՛ղ Արևմուտքն ինքն իր մեջ պատերազմի, եթե իր ժողովուրդները դա թույլ կտան:

ԱՐԴԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ ՈՉՆՉԱՑՆՈՒՄ ԵՆ ՆՐԱՆՑ, ՈՎՔԵՐ ԾՆԿԻ ԵՆ ԳԱԼԻՍ

(Կրճատումը մերն է- խմբ.)

...Եվ այսպես, սերբերը, իրենց երբեմնի ըմբոստությամբ ու ռազմատենչությամբ հայտնի ցեղը, իրար հաջորդող զիջումների ու վերջնագրերի կատարումների միջոցով փորձում էին փափկացնել Արեւմուտքի սիրտը եւ ընդունվել «եվրոպական քաղաքակիրթ» ընտանիքի մեջ: Ո՜ւր էր: Իսկ այսօր դեռ հարց է՝ կընդունե՞ն նրանց՝ նույնիսկ առանց Կոսովոյի: Հենց այստեղ էլ հառնում են մյուս հարցերը՝ իսկ ի՞նչ կշահեին սերբերը, եթե դիմադրեին: Ո՞ւր կորավ նրանց երբեմնի մարտական ոգին: Գուցե ՆԱՏՕ-ն զիջե՞ր, եթե կորուստներ ունենար, որոնց նկատմամբ այնքան զգայուն են Արեւմուտքում: Ինչո՞ւ բացառել: Արժե՞ր վերածվել կատարյալ փալասի: Իսկ չէ՞ որ ԽՍՀՄ-ի փլուզումից հետո էլ ամերիկացիները չհամարձակվեցին մտնել Կուբա, որն անպայման կպայքարեր ագրեսորի դեմ մինչեւ վերջին քաղաքացին: Ուրեմն, կա տակավին այն ոգու ուժը, որն ազգին հերոս է դարձնում: Այսօր էլ ոչ ոք չգիտե, թե ինչպես է վարվելու Սերբիան առաջիկայում, էլ ինչ է զիջելու եւ ինչ կստանա դրա դիմաց:

Սա Կոսովոյի դառը դասերից մեկն է: Ասում են՝ Հայաստանում էլ են հայտնվել հավերժ «զիջումների» ջատագովներ: Իսկ գուցե իրավացի՞ է մեր հայրենակից, նշանավոր քաղաքականագետ Սերգեյ Կուրղինյանը իր հետեւության մեջ. «Պետք է հասկանալ, որ արդի աշխարհում «ավելի լավ է մեռնել կանգնած, քան ապրել ծնկի եկած» սկզբունքն արդեն չի գործում: Մեռնում են հենց նրանք, ովքեր ծնկի են գալիս: Հենց նրանց են ոչնչացնում մինչեւ վերջ»: **«Ազգ»,** 14. 03. 2008թ.

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ, Մոսկվա

ՉԵԶՈՔՈՒԹՅՈՒՆ

Միջազգային իրավունքում պատերազմող կողմերին ռազմական օգնություն ցույց չտալու, ռազմական խմբավորումներին, ուրիշ պետությունների միջև մղվող պատերազմներին չմասնակցելու արտաքին - քաղաքական կուրս:

Չեզոքության պատմական ձևերն են՝ լրիվ, ոչ լրիվ, բացարձակ, բարյացակամ, զինված, զինաթափված, ակտիվ, պասիվ, կամավոր, պայմանագրային, ժամանակավոր և մշտական:

Չեզոքությունը մշտական է, եթե պետությունը պարտավորվում է խաղաղասիրական քաղաքականություն վարել ինչպես պատերազմի, այնպես էլ խաղաղ ժամանակ: Առաջին անգամ մշտական չեզոք պետություն է հռչակվել Շվեյցարիան՝ Վիեննայի Կոնգրեսում, 1815թ.: Ներկայումս մշտական չեզոք պետություններ են Շվեյցարիան և Ավստրիան, չեզոքություն է պահպանում Ֆինլանդիան: Նախկինում չեզոք պետություններ Բելգիան, Նիդերլանդներն ու Լյուքսեմբուրգը այժմ հարում են ագրեսիվ քաղաքական խմբավորումների:

Մշտական չեզոքություն հաստատվում է միջազգային պայմանագրի ուժով, միակողմանիորեն փոխվել կամ վերացվել չի կարող: Մշտական չեզոքություն պահպանող երկիրը ՄԱԿ-ի կանոնադրության համաձայն (Հոդված 51) ունի անհատական և կոլեկտիվ պաշտպանության իրավունք:

Ստրկատիրական և ֆեոդալական հասարակարգերում, ուր զավթողական պատերազմները արտաքին քաղաքականության հիմնական կուրսն էին, չեզոքության պահպանումը փաստորեն բացառվում էր:

Աշխարհագրական դիրքի պատճառով Հայաստանը գտնվում էր պատերազմների թատերաբեմում, և անկախ չեզոքություն պահպանելու նրա ձգտումներից, ագրեսիայի կամ պալատական հեղաշրջումների ու դավադրությունների հետևանքով ակամա պատերազմական գործողությունների մասնակից էր դառնում: Լավագույն դեպքում չեզոքություն պահպանած Հայաստանը պարտավորվում էր իր երկրի տերիտորիայով թույլ տալ պատերազմող կողմի զորքերի անարգել անցումը: Քսենոփոնի վկայությամբ, Տիրիբազը համաձայնել էր թույլ տալ հույների նահանջը Հայաստանի տերիտորիայով այն պայմանով, որ նրանք պարտավորվեին վնաս չհասցնել բնակչությանը: Սակայն Հայաստանը անկախ խոչընդոտներից չեզոքությունը դիտել է որպես արտաքին քաղաքականության հետևողական կուրս, օգտվել դրա բոլոր ձևերից, ընդհուպ մինչև մշտական չեզոքություն: Այսպես, Տիգրան Բ նպատակ ունենալով ստեղծել դեպի Միջերկրական ծովն անցնելու լայն գոտի և ամրապնդել դիրքերն Ասորիքում, Կիլիկիայում և Պաղեստինում, որպեսզի չբախվի Հռոմի հետ, չեզոքություն է պահպանել Պոնտոսի և Հռոմի միջև վերսկսվող պատերազմի ժամանակ, իսկ հետո առանց Հռոմի հետ բախվելու, իր տերությանն է միացրել վերջին Սելևկյանների տերիտորիաները:

Ժամանակավոր չեզոքություն պահպանելու հարցը հայերը լուծել են սեփական նախաձեռնությամբ, երկրի շահերից ելնելով: Որպես իրավահավասարության ինքնուրույն սուբյեկտ նրանք խաղաղ ժամանակ չեզոքություն պահպանելու որևէ պարտավորություն չեն ստանձնել: Հռանդեայի հաշտության պայմանագրով (64թ.) հայերը մնում էին միջազգային իրավունքի անկախ սուբյեկտ, չեզոքություն պահպանելով միայն Հռոմի և պարթևների հետ: Իրենց հերթին պայմանագրի մասնակից պետությունները պարտավորվում էին հարգել Հայաստանի չեզոքությունը: Հետագայում չեզոքություն ձեռք է բերվել Արաբական Խալիֆայության և Բյուզանդիայի միջև բախումների ընթացքում անկախություն ստանալուց հետո (IX դ.): Կիլիկիայի հայկական պետությունը առավելություն է տվել ժամանակավոր և ակտիվ չեզոքությանը: Մասնավորապես, նրա տերիտորիայով Գերմանիայի Կայսեր Ֆրիդրիխ Բարբարոսայի զորքերի անցումը թույլատրելու հետ մեկտեղ հայերը նորմալ հարաբերություններ են պահպանել նրա հակառակորդներ, մասնավորապես Սալա ադ Դինի հետ:

ՅՈՒՐԻ ԲԱՐՍԵՂՈՎ
(ՀՍ Հանրագիտարան, Երևան, 1982, հատոր 8, էջ 687)

ԱՆԿԱՐԱՅՈՒՄ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ Է ՍԿՍՎԵԼ ԹՈՒՐՔ ԳՐՈՂԻ ՆԿԱՏՄԱՄԲ, ՈՎ ԿՈՉ Է ԱՆՈՒՄ ՃԱՆԱՉԵԼ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Այսօր Անկարայում անցնելու է առաջին դատական նիստը, որը հարուցվել է թուրք գրող **Թեմել Դեմիրելի** նկատմամբ: Ինչպես PanARMENIAN.Net-ին հայտնել է անկախ ֆրանսիացի լրագրող Ժան Էկիյանը, 2007 թվականի հունվարի 20-ին, թուրք գրող Թեմել Դեմիրելը Անկարայում հանդես է եկել հայտարարությամբ, որում նշել է, որ Հրանտ Դինքը սպանվել է ոչ միայն այն պատճառով, որ հայ էր, այլ նաեւ այն պատճառով, որ բարձրացնում էր Հայոց ցեղասպանության խնդիրը: Հայտարարության մեջ, մասնավորապես, ասվում է. «Մենք ապրում ենք մի երկրում, որտեղ սպանությունն ու ճշմարտության քողարկումը սերտորեն փոխկապակցված են: Հրանտ Դինքին սպանել են ոչ միայն այն պատճառով, որ նա հայ էր, այլեւ այն պատճառով, որ նա հայտարարեց, որ Օսմանյան Թուրքիայում իրականացվել է **Հայոց ցեղասպանություն**:

Եթե թուրք մտավորականությունը չկանխի ՔՕ 301-րդ հոդվածի կիրառումը, ապա նրանք եւս մեղավոր կլինեն Դինքի մահվան մեջ: Մեր պատմության մեջ եղել է ցեղասպանություն՝ 1915 թվականի Հայոց ցեղասպանությունը: Իր կյանքի գնով Հրանտ Դինքը ճշմարտությունն է ասել եւ նրանք, ովքեր պնդում են 301-րդ հոդվածի կիրառումը, հանդիսանում են այդ հանցագործության մասնակիցները: Նրանք, ովքեր ցանկանում են նորմալ հարաբերություններ ժողովուրդների միջեւ, պետք է ընդունեն պատմական փաստերը: Մենք պետք է կանխենք մարդկության դեմ հանցագործությունները եւ այն, ինչ տեղի է ունեցել հայերի հետ, կարող է լինել քուրդերի հետ: Ես կոչ եմ անում բոլորին կանխել հանցագործությունները եւ հայտարարում եմ. «Այո, այս երկրում եղել է Հայոց ցեղասպանություն: Մենք բոլորս հոյակապ գիտենք, ովքեր են իրականացրել այդ սպանդը: Մեզ համար դա գաղտնիք չէ եւ դա գաղտնիք չէ նաեւ նրանց համար, ովքեր պաշտպանում են 301-րդ հոդվածը: Եւ այս ամենից հետո մենք չենք կարող լռել»: Այդ հայտարարությունը ստորագրել են ավելի քան 45 մասնավոր անձ եւ թուրքական կազմակերպություն: **/PanARMENIAN.Net/** 06.03.2008թ.

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԱԴՐԲԵՋԱՆԻՆ

(Սկիզբը՝ թիվ 2/13-ում)

Պաշտոնական Անկարան ձգտում էր յուրաքանչյուր հարմար պահի հրաժարվել Ադրբեջանում իր ռազմական ներկայության փաստերից:

Թուրքիայի պաշտպանության նախարար Նևզատ Այազն իր հարցազրույցներից մեկի ժամանակ նշեց, թե Թուրքիայի բանակից զորացրված սպաների Ադրբեջանում գտնվելը ոչ մի կապ չունի Թուրքիայի կառավարության հետ և որ դա անձնական հարց է, քանզի «Թուրքիայի կառավարությունը հնարավորություն չունի խրախուսելու կամ արգելելու նրանց գործունեությունը»: Սակայն հայտնի է, որ թուրքական կառավարությունն անմիջականորեն մասնակից էր նման նախաձեռնություններին, իսկ թուրքական «Իքիբինե դողրու» հանդեսի 1992թ. դեկտեմբերի համարում նշվում էր, որ թուրքական սպաների հավաքագրումը տեղի էր ունենում «գաղտնի ֆոնդերի» հաշվից՝ յուրաքանչյուր սպայի ամսական տրամադրելով 7500 ԱՄՆ դոլար աշխատավարձ:

Թուրքիայի ոչ անմիջական ռազմական ներկայությունը 1990-ականներին զգալի էր ոչ միայն Արցախում, այլև Հարավային Կովկասի և Բալկանյան տարածաշրջանի հակամարտության գոտիներում: Կան բազմաթիվ փաստեր Բոսնիայի մուսուլմաններին և չեչենական ռազմական խմբավորումներին Թուրքիայի կողմից զենք - զինամթերք և դրամ մատակարարելու մասին: Վերոհիշյալ փաստը հաստատվում է նաև թուրքական ընդդիմության կողմից կառավարվող շրջաններին ներկայացվող մեղադրանքներով: Այսպես՝ 1996թ. հունիսին թուրքական Բանվորական ձախ կուսակցության գլխավոր քարտուղար Դողու Փերինչեկը մեղադրեց Թուրքիայի վարչապետ Թանսու Չիլլերին՝ «գաղտնի ֆոնդերի» հաշվից զենք գնելու, չեչենական և այլ «գաղտնի խմբերին» մատակարարելու համար:

Չնայած թուրքական ընդդիմության պահանջներին՝ վարչապետ Թ. Չիլլերը կտրականապես հրաժարվեց կառավարության ծախսերի մասին տվյալներ հրապարակել, քանի որ, նրա խոսքերով, դա կարող էր հասցնել Ռուսաստանի հետ հարաբերությունների կտրուկ վատացմանը:

Թուրքիայի ռազմական աջակցության անցումային հենակետի դերը վերապահվեց Նախիջևանին, որտեղից տեղի էր ունենում օգնության հետագա բաշխումը բուն ադրբեջանական տարածքներում և ռազմաճակատի գոտում: Նախիջևանը, փաստորեն, հայ - ադրբեջանական հակամարտության ընթացքում վերածվել էր թուրքական ապագա հարձակման համար շատ հարմար ցատկահարթակի՝ ձեռք բերելով առանձնահատուկ կարգավիճակ՝ թուրքական ռազմական օգնության տրամադրման և կիրառման տեսանկյունից: Իզուր չէր, որ 1992թ. մարտին Նախիջևանի Ինքնավար Հանրապետության ղեկավար Հ. Ալիևը Կարս կատարած իր այցի ժամանակ նշեց, թե «Նախիջևանը Թուրքիայի համար Կենտրոնական Ասիա տանող բաց դուռ է, որտեղ 350 հազար բնակիչները բոլոր թուրքեր են»:

Իր հերթին Թուրքիայի վարչապետ Ս. Դեմիրելը, Արաքս գետի վրա կամրջի բացման ժամանակ ելույթ ունենալով, նշեց. «Սիրելի ադրբեջանցի թուրքեր, սիրելի նախիջևանցի թուրքեր: Մենք գտնվում ենք այստեղ, որպեսզի տեղեկացնենք ձեզ, որ դուք մենակ չեք: Հույսի կամուրջը, որն այսօր մենք բացում ենք Արաքս գետի վրա - դա էգեյան ծովից մինչև Չինաստան ճանապարհի բացման առաջին քայլն է»:

Թուրքական ընդդիմության ներկայացուցիչ Բյուլենտ Էջևիթը, իր հերթին հանդես գալով Ս. Դեմիրելի կառավարության քննադատությամբ, նշեց, որ «կառավարությունը չօգտվեց Նախիջևանի նկատմամբ Թուրքիայի երաշխավորի կարգավիճակից և մեր բարեկամ Ադրբեջանին նույնիսկ ռազմատեխնիկական օգնություն չցուցաբերեց..., ինչը Հայաստանի առջև կանաչ լույս վառեց և խիզախություն ավելացրեց»: Ռազմական օգնություն, այսպես թե այնպես, Անկարան տրամադրում էր Նախիջևանին, որի բանակային ստորաբաժանումների սպաները և ենթասպաները պատրաստվում էին Թուրքիայում, իսկ վիրավոր զինվորները բուժվում էին Էրզրումի և Կարսի հոսպիտալներում: Սենսացիոն կարելի է համարել այն փաստը, որ 1992թ. սեպտեմբերին թուրքական բանակի 9-րդ կորպուսի բանակային հրամանատարությունը, քննարկելով ռազմական օգնություն ցուցաբերելու մասին Նախիջևանի Հանրապետության դիմումը, որոշեց բավարարել այն՝ տրամադրելով զենք և զինամթերք:

1993թ. ապրիլի առաջին կեսին, Քելբաջարի օպերացիայի ընթացքում, ըստ ՀՀ Պաշտպանության նախարարության հաղորդագրության, ամեն օր Նախիջևանի կողմից ադրբեջանա - թուրքական սահմանը հատում էին թուրք կամավորներով լեցուն մոտ 30 բեռնատար, որոնց հետագայում Հայաստանի օդային տարածքով տեղափոխում էին Գյանջա: Ընդհանուր առմամբ օրական իրականացվում էր 15 թռիչք: Հայկական կողմից զգուշացվեց, որ այդ թռիչքները չդադարեցնելու դեպքում «Հայաստանը ստիպված կլինի կիրառել համարժեք միջոցներ՝ իր սահմանները պաշտպանելու ուղղությամբ»:

Քելբաջարի ազատագրումից հետո Թուրքիայի նախագահ Թ. Օզալը կրկին վճռական տրամադրվեց Հայաստանի դեմ թուրքական զինուժ օգտագործելու հարցում: Չցանկանալով այս անգամ շեշտը դնել ռազմաշունչ հայտարարությունների վրա և այդպիսով քողարկել Անկարայի իրական մտադրությունները՝ 1993թ. ապրիլին Բաքու կատարած այցից հետո և իր հանկարծահաս մահից բառացիորեն մի քանի ժամ առաջ նա հայտարարեց. «Ադրբեջանցիները մեր բարեկամներն են, ես նույնիսկ կասեի՝ ազգականները...: Մենք հենց սկզբից հայտարարեցինք, որ հայերի կողմից ադրբեջանական տարածքների օկուպացումն անընդունելի է...: Մենք միջազգային ասպարեզում պաշտպանում ենք մեր ադրբեջանցի եղբայրներին, բայց ոչ ոք չպետք է ակնկալի ավելին»: Իսկ ՄԱԿ-ում Թուրքիայի ներկայացուցիչ Մուստաֆա Ակշին, իր հերթին, հրապարակավ հաստատեց, Անկարայի պատրաստակամությունը Ադրբեջանին պաշտպանելու հարցում. «Թուրքիան թույլ չի տա գրոհ Ադրբեջանի վրա, և անհրաժեշտության դեպքում մենք կգործենք»:

1993թ. ապրիլին Բաքվի և Անկարայի միջև կնքվեց երկկողմ մի համաձայնագիր, որով Թուրքիան հանձն է առնում Ադրբեջանին թեթև զինատեսակի մատակարարումը և ռազմական մասնագետների պատրաստումը, 1993թ. կեսերին, ռուսական «Վեստի» լրատվական ծրագրի հաղորդագրության համաձայն, «Ադրբեջանին զինամթերք մատակարարելուց զատ, մոտ 800 թուրք զինվոր էր կռվում ադրբեջանցիների կողմից: Այս համաձայնագրով և գործողություններով թուրքական կողմը, փաստորեն, կոպտորեն խախտեց 1992թ. փետրվարի 28-ին Պրագայում ընդունված ԵԱՀԿ որոշումը՝ հակամարտող կողմերին զենքի և զինամթերքի

մատակարարումն արգելելու վերաբերյալ:

Սակայն նույն ընթացքում Թուրքիայի ռազմաօդային ուժերի էսքիշեհիրի մարտական ինքնաթիռների առաջին խմբավորման հրամանատարության տակ գտնվող 59 «Ֆանտոմ» ինքնաթիռներից չորսն անցան 24-ժամյա հերթապահության՝ հրամանի դեպքում պատրաստ լինելով 15 րոպեի ընթացքում մարտական թռիչքներ իրականացնել: Ավելի ուշ, Բ. էջևիթը հանդես եկավ Ադրբեջանի և Նախիջևանի միջև միջանցքի բացման համար օդային հարվածներ հասցնելու առաջարկով, և դրա համար, նրա կարծիքով, բավական էր ստանալ Ադրբեջանի նախագահ Ա. էլչիբեյի համաձայնությունը:

Ա. էլչիբեյի նախկին օգնականի Ուլվի Խակիմովի խոսքերով, 1992-93թթ. Թուրքիան Ադրբեջանին Ղարաբաղյան հարցում ամեն տեսակի օգնություն էր ցուցաբերում: Այդ օգնությունը, առաջին հերթին, ցուցաբերվել էր ազգային բանակի կայացման ընթացքում, որի կարիքը Ադրբեջանը «շատ էր զգում»...:

Միևնույն ժամանակ Ս. Դեմիրելը և Թուրքիայի զինվորականությունը հատուկ կարևորություն էին տալիս ադրբեջանական բանակի կայացմանը սատարելուն և այդ նպատակի իրագործման համար գործուն մեխանիզմի մշակմանը: Այս ընթացքում Թուրքիայի և Ադրբեջանի միջև քննարկվեց ռազմական համագործակցության և համատեղ պաշտպանության երկկողմ պայմանագրի ստորագրման հնարավորությունը: Թուրքիայում, մինչև 1995թ. ադրբեջանական բանակի արդիականացման ծրագիր մշակվեց, նախատեսվեց մոտ 3.000 թուրք զինվորական մասնագետների գործուղումը Ադրբեջան՝ թուրքական ռազմական ուժերի պահեստային սպաների անձնակազմից: Ադրբեջանի ռազմական ծախսերի համար Անկարան նախատեսում էր տրամադրել 300 մլն դոլար:

Ա. էլչիբեյի իշխանազրկության և Բաքվի իշխանության համար նոր պայքարի սանձազերծումից հետո թուրքական զինվորականության մեծ մասը, այդ թվում նաև Ադրբեջանի Անվտանգության Խորհրդի անդամ հանդիսացող թուրք գեներալ Յաշար Դեմիրբուլքարը և մյուս բարձրաստիճան թուրք զինվորականները, ովքեր մասնակցում էին ադրբեջանական բանակի զինավարժեցմանը, լքեցին Բաքուն: Թուրքական զինվորականության նման պահվածքը պայմանավորված էր ոչ միայն Ադրբեջանի ներքաղաքական անկայուն իրադրությամբ, այլև արդյունք էր նորընտիր նախագահ Հ. Ալիևի ժամանակավոր որոշ քայլերի, որոնք ուղղված էին ուժեղացնելու Բաքվի ռուսամետ կողմնորոշումը՝ ի հաշիվ նախկինում տիրապետող էլչիբեյական խիստ թուրքամետականի: Սակայն, շուտով, սրանց մեծ մասը վերադարձավ Ադրբեջան՝ ադրբեջանական բանակի 1993թ. աշնանային և ձմեռային հարձակողական գործողությունները ծրագրելու և կազմակերպելու համար:

Թուրքիայից ռազմական աջակցության ակնկալիքներն Ադրբեջանում ավելի էին ուժեղանում ռազմաճակատում ադրբեջանական բանակի անհաջողություններին համընթաց:

1993թ. հուլիսին Աղդամի շրջանի Շահբուլաղ գյուղի մոտ ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերին, որպես ռազմավար, բաժին հասան թուրքական արտադրության 81մմ տրամաչափի ականանետներ ու դեռևս չօգտագործված գնդացիրներ, որոնք, որպես թուրքական ռազմական օգնության իրեղեն ապացույցներ, ներկայացվեցին ԵԱՀԿ Մինսկի խմբի նախագահ Մ. Ռաֆայելիին, որն այդ ժամանակ գտնվում էր Ստեփանակերտում:

1993թ. սեպտեմբերին թուրքական ռազմական ուժերի նոր ակտիվություն ու կուտակումներ գրանցվեցին Հայաստանի հետ սահմանամերձ հատվածում: Սարիղամիշի 9-րդ դիվիզիայի 220-րդ մեխանիզացված և 9-րդ հրանոթային խմբավորումները, որոնցում հաշվվում էին մեծ թվով զրահատեխնիկա և հրանոթներ, տեղաբաշխվեցին Իգդիրից ոչ հեռու գտնվող Բայրաքթարա գյուղի մերձակայքում: Իսկ վարչապետ Թանսու Չիլլերը, հայկական ուժերի հաջող գործողություններից անհանգստացած, կրկին սպառնաց, հայտարարելով, թե «Թուրքիան ձեռքերը ծալած չի նստի»:

Նախագահ Ս. Դեմիրելի, վարչապետ Թ. Չիլլերի և մի քանի նախարարների մասնակցությամբ Անկարայում կայացած արտակարգ խորհրդակցություններից հետո թուրքական կողմը հանդես եկավ մի հաղորդագրությամբ, որտեղ ասվում էր, որ «եթե հայերը առանց նախապայմանների չթողնեն իրենց կողմից զավթած տարածքները, ապա հակամարտությունը կարող է ներազդել տարածաշրջանի մյուս երկրների և միջազգային հանրության վրա»: Սրանով թուրքական կողմը, փաստորեն, անուղղակիորեն ակնարկում էր՝ իր հակամարտության ոլորտ ներխուժելու հնարավորության մասին: Թուրքական զորքերը կրկին զգոն վիճակի բերվեցին 1993թ. սեպտեմբերի սկզբին: Թուրք դիվանագետներից մեկի հավաստմամբ, սա նախազգուշական միջոցառում էր, որով «Թուրքիան հենց սկզբից աշխարհին նախազգուշացնում էր կովկասյան հակամարտության տարածաշրջանային բնույթ կրելու վտանգավորության մասին... Եվ հնարավոր չէր բացառել թուրքական միջամտությունը...»:

(Շարունակելի)

ՀԱՅԿ ԴԵՄՈՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն

(Թ. Չիլլեր՝ 1993-96թթ. Թուրքիայի վարչապետ: Ս. Դեմիրել՝ 1991-93թթ. Թուրքիայի վարչապետ, 1993-2001թթ.՝ նախագահ: Թ. Օզալ՝ 1987-89թթ Թուրքիայի վարչապետ, 1989-93թթ.՝ նախագահ: - Ծանոթագրությունը մերն է- խմբ.)

(Տե՛ս, էջ 9, «Լեռնային Ղարաբաղում PKK-ի դեմ համատեղ գործողությունների մասին...»)

«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ PKK-Ի ԴԵՄ ԹՈՒՐՔ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՀԵԹԵԹՈՒԹՅՈՒՆ Է

«Լեռնային Ղարաբաղում Քրդական աշխատավորական կուսակցության (PKK) գրոհայինների դեմ թուրք-ադրբեջանական նախապատրաստվող գործողությունների մասին պարբերաբար հայտնվող տեղեկատվությունը տարբեր ՋԼՄ-ներում այնպիսի անհեթեթություն է, որ դրանք անգամ մեկնաբանել չարժե»,- PanARMENIAN.Net-ի թղթակցին հայտարարել է ՀՀ ԱԳՆ մամլո քարտուղարի պաշտոնակատար **Տիգրան Բալայանը**: Նրա խոսքերով, այդ լուրերը ժամանակ առ ժամանակ հայտնվում են ՋԼՄ-ներում: «Այդ լուրերը ոչ այլ ինչ են, քան հերթական սուտ բնակչության ապատեղեկատվության համար»,- ընդգծել է Բալայանը:

Հիշեցնենք, որ մակեդոնական Makfax գործակալությունը, հղում անելով ադրբեջանական «Ենի Մուսավաթ» թերթի վրա, հաղորդել է, որ Թուրքիան Ադրբեջանի հետ համատեղ մտադիր է ռազմական գործողություն կատարել **Լեռնային Ղարաբաղում** քուրդ գրոհայինների դեմ: Ինչպես հաղորդում է «Ենի Մուսավաթը», «նույնիսկ ԱՄՆ-ն է հավանություն տվել այդ քայլին»: Ասվում է, որ արդեն ձեւավորվել է թուրք - ադրբեջանական շտաբ: **/PanARMENIAN.Net/** 07.03.2008թ.

ԹՈՒՐՔ ՄԵՍԽԵԹՑԻՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ



Նրանց ճնշող մեծամասնությունը բնակվում է ետխորհրդային հանրապետություններում ու Թուրքիայում: Համեմատաբար մեծ է նրանց թիվը. Ղազախստանում՝ շուրջ 90 հազ., մնացածը տեղաբաշխված է Ադրբեջանում (70 հազ.), Ռուսաստանում (60-70 հազ.), Ղրղզստանում (շուրջ 30 հազ.), Ուզբեկստանում (10-15 հազ.), ինչպես նաև Ուկրաինայում (6-7 հազ.): Ետխորհրդային տարածքում ներկայիս նրանց թվաքանակը տատանվում է 250-300 հազ., ողջ աշխարհում՝ 400-700 հազ.: Իրենց առջև ծառացած առաջնային խնդիրը նախկին բնակության վայրեր՝ Վրաստանի Մեսխեթիա (Ադիգեն, Ասպինձա, մասամբ Ախալցխա) վերադարձի իրագործումն է: 1990-ականների սկզբներից նրանց վերադարձի կազմակերպման և բնակության ապահովման հարցում մեծ շահագրգռություն էր ցուցաբերում Ադրբեջանը, սակայն, քաղաքական մի շարք գործոններից ելնելով, դադարեցրել է այն: Այս հարցում լուրջ ջանքեր գործադրեց Թուրքիան, թեև ներգաղթածների հոսքը երկիր չկրեց զանգվածային բնույթ, այն պարզ պատճառով, որ իշխանությունները նրանց բնակեցրին համեմատաբար աղքատ արևելյան շրջաններում:

2004թ. փետրվարից Միգրացիայի միջազգային կազմակերպությունը, Ռուսաստանի և ԱՄՆ-ի կառավարությունների աջակցությամբ մշակեց ՌԴ Կրասնոդարի երկրամասից ԱՄՆ թուրք մեսխեթցիների վերաբնակեցման ծրագիր: Արդյունքում, ընդհուպ մինչև 2005թ. սեպտեմբեր, ավելի քան 20 հազ. անհատ ծրագրին մասնակցելու հայտ ներկայացրեց, որից 5 հազ. կարողացավ մեկնել ԱՄՆ: Ներկայիս այս ծրագիրը նույնպես դադարեցված է:

Քաղաքական ենթատեքստ. Այն, որ այս խնդրում զարգացումները շարունակում են մնալ հարավ-կովկասյան տարածաշրջանային ամենահրատապ հարցերից մեկը, կասկածից վեր է: Ասենք ավելին, ինչպես նկատում են փորձագետները, գնալով ընդլայնվում է դրա միջազգային ընդգրկումը: Հարցի իրավական, քաղաքական կարևորությունն է՛լ ավելի շեշտադրվեց 2007թ. հունիսի վերջերին Վրաստանի խորհրդարանի թուրք մեսխեթցիների հայրենադարձության մասին օրինագծի ընդունումից, ինչպես և Վրաստանի տարածքից (Ախալքալաք, Բաթում) ռուսական ռազմակայանների դուրս բերման շուրջ ձեռք բերված ռուս-վրացական պայմանավորվածությունից հետո:

Մեկ բան ակնհայտ է. թուրք մեսխեթցիների վերադարձի խնդիրն ունի քաղաքականացված բնույթ, ուստի, շահարկումների մասին խոսելիս, կարևոր է հստակ ձևակերպել, թե դրանց տակ ի՞նչ նպատակներ են հետապնդում տարածաշրջանային ու միջազգային դերակատարները:

Միացյալ Նահանգներ. Ազգային փոքրամասնություններին առնչվող հիմնախնդիրները և, ընդհանրապես, ազգամիջյան հարաբերությունները շարունակում են մնալ Վաշինգտոնի արտաքին քաղաքականության ուշադրության կենտրոնում՝ որպես տվյալ տարածաշրջանում ազդեցության գործուն լծակներ (ի դեպ, անգլո-սաքսոնյան վեկտորն այսօր և՛ս միջազգային քաղաքականությունում կիրառում է բրիտանական կայսերական այսպես կոչված «Բաժանիր, որ տիրես» սկզբունքը): ԱՄՆ վերաբնակեցվածները միգուցե հետագայում դառնան քաղաքական որոշակի գործոն: Սակայն այստեղից չի հետևում, թե Վաշինգտոնի քաղաքական ռեսուրսները սահմանափակ են: Ամերիկյան կողմը թուրք մեսխեթցիների պարագայում իրապես տիրապետում է ազդեցության կամ ճնշման համախումբ լծակների, որոնք կրում են ավելի շուտ միջնորդավորված, անուղղակի բնույթ և կարող են կիրառվել տարբեր քաղաքական գործընթացների համատեքստում (ասենք՝ ԱՄՆ-Վրաստան, ԱՄՆ-Թուրքիա, ԱՄՆ-Ռուսաստան հարաբերություններում):

Վրաստան. Վրաստանի իշխանությունները թուրք մեսխեթցիների վերադարձը կարևորում են մի քանի հարթություններում: 2007թ. հունիսի վերջին Վրաստանի խորհրդարանի թուրք մեսխեթցիների հայրենադարձության մասին օրենքի ընդունումը քայլ էր եվրոպական ընտանիքի առջև վրացական կողմի ստանձնած պարտավորությունների կատարման, Եվրոմիությանը հետագա անդամակցման գործում: Պաշտոնական Թբիլիսին խնդիրը պայմանավորում է նաև երկրում միջազգային կազմակերպությունների, արևմտյան տերությունների կողմից հնարավոր ներդրումներով: Երրորդ, որպես քաղաքական խաղաթուղթ, որ կարող է մեծացնել վրացական կողմի դերակատարումը թուրք մեսխեթցիների շուրջ ծավալվող միջազգային քաղաքականությունում (առաջին հերթին Վրաստան-Թուրքիա, Վրաստան-Ադրբեջան, ինչպես նաև Վրաստան-Հայաստան հարաբերություններում): Եվ չորրորդ՝ վրացական կողմը խնդիրը կարևորում է երկրի ազգագրական հարցերի համատեքստում: Առ այսօր շարունակվում են թե՛ գիտական, թե՛ քաղաքական բանավեճերը թուրք մեսխեթցիների ծագումնաբանության հիմնահարցի շուրջ: Առաջարկվող հիմնական վարկածներից («վրացական» տարբերակ) մեկն այն է, թե թուրք մեսխեթցիները դեռևս 17-18-րդ դդ. թրքացած, այսպես կոչվող, վրաց մեսխեթցիների ժառանգներն են: Ըստ այս վարկածի, վերջիններիս ծագումնաբանական կազմին են պատկանում նաև էքնիկ թուրքերը և հեմշիլները:

Թուրքիա. Թուրքական պետական շրջանակները հարցին մոտենում են հիմնականում երկու՝ ազգագրական և քաղաքական ենթատեքստերով, որոնք հաճախ չունեն բաժանարար գծեր և հանդես են գալիս միասին: Պաշտոնական Անկարան թուրք մեսխեթցիների ծագումնաբանական խնդիրներին առաջնակարգ կարևորություն է տալիս. հարցեր, որոնք շարունակում են գտնվել երկրի պետական, քաղաքական ինստիտուտների ուշադրության կենտրոնում, որպես պանթյուրքական քաղաքականության մասնաբաժին: Ծագումնաբանության «թուրքական» վարկածը թուրք մեսխեթցիներին համարում է էքնիկ թուրքեր (թյուրքալեզու հողագործներ), թերեքյալներ (ադրբեջանախոս հովիվներ), իսկ մի փոքր մասն էլ՝ 17-18-րդ դարերում իսլամացած ու թուրքալեզու բնիկ հայեր (հեմշիլներ) ու վրացիներ: Այս հարցում թուրքական կառավարությունն իրականացնում է լուրջ քարոզչական-տեղեկատվական քաղաքականություն: Պատահական չէ, որ հենց վերջին տարիներին ընդլայնվեցին այս խնդրին առնչվող հրապարակումների շրջանակները, բացվեցին նոր հասարակական կազմակերպություններ, թուրքալեզու ինտերնետային կայքեր (http://www.ahiska.org.tr/index.htm, http://www.ahiska.da.ru/, http://www.ahiskalilar.org և այլն): Ներկայիս Թուրքիայում գործում է թուրք մեսխեթցիների շուրջ 20 կազմակերպություն ու միություն, որոնք շարունակում են լուրջ գործունեություն ծավալել այդ ուղղություններով: Դրանցից առավել ակտիվների շարքում նախ և առաջ պետք է առանձնացնել 2003թ. օգոստոսին հիմնադրված «Թուրք մեսխեթցիների կազմակերպությունների դաշնություն»-ը (“The Federation of Ahiska Turks Associations”), որը, միավորելով 9 կազմակերպություններ, նպատակ էր հետապնդում համախմբել երկրի տարբեր հատվածներում գործող թուրք մեսխեթական միությունները: Կարելի է առանձնացնել նաև «Փախստական թուրք մեսխեթցիների մշակութային և սոցիալական աջակցության ասոցիա-

ցիա»-ն, ինչպես նաև «Թուրք մեսխեթցիների կրթական, մշակութային և սոցիալական աջակցության ասոցիացիա»-ն: Վերջինիս հիմնական առաքելությունը Վրաստանի հարավարևմտյան շրջաններ թուրք մեսխեթցիների վերադարձի իրականացումն է:

Թուրքիայի կառավարությունը շարունակում է հետևողական քաղաքականություն վարել Թուրքիայի հարևան երկրներ (առաջին հերթին Վրաստան) թուրք մեսխեթցիների վերադարձի գործընթացի ակտիվացման ուղղությամբ: Թուրքական կողմի համար խնդիրն ունի քաղաքական հրատապություն ոչ միայն Թուրքիա - Հարավային Կովկաս ձևաչափի, այլև Թուրքիա - Եվրոմիություն, Թուրքիա - Ռուսաստան հարաբերությունների համատեքստում:

Ռուսաստան և ԱՊՀ տարածք. Հարցում լրջորեն շահագրգռված է նաև ռուսական կողմը: Պաշտոնական Մոսկվան խնդիրը դիտարկում է ինչպես ռուս-վրացական քաղաքական լարված հարաբերությունների, այնպես էլ Ռուսաստան-Հարավային ուղղություն ձևաչափերի (առաջին հերթին Ռուսաստան-Թուրքիա) համատեքստում: Խորհրդային կարգերի փլուզումից հետո ռուսական կողմը կարողացավ իր առանցքի շուրջը միավորել ետխորհրդային տարածքում և առաջին հերթին Ադրբեջանում, Ղազախստանում ու Ուկրաինայում բնակեցված թուրք մեսխեթցիների հասարակական-քաղաքական, գաղափարական և, ընդհանրապես, մարդկային ռեսուրսները: Ետխորհրդային հանրապետություններում բնակվող թուրք մեսխեթցիների հասարակական-քաղաքական գործունեության համակարգման հարցում զգալի դեր է ունեցել «Վաթան» («Հայրենիք») հասարակական կազմակերպությունը (ամբողջական անվանումը՝ «Վաթան» թուրք մեսխեթցիների միջազգային միություն ՀԿ): Ավելին, սույն կազմակերպությունը հանդիսանում է նրանց գաղափարական-քաղաքական հիմնական կառույցներից մեկը, եթե ոչ ամենահիմնականը: 1991թ. հիմնադրված կազմակերպության կենտրոնական գրասենյակը Մոսկվայում է, մասնաճյուղեր ունի Ադրբեջանում, Ղազախստանում, Ուկրաինայում: Ունի շուրջ 300 հազ. անդամ: Կանոնադրության համաձայն, հիմնադրվել է տվյալ ժողովրդի ամբողջական ռեաբիլիտացիայի, վերադարձի, նրանց նկատմամբ պատմական արդարության վերականգնման նպատակներով: Խորհրդի բոլոր անդամները, առանց բացառության, հանդիսանում են ՌԴ քաղաքացիներ: Տեղեկատվական-քարոզչական գործունեությունն իրականացնում է հիմնականում այսպես կոչված «Vatan Yolunda» («Ճանապարհ դեպի հայրենիք») թերթի և էլեկտրոնային կայքէջի (http://www.vatan-yolunda.ru/) միջոցով: Թերթի խմբագիրն է կազմակերպության վարչության նախագահի առաջին տեղակալ, խորհրդի անդամ Յա. Կադիրովը (Կաբարդինո-Բալկարիա):

Կազմակերպությունում ու նախագահությունում գոյացած տարակարծությունները ունեն, առաջին հերթին, քաղաքական ենթատեքստ, և է՛լ ավելի են շեշտադրում հարցի տարածաշրջանային կարևորությունն ու նշանակությունը: Կարելի է ենթադրել, որ, ի դեմս կազմակերպության նախագահի, փորձ է կատարվում թուրք մեսխեթցիների շուրջ ծավալվող զարգացումներում, ի հաշիվ ռուսական գործոնի, առաջ մղել մեկ այլ՝ թուրքական վեկտորը: Փաստենք, որ վերջին տարիներին կազմակերպության գլխավոր՝ մոսկովյան գրասենյակի ու նրա մասնաճյուղերի միջև համագործակցության թուլացման հիմնական պատճառներից մեկն էլ հանդիսանում է խնդրում արտաքին գործոնի՝ տվյալ պարագայում՝ թուրքական վեկտորի ակտիվացումը: Ընդ որում, թուրքականի հետ համընկնում են վրացական շահերը՝ որպես ճնշամիջոց ռուս-վրացական հարաբերություններում: Ուստի, պատահական չէ, որ կազմակերպության 5-րդ նստաշրջանը Բարբաքածեի նախածեռնությամբ տեղի ունեցավ Թբիլիսիում: Հենց այդ ժամանակ որոշում ընդունվեց 2007թ. հոկտեմբերի 17-ին «Թուրք մեսխեթցիների հայրենադարձության աջակցման» միջազգային հիմնադրամի ստեղծման մասին, որի նախագահն է կազմակերպության վարչության նախագահի, խորհրդի անդամ Սուլեյման Բարբաքածեն: Վերջինիս տեղակալը «Ազգային փորքմասնությունների իրավունքների հարցերով եվրոպական կենտրոն»-ի ավագ խորհրդական Թեմուր Լոմսածեն է:

Եզրակացություն. Այս խնդիրները կարևոր նշանակություն ունեն, առաջին հերթին, Հայաստանի տարածաշրջանային անվտանգության համատեքստում. դրանք ուղղակիորեն վերաբերում են ջավախքահայության անվտանգության, Հայաստանի ռազմա-քաղաքական անվտանգության ոլորտներին: Միևնույն ժամանակ կարևոր են այն տարածաշրջանային աշխարհաքաղաքական հնարավոր վերադասավորումները, որոնց համատեքստում ենթադրվում է թուրք մեսխեթցիների վերադարձի քաղաքական գործընթացի իրականացումը: Ներկայացնենք այն երկու հիմնական սցենարները, որոնք Հայաստանի ազգային անվտանգության տեսանկյունից գնահատվում են ռիսկային.

Պանթյուրքական մոդել - վերջին շրջանում, ի դեմս Թուրքիայի ու Ադրբեջանի, նկատվում է պանթյուրքական քաղաքական ու գաղափարախոսական տարրերի ակտիվացման գործընթաց: Բավական է նշել թյուրքալեզու պետությունների ավանդույթ դարձած նստաշրջանների կազմակերպման իրողությունը: Վերջինս մտահոգիչ է նաև այն առումով, որ այդ նիստերի հիմնական կարգախոսը՝ «թյուրքալեզու պետությունների ու հանրությունների բարեկամություն, եղբայրություն ու համագործակցություն», ի սկզբանե կրում է ոչ թե հանուն, այլ՝ հակա ենթատեքստը: Թյուրքալեզու պետությունների նիստերում մեծ կարևորություն է տրվում ոչ միայն պետական, այլև տարբեր երկրներում բնակվող թյուրքալեզու հանրությունների միջև համագործակցության ինստիտուցիոնալ զարգացման խնդիրներին, որտեղ, առանձին կետով, ի թիվս այլոց, նշվում է նաև թուրք մեսխեթցիների խնդիրը՝ որպես պանթյուրքական գաղափարի բաղադրիչ: Մեղմ ասած, խիստ հավակնոտ տպավորություն ստեղծվեց 2007թ. նոյեմբերի երկրորդ կեսերին Բաքվում կայացած թյուրքալեզու պետությունների բարեկամության, համագործակցության 11-րդ նստաշրջանում Թուրքիայի վարչապետ Էրդողանի հնչեցրած այն հայտարարությունից, թե «թյուրքալեզու պետություններին անհրաժեշտ է վերաիմաստավորել ու նորովի շարադրել ընդհանուր պատմությունն ու որոշել ընդհանուր ապագան»:

Տարածաշրջանային սցենար երկրորդ կամ ռուս-ադրբեջանական տանդեմ. խնդրի հրատապությունը և նրա շուրջ ծավալվող քաղաքական շահարկումները կնպաստեն ոլորտում ռուսական գործոնի առավել ամբողջական ներգրավմանը՝ պայմանավորված մի կողմից տարածաշրջանում ազդեցության ամրապնդման հարցում ռուս-թուրքական մրցակցությունով, մյուս կողմից՝ Ռուսաստան-Հարավային Կովկաս, ռուս-վրացական հարաբերություններով:

ԿԱՐԵՆ ՎԵՐԱՆՅԱՆ

Ի ՎԵՐՋՈ ԿԿԱՌՈՒՑՎԵՆ ՋԱՎԱԽՔԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ

Մարտի 20-ին «Հազարամյակի մարտահրավերներ-Վրաստան» ծրագիրը կհայտարարի Սամցխե-Ջավախեթիում ճանապարհների վերականգնման նախագծի իրականացման մրցույթի հաղթողին: Մրցույթը հայտարարվել էր դեռեւս 2007 թվականի հոկտեմբերին: Վերականգնման ենթակա ճանապարհների ընդհանուր ձգվածությունը կազմում է 235,3 կմ:

Հիշեցնենք, որ Ջավախքի ճանապարհներն արդեն մի քանի տասնամյակ անանցանելի են սովորական տրանսպորտային միջոցների համար: Տարածաշրջանի շատ գյուղերի համար հաղորդակցության հիմնական միջոցը ծանր տեխնիկական պարամետրեր ունեցող ավտոմեքենաներն են, իսկ Ջավախքի համար սովորական դարձած 7-8 ամիս տեւող ձմռան եւ ցեխառատ գարնան ու աշնան ընթացքում մարդիկ մնում են բրքուրվոր տեխնիկայի հույսին: **«Ազգ»,** 14.03.2008թ.

Ա. Հ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՈՒ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՄԻՋԵՎ

1932 թվականի հունվարի 23-ին Թուրքիայի և Իրանի միջև կնքվեց հատուկ համաձայնություն, որով երկու երկրները հայկական տարածքների փոխանակում կատարեցին Արարատ լեռան և Կոտուր գետի շրջաններում: Գործարքի շնորհիվ Թուրքիան մի նեղ շերտով (մոտ 10 կիլոմետր) անմիջականորեն կապ հաստատեց Նախիջևանի հետ: Հողերի փոխանակման դրդապատճառները երկուսն են.

1. Քրդական գործոնը. Առաջին համաշխարհային պատերազմում Թուրքիան պարտություն կրեց: Չնայած Իրանն Առաջին համաշխարհային պատերազմում հանդես չեկավ Անտանտի կազմում և չեզոք երկիր էր համարվում, այնուամենայնիվ, նրա տարածքում ընթանում էին ռազմական գործողություններ: Իրանի տարածքի հյուսիսային մասում գտնվում էին ռուսական, իսկ հարավային մասում՝ անգլիական զորքեր: Պատերազմում Թուրքիայի կրած պարտության հետևանքով տարածաշրջանում ուժերի հարաբերակցությունը փոխվեց հօգուտ Իրանի: Չնայած հետպատերազմյա տարիների քաոսին՝ Իրանը փորձեց միջազգային արենայում իր շահերին ծառայեցնել Թուրքիայում տիրող դժվարին իրավիճակը: Սկզբնական շրջանում Թեհրանը Փարիզի Խաղաղության կոնֆերանսում, իսկ հետո արդեն Սևրի կոնֆերանսում Թուրքիայից սկսեց պահանջել որոշակի տարածքներ, բայց Անգլիայի կողմից մերժում ստացավ: Թուրքական հասարակական կարծիքը նեղացած էր իրանական նախաձեռնությունից: Այդ ժամանակ ստամբուլյան թերթերում կարելի էր հանդիպել հետևյալ վերնագրով հոդվածների. «Եվ դո՞ւ Բրուտոս»:

1921 թվականի փետրվարի 21-ին Թեհրանում Ռեզա խանի (1925 թվականի դեկտեմբերի 12-ից՝ Իրանի շահ) իրականացրած հեղաշրջման շնորհիվ՝ թուրք-իրանական հարաբերություններում նոր ժամանակաշրջանի հիմք դրվեց: Գրեթե միևնույն ժամանակ երկու երկրներում երկու ազգայնական գործիչներ՝ Մուստաֆա Քեմալը և Ռեզա Շահը, պայքար սկսեցին իրենց ներքին և արտաքին թշնամիների դեմ: Միջազգային քաղաքականության մեջ երկու գործիչների պատկերացումները համընկնում էին: Դա հատկապես վերաբերում է բրիտանական իմպերիալիզմին ու տարածաշրջանում դրա ազդեցության դեմ պայքարին:

Թուրքիան ձգտում էր Իրանի հետ պահպանել բարիդրացիական հարաբերություններ, որպեսզի թույլ չտա Իրանին համալրել իր թշնամիների շարքերը, ինչպես դա եղել էր նախկինում:

Երբ երկու երկրներն անկախություն ձեռք բերեցին, ի հայտ եկան հին խնդիրները: Մասնավորապես, խոսքը վերաբերում է քրդերին ու ադրբեջանցիներին: Թուրքիային անհանգստացնում էր սեփական տարածքում գտնվող քրդերին իրանական աջակցության, իսկ Իրանին՝ Իրանական Ադրբեջանի ադրբեջանցիներին թուրքական աջակցության խնդիրը:

Իրանը, ավանդաբար, երբեք քրդերին (կամ հայերին) չի դիտարկել որպես սպառնալիք իր ռեժիմին: Թուրքիան, սակայն, անընդհատ Իրանից պահանջում էր կոշտ քաղաքականություն վարել քրդերի նկատմամբ:

1920-ական թվականների վերջերին Մեծ և Փոքր Արարատների միջև ընկած տարածքը դարձավ քրդական ապստամբական նոր շարժման գլխավոր օջախն ու բազան: 1927 թվականին քուրդ հայրենասեր Իհսան Նուրիի գլխավորությամբ սկսվեց մի հզոր ապստամբություն, որը թուրքերը կարողացան ճնշել միայն 1931 թվականին: Քրդական ապստամբության հետևանքով սրվեցին թուրք-իրանական հարաբերությունները, քանի որ խռովարարները հեշտությամբ անցնում էին իրանական սահմանը և օգնություն էին ստանում իրանական քրդերից: Որպեսզի թուլացվի ստեղծված լարվածությունը, երկու երկրների կառավարություննե-



րը ստորագրեցին մի շարք համաձայնագրեր, սակայն դրանք ի վիճակի չեղան կարգավորելու խնդիրը: Գնալով լարվածությունն ավելի մեծացավ և 1930 թվականին վերածվեց բաց ճգնաժամի: Թուրքական մամուլն Իրանին մեղադրեց խռովարարներին բարոյապես և էապես օգնություն ցուցաբերելու մեջ: Իրանից պահանջում էին վերջ դնել այդ ամենին:

Թուրքական ղեկավար շրջաններում Իրանի նկատմամբ քաղաքականություն վարելու հարցում կարծիքները կիսվեցին: Վարչապետ Իսմեթ Ինենյուն և արտաքին գործերի նախարար Թևֆիկ Ռուշտուն պաշտպանում էին կոշտ քաղաքականություն վարելու, իսկ նախագահ Մուստաֆա Քեմալը և Արևելյան Անատոլիայի տեսուչ Իբրահիմ Թալին՝ ավելի չափավոր քաղաքականություն վարելու գաղափարը: Վերջապես համաձայնություն ձեռք բերվեց. Թեհրանում թուրքական դեսպան Մահմուդ Շևքեթը, որը հայտնի էր իր քրդամետ հայացքներով և քրդերի նկատմամբ Անկարայի վարած քաղաքականության քննադատությամբ, հետ կանչվեց: Նրա փոխարեն դեսպան նշանակվեց Քեմալի նախկին զինվորներից Հյուսրև Գերեդեն: Դա հանգեցրեց նրան, որ, վերջապես, երկու տարվա դժվարին բանակցություններից հետո՝ 1932 թվականի հունվարի 23-ին, կնքվեց սահմանների համաձայնագիրը: Արարատ լեռան ողջ տարածքը (հատկապես Փոքր Արարատի հատվածը) տրվեց Թուրքիային, իսկ Կոտուրի սահմանային հատվածը (Վանի մոտ)՝ Իրանին: Փաստորեն, ստացվում է, որ այս գործարքից ավելի շատ օգտվեց Թուրքիան: Չնայած իր շտաբի ուժեղ դիմադրությանը՝ Ռեզա շահը, առանց երկմտելու, ընդունեց այդ անբարենպաստ փոխանակությունը: Շահին, պարզապես, ձանձրացրել էին թուրք-իրանական սահմանային վեճերը, որոնց էլ նա վերջ տվեց՝ իր իսկ ասած «այդ բլուրը» Թուրքիային հանձնելով:

2. Պանթյուրքիզմի գործոնը. 1921 թվականի մարտի 16-ին ՌՍՖՍՀ-ի և Թուրքիայի կառավարական պատվիրակությունները ստորագրեցին «Բարեկամության և եղբայրության մասին» պայմանագիրը: Պայմանագրում ոչ մի հիշատակություն չկար Արևմտյան Հայաստանի մասին: Այն վավերացրեց 1920 թվականի հայ-թուրքական պատերազմի ժամանակ քեմալական զորքերի կողմից Հայաստանի տարածքների զավթումը: Ճիշտ է, հաջողվեց համաձայնություն ձեռք բերել Ալեքսանդրապոլ քաղաքը և գավառը Խորհրդային Հայաստանին վերադարձնելու մասին, բայց թուրքերին մնացին հայերից խլված մյուս բոլոր տարածքները՝ Կարսի մարզը, Սուրմալուի գավառը՝ Արարատ լեռան հետ միասին, Կաղզվանի, Արդահանի, Օլթիի օկրուգները և այլն:

Թուրքերի համար հատկապես կարևոր էր Նախիջևանի գավառը հայերից խլելը: Նրանք լավ գիտեին, որ Ռուսաստանը չի համաձայնի, որպեսզի այդ գավառն անցնի Թուրքիային՝ ամենից առաջ ելնելով նրա ռազմավարական դիրքից:

Նախիջևանի գավառը պանթյուրքիզմի տեսակետից առանձնահատուկ նշանակություն ուներ: Այն, ըստ էության, կապող օղակ էր Թուրքիայի ու Ադրբեջանի, Թուրքիայի և ողջ Թուրանի միջև: Նախիջևանը հայերից վերցնելը պանթյուրքիստների համար ձեռք էր բերում սկզբունքային նշանակություն:

Տեսնելով Նախիջևանի հարցում ՌՍՖՍՀ կառավարության դիրքը՝ Մոսկվայում գտնվող թուրքական պատվիրակությունն այս անգամ ամեն ինչ արեց գավառը «կրտսեր եղբորը»՝ Ադրբեջանին հանձնելու համար: Մարտի 16-ի պայմանագրի 3-րդ հոդվածով Նախիջևանը, որը գտնվում է Հայաստանի հենց կենտրոնում, նույնպես նրանից խլվեց և դրվեց Ադրբեջանի պրոտեկտորատի տակ: Բացի այդ, Շարուր-Դարալագյազի գավառից անջատվեց Շարուրի ողջ տարածքը և միացվեց Նախիջևանի գավառին: Այլ խոսքով, պայմանագրի 3-րդ հոդվածով Հայաստանից պոկվեց ևս 5.500 քառակուսի կիլոմետր:

Այսպիսով, 1921 թվականի մարտի 16-ի պայմանագրով Հայաստանը կորցրեց իր տարածքի շուրջ կեսը՝ ավելի քան 25.000 քառակուսի կիլոմետր տարածություն: Մոսկվայի պայմանագրով որոշվեց խորհրդա-թուրքական այն սահմանագիծը, որը գոյություն ունի մինչև այժմ: Այդ պայմանագիրը ստորագրելուց 7 ամիս անց՝ 1921 թվականի հոկտեմբերի 13-ին, ՌՍՖՍՀ ներկայացուցչի մասնակցությամբ Թուրքիայի և Անդրկովկասի երեք հանրապետությունների միջև Կարսում կնքվեց պայմանագիր, որը, ըստ էության, Մոսկվայի պայմանագրի վերահաստատումը լինելով, որևէ փոփոխություն չմտցրեց ստեղծված սահմանային ռեժիմի մեջ:

Սակայն դեռևս մասնակիորեն էր իրականացել պանթյուրքիստների երազանքը: Դրա համար անհրաժեշտ էր սահման ունենալ Նախիջևանի (Ադրբեջանի) հետ: 1921 թվականին կնքված Մոսկվայի ու Կարսի պայմանագրերից հետո Թուրքիային հարկ եղավ 10 տարուց ավելի սպասել, որպեսզի անմիջական տարածքային կապ հաստատի արդեն Ադրբեջանի ինքնավար հանրապետություն դարձած Նախիջևանի հետ: Եվ դա, ի վերջո, նրան հաջողվեց: Իրականացավ պանթյուրքիստների վաղուց փայփայած իղձը:

Մեր օրերում պանթյուրքիզմի գաղափարը Թուրքիայում չի մարել, և այն այսօր էլ մեծ վտանգ է ներկայացնում Հայաստանի համար: Թուրքիայի նախկին նախագահ Սուլեյման Դեմիրելը «թուրքական հասարակության» տակ հասկանում էր աշխարհագրական մի վիթխարի տարածք, որն Ադրիատիկ ծովից ձգվում էր մինչև Խաղաղ օվկիանոս: Իսկ Դեմիրելի նախորդը՝ Թուրգութ Օզալը 21-րդ դարը հռչակել էր Թուրքիայի դար:

Ընդհանրացումներ

1932 թվականին Իրանի հետ կնքած համաձայնագրով Թուրքիան սահմանակցեց Նախիջևանի ինքնավար մարզին: Այս իրադարձությունը բացասական ազդեցություն թողեց Հայաստանի վրա, քանի որ տվյալ հատվածում Հայաստանը զրկվեց Իրանի հետ սահմանակցելու հնարավորությունից:

Ինչ վերաբերում է Թուրքիային, ապա այդ գործարքի իրական պտուղները վայելելու համար նա ստիպված եղավ սպասել 60 տարի: Տվյալ ժամանակաշրջանում այդ գործարքը Թուրքիային գրեթե ոչինչ չտվեց, քանի որ գործարքից ամիսներ առաջ ճնշվել էր քրդական հզոր ապստամբությունը: Բացի այդ, Թուրքիան զրկված էր Նախիջևանում ակտիվ քաղաքականություն վարելուց՝ իր դեմ ունենալով Խորհրդային Միությանը, որին չէր կարող հակադարձել:

Սակայն, դրությունն արմատականորեն փոխեց ԽՍՀՄ-ի փլուզումը, ինչը Թուրքիայի համար «կանաչ լույս» վառեց Նախիջևանում սեփական ազդեցությունը մեծացնելու, ինչպես նաև պանթյուրքիստական պլանները վերստին առաջ քաշելու համար: Դրա առաջին քայլը եղավ այն, որ Թուրքիան Նախիջևանի սահմանին՝ Արաքս գետի վրա, կամուրջ կառուցեց: Ներկայիս Թուրքիան ցանկանում է նաև Կարսից երկաթգիծ կառուցել Նախիջևանի միջոցով դեպի Իրան: Նախիջևանի հետ սահմանով Թուրքիան Ղարաբաղյան հակամարտության տարիներին մեծ օգնություն ցուցաբերեց Նախիջևանին, առանց որի վերջինս կհայտնվեր աննախանձելի իրադրության մեջ: Բացի այդ, Թուրքիան զորք կուտակեց Հայաստանի ու Նախիջևանի սահմանների մոտ, որով և արգելք հանդիսացավ հայկական զորքերի կողմից Նախիջևանի ազատագրմանը: Թուրքական կողմը հայտարարել էր, որ եթե հայկական զորքերը մտնեն Նախիջևան, ապա թուրքական զորքերն էլ իրենց հերթին կմտնեն Նախիջևան:

Այսօր էլ Թուրքիան շարունակում է օգնել Նախիջևանին: Խոսքը վերաբերում է էլեկտրաէներգիայի մատակարարմանը, որի կարիքը այնտեղ սուր է զգացվում:

ՀԱՅԿ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Թուրքագետ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵԶԱԿԻ ԵՒ ՀԻՄՆԱՎՈՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՆ ԵՆ

Կոսովոյի ճգնաժամի եւ Լեռնային Ղարաբաղում իրադրության սրման միջեւ, որտեղ Ադրբեջանն ու Հայաստանը հայտնվեցին պատերազմի եզրին, կապ չկա: Այդ մասին հայտարարել է ԱՄՆ պետքարտուղարի օգնականի տեղակալ, Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հարցով ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ **Մեթյու Բրայզան**: «Ընդհանուր առմամբ, նշանակություն չունի, որ ինչ-որ մեկը դրանում կապ է տեսնում: Մեզ համար կարեւոր է հիշեցնել՝ որոնք են մեր նպատակներն ու քաղաքականությունը: Մենք աջակցում ենք Ադրբեջանի տարածքային ամբողջականությանը, մենք գտնում ենք, որ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը հանդիսանում է բանակցությունների առարկա: Մենք նաեւ կոչ ենք անում կողմերին հավատարիմ մնալ հրադադարի ռեժիմին: Մենք լրջորեն անհանգստացած էինք, որ հրադադարը խախտվեց, եւ բախումներ եղան հայկական եւ ադրբեջանական ստորաբաժանումների միջեւ: Երկու կողմերն էլ պետք է նվազեցնեն լարվածությունը: Ոչ ոք չպետք է փորձի տեղի ունեցած ողբերգական բախումներից քաղաքական շահ քաղել»,- ընդգծել է ամերիկացի միջնորդը:

Նրա խոսքերով, մեծ տարբերություն կա Ղարաբաղի հակամարտության կարգավորման նկատմամբ Լեւոն Տեր-Պետրոսյանի եւ Սերժ Սարգսյանի մոտեցումների միջեւ: «Մինսկի խումբը երբեք այսքան ինտենսիվ չի աշխատել կոնկրետ քայլեր մշակելու համար: Եւ այդ առումով, ներկա ծրագիրը տարբերվում է այն ամենից, ինչ մինչ այդ էր առաջարկվել: Այդ պատճառով հիմքեր չկան՝ համեմատելու այն ծրագրերը, որոնք եղել են Լեւոն Տեր-Պետրոսյանի օրոք, Ռոբերտ Քոչարյանի եւ Հեյդար Ալիեւի օրոք 2001 թվականին: Մենք բավական առաջ ենք գնացել այն ժամանակվանից: Եւ օրակարգում սկզբունքային հարցերի համակարգ է, որոնք կարելի է քննարկել եւ որոնք պետք է հանգեցնեն Ադրբեջանին տարածքների վերադարձին, գաղթականների վերադարձին: Դա ընդգրկում է Լեռնային Ղարաբաղն ու Հայաստանը կապող միջանցքը, միջազգային խաղաղապահների ներկայությունը: Այսինքն, բոլոր այդ առաջարկությունները կդառնան միջազգային համաձայնագրի հիմքը, որը կաջակցի տարածաշրջանի բարգավաճմանը: Այնպես որ, օրակարգում Ղարաբաղի հակամարտության կարգավորման եզակի եւ հիմնավոր սկզբունքներն են, որոնք անհրաժեշտ է կյանքի կոչել»,- ասել է Բրայզան, հաղորդում է «VOA News»-ը: **/PanARMENIAN.Net/** 15.03.2008թ.

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ ՊԵՏՔ Է ՍԿՍԵԼ ՍՈՒՄԳԱՅԻԹԻ ՈՃՐԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ

20-րդ դարը ադրբեջանահայության համար սկսվեց և ավարտվեց կոտորածներով. առաջին կոտորածը Բաքվում տեղի ունեցավ 1905-ի փետրվարին:

1918թ. հուլիսին տեղի ունեցավ Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության 1-ին համագումարը, որը որոշում ընդունեց իրագործել «ռուսական հեղափոխության կողմից հոլովված ամենավեհ գաղափարներից մեկը՝ ազգերի ինքնորոշման իրավունքը»:

1920-ի նոյեմբերի 30-ին Ադրբեջանի ղեկավարությունը ընդունեց հռչակագիր, որտեղ ասվում էր, որ Զանգեզուրի և Նախիջևանի գավառները հանդիսանում են Խորհրդային Հայաստանի մաս, իսկ Լեռնային Ղարաբաղի աշխատավոր գյուղացիությանը տրվում է ինքնորոշման հնարավորություն: Երեք ամիս անց Ադրբեջանը վերանայեց իր այս որոշումը, ռուս-թուրքական դիվանագիտական խարդավանքի միջոցով իր ծեռքն առավ Նախիջևանը, ապա հասավ նրան որ Լեռնային Ղարաբաղի հարցը քննության դրվեց Ռուսաստանի կումունիստական կուսակցության Անդրկովկասյան երկրային կոմիտեում: Վերջինս 1921-ի հուլիսի 5-ին որոշում ընդունեց Լեռնային Ղարաբաղը թողնել Ադրբեջանի կազմում՝ նրան տալով ինքնավարություն:

1988-ի փետրվարի 20-ին ժողովրդական պատգամավորների խորհուրդի արտակարգ նստաշրջանն ընդունեց որոշում՝ «…ընդառաջելով ԼՂԻՄ-ի աշխատավորների ցանկություններին, խնդրել Ադրբեջանի ԽՍՀ Գերագույն խորհրդին ու Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի՝ խոր ըմբռնման զգացում դրսևորել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության իղձերի նկատմամբ և լուծել ԼՂԻՄ-ը Ադրբեջանի ԽՍՀ-ի կազմից Հայկական ԽՍՀ կազմին հանձնելու հարցը. միաժամանակ միջնորդել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի առջև՝ ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմից Հայկական ԽՍՀ կազմ հանձնելու հարցի դրական լուծման համար»:

1991-ի սեպտեմբերի 20-ին, ԼՂԻՄ-ի մարզային և հայաբնակ Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանում հռչակվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, որն ամրագրեց դեկտեմբերի 10-ի անկախության հանրաքվեն:

1988-90թթ. Ադրբեջանի մի շարք քաղաքներում՝ Սումգայիթում, Կիրովաբադում, Բաքվում, …, դաժանորեն ոտից հայեր սպանվեցին:

Ինչո՞ւ: Ովքե՞ր էին կազմակերպիչները: Դատապարտվեցի՞ն ոճրագործները: ՀՀ պետական մոտեցումը այդ դեպքերի հանդեպ: Ադրբեջանի հակահայկական քարոզչությունն ու ՀՀ պատասխան քայլերը: Հայ փախստականն ու իր խնդիրները: ՀՀ արդարադատությունը: Այս և այլ հարցերի պատասխաններն է տալիս փաստաբան Ռուբեն Ոշտունին.

Արցախյան շարժումով ծնունդ առած հայության ազգային ազատագրական պայքարի ալիքն անշուշտ չվրիպեց գերտերությունների՝ հատկապես ԽՄԿԿ-ի ուշադրությունից: Շատ չանցած Բաքու, Կիրովաբադ և Սումգայիթ քաղաքներում սկսեցին կոտորել հայերին՝ փորձելով խեղդել հայության պայքարի ճիչը:

ԽՄԿԿ-ի պարագլուխների կողմից դրդվեց և Ադրբեջանի ղեկավարության կողմից կազմակերպվեց «հայասպանության ակցիան»: Ուզում էին հայերին վախեցնել, լռեցնել, ավելին՝ կարծում էին, որ «հայերը խելքները գլուխները կհավաքեին և հետ կկանգնեին պայքարից»:

Եվ այդ ժամանակ էլ ոտքի կանգնեցին հայ ազատամարտիկները...:

Երբ Ադրբեջանի կենտկոմի բյուրոն Սումգայիթի քաղկոմի առաջին քարտուղար Մուսլիմ Ջադեին աշխատանքից հեռացրեցին, վերջինս ամեն ինչ բացեիբաց ասաց՝ հայության կոտորածի ամբողջ մեղքը բարդելով Ադրբեջանի ղեկավարության վրա:

Տեսան, որ չի ստացվում համաժողովրդական պայքարի ալիքը կանգնեցնել, սկսեցին սովետա-ադրբեջանական հանցագործ գործաչովյան «Кольцо»՝ (օղակ) օպերացիան, որն ահավոր դաժանությամբ իրագործվեց: Ամենամեծ հանցագործն այդ հարցում Գորբաչովն էր և պոլիտբյուրոյի մի քանի անդամներ: Եթե քրքրենք կենտկոմի արխիվները, այդ հաստատող շատ փաստեր կգտնենք:

Սումգայիթյան դեպքերի առնչությամբ մի քանի դատավարություն է եղել: Ծանոթ եմ մեկին, որին մասնակցել եմ 1988-ի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին, Մոսկվայում: Դատավորը ազգությամբ լատիշ Ռայմունդ Կազիմիրովիչ Բրիզեն էր: Այն անցավ բարձր մակարդակով: Դատարանը հանցագործ Ահմեդովի նկատմամբ մահապատժի վճիռ կայացրեց, իսկ մյուս երկուսի նկատմամբ մենք միջնորդություն հարուցեցինք, քանի որ այնտեղ հանցագործներից մեկը մեղսագրված չէր, գործերն ուղարկվեցին նոր քննության: Իսկ ադրբեջանցիները Ահմեդովին սրբացրեցին իրենց միտինգներում:

Դատական այդ բարձր ատյանում հայ զոհերի ընդհանուր թվի հարցը բաձրացնելու խնդիր առաջացավ, ինքս լինելով դատապաշտպան, գիտակցում էի, որ այդ հարցը բաձրացնելու տեղը չէր դա. այն չէր վերաբերվում այդ դատարանի իրավասությանը, այնուամենանիվ իմ պաշտպանյալին՝ տուժվածներից մեկին, հարցրեցի թե քանի՞ զոհ է եղել Սումգայիթում: Դատավոր Բրիզեն տեղն ու տեղը ինձ ընդհատեց. «Դուք գիտեք, որ դատարանի հետ հարկավոր է խոսել ապացույցների լեզվով»: Ես ընդունեցի նրա դիտողությունը: Սակայն դատավորն իմ հարցը չհանեց, այլ ընթացք տվեց. ասելով. «Եթե տվյալներ ունենք զոհերի թվի մասին, ներկայացրեք դատարանին»: Մի բան, որ գործ չունի քննվող այդ գործի հետ: Անաչառության բարձրագույն արտահայտություն: Ես նրանից իրավունք խնդրեցի զոհերի թվի մասին փաստաթուղթ ներկայացնել, երբ հարմար պահը գար: Ասաց. «Դա ձեր իրավունքն է»: Ընդմիջմանը դուրս եկա, ընդամենը մի փաստաթուղթ խնդրեցի սումգայիթյան զոհերի ընդհանուր թվի մասին… մինչ օրս բերում են…: Որքան ինձ հայտնի է զոհերի թիվը 26-ն է: Մեկը չկա, որ ասի՝ իմ տատը, իմ ընկերը, իմ քույրը չկա: Ասացե՞ք, խնդրեմ ես, որպես իրավաբան, ինչի՞ վրա հիմնվեմ և 27-րդ զոհի մասին խոսեմ:

Մոսկովյան այդ դատավարության ժամանակ մեզ շատ խանգարողներ եղան…: Երբ Սումգայիթի մասին իմ գիրքը գրեմ, նրանց անուններով կասեմ:

Մոսկվայի այդ դատավարութամբ պարզվեց նաև, որ ադրբեջանցի շատ ընտանիքներ փրկել են հայերին, այդ մասին խոսեց վկա Ալեքսանդր Ղուկասյանը: Գիտեք ինչ, մարդն իր ուրախության և վշտի մեջ պիտի հպարտ և ազնիվ լինի: Չի կարելի չասել այն ինչ ճիշտ է: Օրինակ՝ Մելքումովների ընտանիքը փախել է ադրբեջանցիների պատշգամբներով: Ցավալի, որ այսօր Ադրբեջանի ղեկավարությունը ժողովրդին, հատկապես մատաղ սերնդին լարում է հայության դեմ՝ թշնամանքի թույն ներարկելով: Եվ դա արվում է միայն շահադիտական նպատակներով. իրենց հեղինակությունները ընտրություններից ընտրություն բարձր պահելու և լավ պաշտոններ ստանալու համար:

1990թ. սեպտեմբերի 1-ին Լենինգրադում սկսվեց Մարդու իրավունքների համաշխարհային կոնգրեսը, որին մասնակցում էր նաև հայկական պատվիրակությունը: Հյուրանոցում տեղավորվելուց հետո դուրս եկա, Երկաթուղայինների մշակույթի տունն էր մոտակայքում, գնացի շրջելու:

Վեց մետր լայնքով ու բարձրությամբ մի հսկա ստենդ, վրան փակցրած նկարներ, առջևում՝ սեղաններ, վրան՝ թերթեր, բուկլետներ: Սեղանների մոտ՝ աղջիկներ: Ինքս լինելով ճերմակահեր և ոչ նման կովկասցու, մոտեցա ու հարցրեցի՝ ի՞նչ նկարներ են, ովքե՞ր են: Նրանցից մեկը թե՝ «Սրանք այն զոհերն են, երբ 1990-ին գեներալ Լեբեդը մտավ Բաքու»: Ձայն չհանեցի, մոտեցա, նայեցի նկարները, ես հային թուրքից կտարբերեմ չէ՞: Ասացի՝ այս կինը նման չէ ադրբեջանցու և ոչ էլ՝ այս տղամարդը: Նրանք խառնվեցին, իրար անցան. «Ինչո՞ւ եք այդպես ասում»: Ասացի, որ հայ եմ և շատ լավ եմ հային տարբերում ադրբեջանցուց: Նրանք ունեին այդ ստենդը, միաժամանակ անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն թարգմանիչներ, այդ լեզուներով բուկլետներ, թերթեր, թերթիկներ: Ապշած էի: Գնացի դահլիճ, մեր պատվիրակների (Ռաֆայել Պապայան, Շավարշ Քոչարյան և Աղասի Արշակյան) մոտ և հարցրեցի, թե քանի՞ օր առաջ գիտեին այս կոնգրեսի մասին (ի դեպ, ես ամենավերջին օրն իմացա այդ կոնգրեսին իմ մասնակցության մասին և վերջին պահին ինքս եմ գնել իմ տոմսը): Նրանք էլ թե՝ «Երկու ամիս առաջ»: Ասացի՝ գնացեք, նայեք թե ադրբեջանցիները ո՛նց են եկել, իսկ մենք՝ բացարձակ դատարկածեռն: Նրանք էլ թե՝ «Ժամանակ չկար»: Ասացի՝ ինձ մի շաբաթ առաջ ասեիք ամբողջը կպատրաստեի:

Այնպես որ մենք քարոզչության տեսակետից միշտ տանուլ ենք տվել Ադրբեջանին և մինչ օրս էլ շարունակում ենք տալ: Նրա հակահայկական քարոզչամեքենան այսօր, առավել քան երբևէ, «հիանալի է գործում». սեփական ժողովրդի (հատկապես՝ երիտասարդության) մեջ էլ ավելի է արմատավորում թշնամանքն ու ատելությունը հայի հանդեպ: Ադրբեջանը ստեր է տարածում, բայց, այնուամենայնիվ, տարածում է և նրան հաջողվում է մոլորեցնել ու ապակողմնորոշել միջազգային հանրությանը: Եվ ամբողջ աշխարհին թմբկահարում է, որ հունվարի 30-ը սգո օր է Ադրբեջանում:

Սումգայիթի ոճրագործությունից անցել է 20 տարի, Բաքվի դեպքերից՝ 18 տարի, սակայն մինչ օրս ՀՀ-ում ադրբեջանցի մի որևէ հայ փախստական (կամ նրա իրավունքների պաշտպանության մի կառույց, իհարկե, եթե այդպիսին գոյություն ունի) Ադրբեջանում իր կորցրած՝ բռնագրավված գույքի նյութական փոխհատուցման պահանջով դատական հայցով չի դիմել միջազգային որևէ դատարան:

Բավականին նյութեր ունեմ սումգայիթյան դեպքերի, Սումգայիթի դատավարության մասին գրելու, որին կարելի է ավելացնել այն երկու դատավարությունները, որոնք տեղի են ունեցել Ռուսաստանի մարզային դատարաններում՝ Ուլյանովսկ և Վորոնեժ քաղաքներում: Այնտեղ դեռ շատ արժեքավոր նյութեր կան, որոնք պետք է ուսումնասիրել և հավաքել: Այդ անելու համար պետք է ՀՀ-ում աշխատանքս թողնեմ (ինչն անել չեմ կարող, քանի որ ապրուստիս միակ միջոցն է): Ոչ ոք այդ աշխատանքի հովանավորությունը չի ստանձնում, ոչ մեկին դա պետք չէ: Սումգայիթի համար ոչ ոք ոչինչ չի անում: Սփյուռքահայությունն էլ է լռում:

Սամվել Շահմուրադյանը հրատարակեց Սումգայիթի փախստականների հուշերի գիրքը, երկրորդ հատորը չհասցրեց...: Այն ամբողջությամբ պատրաստ է, սակայն գումար է հարկավոր հրատարակելու համար: Կարծում եմ, որ Ադրբեջանի երեք քաղաքներում տեղի ունեցածը՝ մարդկության դեմ այդ վայրագությունները, առաջնահերթորեն մեր պատմաբանների և իրավաբանների կողմից ծանրակշիռ ուսումնասիրության կարիք ունեն:

Ես կարող եմ Մոսկվայում վերցնել և ուսումնասիրել, կարդալ Ռուսաստանի մարզային դատարաններում քննված երկու գործերը, որտեղ ահավոր, սահմռկեցուցիչ ցուցմունքներ կան: Քննչական խմբի ղեկավարը Գալկինն է եղել, որ մինչև Մոսկվա տեղափոխվելը, աշխատել է Ադրբեջանի դատախազությունում: Այդ գործերում ներառված են ադրբեջանցի դատական բժիշկների եզրակացությունները: Ովքեր դեպքերի թարմության պատճառով դեռևս անաչառ, օբյեկտիվ են եղել իրենց ցուցմունքներում:

Փախստականների հարցերով զբաղվող կոմիտե կա ՀՀ-ում: Պատմությունից էլ հայտնի է, որ առաջնորդները ժողովրդին դիմում են օրհասական պահին: Պատերազմից հետո մոռանում են նրան: Ի՞նչ վիճակում են մեր ազատամարտիկները: Աստված գիտի:

Ժողովուրդը հիասթափվում է «մերօրյա արդարադատություն կոչվածից», որը մի օր կփլուզի Հայաստանը: Լ. Տեր-Պետրոսյանին, ապա Ռ. Քոչարյանին անձամբ եմ ներկայացրել մեր արդարադատության անմխիթար վիճակը և միակ ելքը մատնանշել՝ տարեկան երեսուն հոգու պետության միջոցներով ուղարկել Ռուսաստան՝ վերապատրաստման: Մի բան, որ մինչ օրս չի իրագործվում:

Չունենք իրավաբաններ, որ իրավաբաններ դաստիարակեն, փոխարենը՝ ընկնենք սար ու ձոր, եվրոպական մոդելների քրեա-դատավարական օրենքներ ներմուծեցինք: Օրենքը դուրս է գալիս, չգիտես՝ ինչպես կիրառես, մեկնաբանություններ չկան, գիտնականներ չկան, որ գրեն: Իսկ Ռուսաստանում օրենքը դուրս է գալիս, մեկ ամիս չանցած, հրատարակվում են մեկնաբանությունները:

Կարծում եմ, արդարադատության վերականգնումը պետք է սկսել Սումգայիթի ոճրագործության դատավարությունից...

ՋԵՄՄԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՍԵՐԲԻԱՆ ԴԱՏԻ ԿՏԱ ԿՈՍՈՎՈՆ ՃԱՆԱՉԱԾ ԵՐԿՐՆԵՐԻՆ

Սերբիայի կառավարությունը կազմելու է իրավաբանների թիմ, որը միջազգային դատական ատյաններում հայցեր կհարուցի Կոսովոյի անկախությունը ճանաչած պետությունների նկատմամբ: «Տանյուգ» գործակալությունը հաղորդում է, որ համապատասխան որոշումն ընդունվել է նախագահ Բորիս Տադիչի ղեկավարությամբ երեքշաբթի օրն անցկացված Ազգային անվտանգության խորհրդի նիստում: Վարչապետի խորհրդական Բրանիսլավ Ռիստիվոեւիչը հայտարարել է, որ Սերբիան հայցերով դիմելու է Հաագայի միջազգային դատարանին, ըստ որում ԱՄՆ-ի դեմ հայց ներկայացվելու է «ամենասեղմ ժամկետներում»: Նրա խոսքերով, եթե ԱՄՆ վարչակազմը չեղյալ չհայտարարի Կոսովոն ճանաչելու իր որոշումը, ապա Սերբիան ԱՄՆ-ի դեմ դատեր կհարուցի «միջազգային բոլոր դատական ատյաններում»:

Սերբիայի ղեկավարությունն ընդհանուր առմամբ դրական գնահատական է տվել փետրվարի 21-ին Բելգրադում զանգվածային ցույցերի եւ անկարգությունների ժամանակ ոստիկանության ձեռնարկած գործողություններին: Այդ օրը հրկիզվել էին ԱՄՆ-ի եւ Խորվաթիայի դեսպանատները, արձանագրվել էին մի շարք այլ միջադեպեր: Անցյալ օրը հայտնի դարձավ, որ Ջորջ Բուշի վարչակազմն ուսումնասիրում է ԱՄՆ դեսպանատան հրկիզման պատճառած վնասը հատուցելու պահանջով Սերբիայի իշխանություններին դիմելու հնարավորությունը: ԱՄՆ պետդեպարտամենտի մամլո ծառայության պետի տեղակալ Թոմ Կեյսին հայտարարեց, որ վնասի հատուցման պատեհության ընդունման դեպքում ամերիկացի իրավաբանները կձեռնարկեն համապատասխան քայլեր: **«Ազգ», 28.02.2008թ.**

ՄԱՐՏԻԿ. ԽԻԶԱԽ ՋԻՆՎՈՐԻ ՀԱՅՐ

ԺՈՐԱ ՃԱՂԱՐՅԱՆ

Արցախյան շարժում…

Քանի՞ քանիսը զգացին պայքարի կարևորությունն ու անհրաժեշտությունը և, թողնելով ընտանեկան իրենց ջերմ ու խաղաղ կյանքը, մեկնեցին ռազմադաշտ՝ թշնամուց փրկելու հող հայրենին՝ համայն հայության ծվատված բնօրրանից մի փոքրիկ կտոր: Այս ամենը գիտակցող հազարավոր հայ քաջորդիներից մեկն էր նաև Ժորա Ճաղարյանը, ով ոտքի ելավ, երբ Արցախյան ազատամարտի մարտակոչը հնչեց և տուն վերադարձավ հաղթանակած, կնքված զինադադարից հետո միայն:

Ժորա Ճաղարյանը ծնվել է 1950-ին Կարմիրի շջանի Վահան գյուղում: Ամուսնացած է, ունի երկու որդի:

Նա ազատամարտի առաջին իսկ օրվանից համալրեց ՀԱԲ-ի շարքերը: Մասնակցեց Նոյեմբերյանի շրջանի գյուղերի ազատագրմանը: Ապա՝ Գորիսի՝ Կոռնիձոր և Տեղ, Եղեգնաձորի՝ Խաչիկ և իր ծննդավայր Վահան գյուղերի կռիվներին՝ ցուցաբերելով արիություն, զգոնություն և մեծ նվիրում: 1992թ. դեկտեմբերին Ռիմիկ Մարտունյանի հրամանատարությամբ Ժորան մասնակցեց Մարտակերտի շրջանի Մատաղիսի, Թալիշ գյուղերի կռիվներին: Նրանց ջոկատը հետագայում ձևավորվեց որպես 5-րդ բրիգադ, որի հրամանատարությունը ստանձնեց Մանվել Գրիգորյանը:

Ժորա Ճաղարյանը (ինչպես նրա շատ ու շատ ընկերները) ռազմադաշտ մտավ որպես կամավորական: Հետագայում ռազմական փորձն ու հմտությունը նրան հասցրեցին հրանոթա-հրթիռային ծառայության պետի ավագ օգնականի պաշտոնին:

Պատերազմի ավարտից հետո նա ծառայությունը շարունակեց էջմիածնի Ուռի գնդում՝ որպես ծառայության պետ: 2001-ին լեյտենանտի կոչումով անցավ թոշակի, հետագայում ստացավ ավագ լեյտենանտի կոչում: Ժորա Ճաղարյանն արժանացել է 5-րդ բրիգադի շքանշանի, ԵԿՄ-ի հուշամեդալի, Արցախի «Մայրական երախտագիտություն» և «Վազգեն Սարգսյան» մեդալների, ինչպես նաև ներկայացված է «Արցախի կառավարական մեդալի»:

Պատերազմում ապրած և տեսած ծանր ու դժվարին օրերից հետո Ժորա Ճաղարյանը չէր պատկերացնում, որ երբևէ կարող էր ապրել և տեսնել վատթարագույնը՝ զինվոր որդու հանկածահաս մահը…: Նրա կրտսեր որդին՝ Արամը, ծնվել էր 1979-ի հոկտեմբեի 19-ին, Երևանում: Սովորել Երևանի թիվ 186 միջնակարգ դպրոցում: Միջնակարգ կրթություն ստանալուց հետո նա ուսումը շարունակել է Կինոտեխնիկումում: Երեք տարի երգել է եկեղեցում: 1997-ի աշնանը զորակոչվել է բանակ: Արամը Մարտակերտում ծառայության էր անցել որպես հետախույզ և տիրապետել հետախույզին բնորոշ մասնագիտական գիտելիքներին:

1998-ի մայիսի 15-ի վաղ առավոտյան Արամը սովորականի պես հենակետում մարտական հերթապահություն էր անում: Լուսադեմին՝ հինգ անց երեսունի սահմաններում, նա և իր զինակից ընկերները նկատում են, որ 80 մետր սահմանի խորությամբ թփերը շարժվում են: Խիզախ քաջորդին շարժվում է այդ ուղղությամբ, պարզելու պատճառը, սակայն, թփերի մեջ նենգ թշնամու կողմից տեղադրված ականը պայթում է Արամի ոտքերի տակ: Ընկերները նրան տեղափոխում են Արցախի, այնուհետև մայիսի 21-ին Երևանի կենտրոնական հոսպիտալ:

Արամը միայն շնչում էր և երեք ամիս անգիտակից վիճակում նա միայն մեկ անգամ ոտքը շարժեց և ո՞վ գիտե թե, դրանով ինչ էր ուզում ասել…

«...Եվ այն ժամանակ, երե՛կ տակավին,
ո՞ւր էր աշխարհը և ի՞նչ էր անում,
ո՞ւր էր օրենքը հանուր մարդկության,
որ հանցապարտին չմահապարտեց...»:

Պարույր Սևակ, «Եռածայն պատարագ», էջ 304,

ՄԿՐՏԻՉ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ԵԽԽՎ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԹԵՐԻ ԴԵՒԻՍԻ ԱՅՑԸ ՀԱՅԱՍՏԱՆ

Ըստ ամենայնի, Թերի Դեւիսը ամենից շատ կարեւորում էր հենց Ղարաբաղի հարցը եւ հստակ հաշտության պատգամով էր եկել Հայաստան: Այդ մասին նա խոսեց նաեւ ասուլիսում՝ չմոռանալով հիշատակել, որ մինչեւ գլխավոր քարտուղարի պաշտոնը ստանձնելը, ինքը զեկույց է պատրաստել ԼՂ հակամարտության կարգավորման վերաբերյալ:

Սակայն պատասխանելով այն հարցին, թե ինչո՞ւ այս անգամ, ինչպես սովորաբար, Թերի Դեւիսը չդատապարտեց ԼՂՀ-ում անցկացված (ՏԻՄ) ընտրությունները, Թերի Դեւիսը պատասխանեց անհարկի համեմատությամբ. «Ղարաբաղի ռեժիմն աշխարհում ճանաչված չէ, եւ եթե ես չեմ դատապարտում ՏԻՄ ընտրությունը, ապա դա դեռ չի նշանակում, թե ճանաչում եմ այն: Պարզապես, ես չեմ ուզում ամեն առիթով դատապարտել մարդկանց: Եթե ես արձագանքեմ աշխարհում տեղի ունեցող համանման բաներին, ապա դրա համար գուցե ժամանակը չբավականացնի: Օրինակ, եթե որեւէ տեղ արվամոլների շքերթի արգելման հետ կապված հանրահավաք է, այդ դեպքերում պարտադիր չէ, որ ես ամեն անգամ հանդես գամ այդ արգելքը դատապարտող հայտարարությամբ: Լռությունը երբեմն անհամաձայնության լավագույն ձեւն է»:

Ստիպված էինք նկատել, որ Թերի Դեւիսն իր ելույթներում Ղարաբաղի, թեկուզ չճանաչված, ղեկավարությանը կոչում է «ռեժիմ» մինչդեռ այդ բառը երբեք չի օգտագործում Կոսովոյի վերաբերմամբ: Մի՞թե գործ ունենք երկակի ստանդարտների հետ. ինչո՞վ է տարբերվում Կոսովոյի ալբանացիների ինքնորոշման իրավունքը Ղարաբաղի հայերի իրավունքից: «ՀՀ»-ի այս հարցին ի պատասխան՝ եվրոպացի պաշտոնյան ներկայացրեց իր մոտեցման հիմքերը, որոնք ամրապնդեցին երկակի ստանդարտների մասին մեր պատկերացումները. «Կոսովոյի ու ԼՂ-ի միջեւ կա մեծ տարբերություն: Կոսովոյում ՄԱԿ-ի առաքելությունն է եւ KFOR-ը, որում Եվրամիության զինվորներն են: Կոսովոյում չկա անջատողական ռեժիմ: Իհարկե, ես իրատես եմ, հասկանում եմ, որ Կոսովոյում ոմանք ցանկանում են անջատվել Սերբիայից, բայց դա կառավարությունը չէ: Այնտեղ ռեժիմ չէ, այլ ավանդական կառավարություն, որը հիմնված է ՄԱԿ-ի բանաձեւի վրա», - ասաց ԵԽԽՎ գլխավոր քարտուղարը՝ նորից ինչպես Ղարաբաղի, այնպես էլ Աբխազիայի, Մերձդնեստրի իշխանություններին կոչելով անջատողականներ:

ԾՈՎԻՆԱՐ ՆԱԶԱՐՅԱՆ

«ՆԵՄԵՍԻՍ»-Ի ԱՉՔԵՐՆ ՈՒ ԱԿԱՆՋՆԵՐԸ՝ ՀՐԱՉ ՓԱՓԱԶՅԱՆ

1922թ. մարտի 15, Բեռլին.

Հայ Ժողովրդի դահիճ Թալեաթ փաշայի մահվան տարելիցին ցավակցական ճառ էր արտասանում 25-ամյա մի երիտասարդ՝ Մեհմեդ Ալի անունով: Հուզված էին բոլորը, ճառն այնքան հուզիչ էր, որ հուզված էր նաև ճառի հեղինակը: Ներկաներից ոչ ոք չէր կասկածում, որ Մահմեդ Ալի անվան տակ թաքնված էր վրիժառու մի հայ երիտասարդ՝ Հրաչ Փափազյան անունով:

Հրաչ Փափազյանը (ավազանի անունը՝ Կարապետ) ծնվել է Յոզղաթ քաղաքում, որը գտնվում է Պատմական Հայաստանի Գամիրք գավառին կից: Մանկությունն անցել է Սեբաստիայում: 1914թ. ավարտել է Պոլսի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը, ապա՝ մտել սպայական վարժարան:

Հրաչը թուրք վտարանդիներին ներկայանալու բոլոր տվյալներն ուներ: Նա հիանալի գիտեր ոչ միայն խոսակցական, այլև գրական թուրքերենը, ծանոթ էր թուրքական սովորություններին, նիստ ու կացին: Սակայն միայն արտաքին կեցվածքը, լեզուն իմանալը քիչ էին: Եթե հանգամանքների բերումով կասկածվեր, «զտարյուն» թուրք լինելը հաստատող ի՞նչ ապացույց պիտի ներկայացներ: Չնախատեսված տապալումից խուսափելու համար որոշում է թլպատվել:

1921թ. նա Յոզղաթից թուրք մեծահարուստի որդու՝ Մեհմեդ Ալիի փաստաթղթերով Բեռլինում ներկայանում է վաթանդաշներին (հայրենակիցներին), որոնցից օգնություն է խնդրում իր հիվանդության ախտորոշման և բուժման համար քանի որ գերմաներենին չի տիրապետում:

…Գերազանց տիրապետելով թուրքերենին՝ Հրաչը թափանցեց վտարանդի թրքության որջը Բեռլինում՝ դառնալով Տրապիզոնի հայության դահիճ Ջեմալ Ազմիի տղայի՝ էքմելի գիշերային խրախճանքների ընկերը: Ինչպիսի ինքնատիրապետում և սառնասրտություն էր պետք, որպեսզի հայ վրիժառուն օրեր շարունակ լսեր թուրք դահիճների պարծենկոտ ու լպիրշ պատմությունները հայկական ջարդերի մասին: Ահա մի դրվագ Ջեմալ Ազմիի շնական (ցինիկ) հիշողություններից.

«Տրապիզոնի հայերուն երկսեռ առողջ ու սիրուն մանուկներուն զատեցի, մեկ քանիսին՝ 10-13 տարեկան, ևվեր տվի տղուս, իսկ մյուսներն ալ, կողովների ու սնդուկների մեջ տեղավորել տալով, ծովը թափել տվի:

- Պու սէնե խամսի չողալսըն (այս տարի թող ծուկը շատանա),- ցինիկ ծիծաղով իր հիշողությունն է ավետել մարդակեր հրեշը»: (Տե՛ս, Ջավեն Սապունճեան, «Հրաչ Փափազյան, կյանքն ու գործը», 1987, Հալեպ, էջ 16):

Հմտորեն քողարկվող Հրաչն այս ամենը լսում էր ու լռում... հանուն մեծ նպատակի իրագործման:

Ամիսներ շարունակ Բեռլինում գտնվող Հրաչին հաջողվում է գտնել նաև մյուս բորենու՝ Բեհաէդդին Շաքիրի որջը: 1922թ. մարտին Հրաչը ճշգրիտ տեղեկություն է հաղորդում Շահան Նաթալիին, իսկ վերջինս էլ Արամ Երկանյանին ու Արշավիր Շիրակյանին՝ թուրք դահիճների առաջիկա հանդիպման տեղի ու ժամանակի մասին:

Ամեն ինչ ընթանում էր ըստ ծրագրվածի, և թվում էր, թե ոչ մի վտանգ չի սպառնում, երբ հանկարծ, մի օր Ազմիի խանութ է մտնում Փափազյանի Պոլսի իրավաբանական ֆակուլտետի դասընկերներից մեկը: Հրաչը չի շփոթվում: Նրանց ծանոթացնում են: Երբ Հրաչը մեկնում է, նորեկ թուրքը կասկած է հայտնում, որ Ալին շատ նման է իր հայ ուսանող ընկերոջը, որի անունը Կարապետ է, և զգուշացնում է իր ազգակիցներին, որ տղան կարող է ծպտված հայ լինել:

Այդ մասին էքմելը պատմում է Հրաչին և առաջարկում է բաղնիքում ներկայացնել իր «զտարյուն» թուրք լինելու ապացույցը, ինչը և արվում է անհապաղ: Թուրքերի կասկածները փարատվում են, և Փափազյանը շարունակում է իրականացնել իր պարտականությունները:

…1922թ. ապրիլի 17-ին՝ Սուրբ Զատիկի գիշերը, Արամ Երկանյանն ու Արշավիր Շիրակյանը գնդակահարեցին Բ. Շաքիրին և Ջ. Ազմիին: Հաջորդ օրը՝ առավոտյան էքմելը հեռաձայնում է. «Մեհմեդ Ալիին» և հայտնում. «Կեչեն աքշամ. էրմենիլեր պապամը վէ Բ. Շաքիր պեյի վուրմուշլար…» (անցած գիշեր հայերը հորս ու Բ. Շաքիր պեյին են խփել) (տե՛ս, նույն տեղում, էջ 15): Հրաչը ցավակցում է էքմելին և շարունակում իր դիտումները, հատկապես արժեքավոր էին բոլշևիկյան Ռուսաստան փախած էնվերի և Ջեմալի մասին տեղեկությունները: Թուրք դահիճների ահաբեկումից մեկ ամիս անց՝ 1922թ. մայիսին, Հրաչը վերադառնում է Պոլիս, ապա՝ անցնում Հունաստան, Աթենքում ու Սալոնիկում մինչև 1926թ. զբաղվում է ազգային գործերով: 1926-ից մինչև կյանքի վերջը բնակվում է Սիրիայում:

Հայրենակիցների կողմից Սիրիայի խորհրդարանում երկու անգամ ընտրվում է երեսփոխան (1932 և 1943 թվականներին):

Ծավալում է բեղուն ազգանպաստ աշխատանք և սիրում էր հաճախ կրկնել՝ «Խոսքը արժեք չունի, այլ՝ գործը»: Մի արտահայտություն, որն այսօր էլ բոլորիս համար կարող է կարգախոս դառնալ: Կուսակցական լինելով հանդերձ, կիրք մտավորական ու ազնիվ նպատակ հետապնդող՝ Հրաչ Փափազյանը հաջողությամբ համագործակցում է հայկական բոլոր հասարակական և ազգային գործիչների ու նաև արաբական քաղաքական շրջանների հետ: Իբրև Սիրիայի խորհրդարանի պատգամավոր՝ նա մեծ հեղինակություն էր վայելում արաբ ղեկավարների մոտ: «Առանց Հրաչի կարծիքները հաշվի առնելու, երկրի համար կենսական կարևորություն ներկայացնող որևէ մեկ որոշում չենք տար»,- ասում է արաբ ղեկավար Ռահման Քեյալը (տե՛ս, նույն տեղում, էջ 6):

Հրաչ Փափազյանը, հակառակ ՀՅԴ բյուրոյի սառը վերաբերմունքին, մտերմիկ հարաբերություններ պահպանեց Շահան Նաթալիի և Արամ Երկանյանի հետ: Ավելին, նրա ջանքերով 1956-ին՝ Հալեպում, հրատարակվեց «սքանչելի երիտասարդ ահաբեկիչ» (իր խոսքերն են - Հ. Մ.) Արամ Երկանյանի «Այսպէս սպաննեցինք» հուշագրությունը:

…1939թ. Սիրիայում և Լիբանանում Ֆրանսիայի գերագույն կոմիսար Վեյգանը Հրաչ Փափազյանին առաջարկեց միանալ հակախորհրդային պայքարին: Հայտնի գեներալի առաջարկությունը Փափազյանը մերժեց:

…1960 օգոստոսի 17-ին, ծանր հիվանդությունից հետո, իր մահկանացուն կնքեց հայ ազատամարտի նվիրյալը: «Նրա մահով… ոչ միայն հայ ժողովուրդը, այլեւ Սուրիան ու ամբողջ արաբական աշխարհը կորսնցուց մեծ ղեկավար դեմք մը..., մենք զինք ճանչցանք 1943-ին, Սուրիական խորհրդարանի մէջ եւ անոր մէջ տեսանք ղեկավար մը բարձր արժեքներով օժտված, որ անհուն նվիրումով փառած էր հայրենիքի ազատագրության վեհ գաղափարին»: Ահա այսպես է բնութագրել Փափազյանին խորհրդարանի նրա նախկին գործընկերը՝ դոկտ. Ապտուլ Ռահման Քեյալը:

Հրաչ Փափազյանի կյանքն ու գործը այն միակ ուղին է՝ տաճար տանող միակ ճանապարհը. որով կուսակցական գործիչը կարող է դառնալ ազգային - պետական գործիչ:

ՀԱԿՈԲ ՄԱՆՋՅԱՆ

ՇԵՆԳԱՎԻԹ. ՎԵՐՑԻՆ ՄԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԱՌԹԻՎ

Վերջերս Պատմամշակութային արգելոց - թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայության տնօրեն Ս. Գ. Առաքելյանը ինձ տրամադրեց «Շենգավիթ. անտեսված կարևորագույն հուշարձան» վերնագրով հոդվածի պատճենը, որը, ինչպես երևում է հոդվածից, հեղինակը (Լիլիթ Ամիրյան) գրել է 2000 թվից Շենգավիթում պեղումներ իրականացնող հնագետ Հակոբ Սիմոնյանի տրամադրած «փաստերի» հիման վրա: Հոդվածը բերված «փաստերով» ճնշող տրամադրություն է փոխանցում, երբ պարզվում է, որ հերթական պեղումների ընթացքում հնագիտական շերտերի ոչ ճիշտ մեկնաբանությամբ աղավաղվում է հին աշխարհի հիրավի եզակի այս հուշարձանի պատմությունը: Թվում է, թե նպատակը մեկն է՝ ցույց տալ, թե այստեղ բոլոր ժամանակներում ապրել են հնդեվրոպացիներ (հեռանկարը պարզ է՝ հայեր) ինչը, կարծես մոդայիկ է դարձել մերօրյա շատ պատմաբանների համար: Հատկանշական է, որ սովետական ժամանակներում, տուրք տալով լենինգրադյան, մոսկովյան և այլ պատմագիտական դպրոցներին, նույնիսկ մեր շատ պատմաբաններ հայերին համարում էին եկվորներ, ինչը մշակված քաղաքականության արդյունք էր (մինչև Թ. Գամկրելիձեի և Վ. Իվանովի արժեքավոր մենագրությունը կամ դրան զուգահեռ մի շարք հետազոտողներ, նաև՝ տողերիս հեղինակը, հայերի տեղաբնիկությունը հաստատող մի շարք աշխատանքներ են հրատարակել): Հակառակ դրան, այսօր մեր պատմագիտության ու հնագիտության բնագավառում, փորձելով հակառակն ապացուցել, ինչը դրական երևույթ է և ճշմարտության բացահայտման փորձ, չնայած քիչ ուշացած, հաճախ ընկնում են հեքիաթների գիրկը՝ ներկայանալով մեկը մյուսից ավելի «հայրենասեր», դառնալով «պապից ավելի պապական»: Գուցե քաղաքական պատվեր են կատարում կամ ոչ լիարժեք մասնագետ լինելու արդյո՞ւնք է. թողնենք դա իրենց խղճին և անդրադառնանք իր տեսակի մեջ եզակի Շենգավիթ հուշարձանին, ավելի ճիշտ՝ վերոհիշյալ հոդվածին և նրանում տեղ գտած, մեղմ ասած, «անճշտություններին»:

Հոդվածում Շենգավիթը ներկայացվում է որպես «Հայաստանի, ինչպես նաև ողջ Առաջավոր Ասիայի բրոնզե դարի կարևորագույն հուշարձաններից մեկը…, որը ձևավորվել է մ.թ.ա. 5-րդ հազարամյակում և գոյատևել մինչև 3-րդ հազարամյակ»: Մինչ հոդվածագրին փաստեր ներկայացնելն ու հոդվածագրի կողմից հոդվածի շարադրումը կարելի էր գոնե չիմացությունը իմացությամբ փոխարինել՝ թերթելով հանգուցյալ հնագետ Ս. Սարդարյանի ուսումնասիրությունները, մի հնագետ, ով իր ողջ գիտակցական կյանքը նվիրել է այդ հուշարձանին (նա 1958-83թթ. ղեկավարել է Շենգավիթի պեղումները), լինելով իր ժամանակի խոշորագույն հնագետներից մեկը, որին մեծարում էր բրիտանացի նշանավոր գիտնական Լանգը և որի հետ հաշվի էին նստում անգամ թուրք հնագետները, նա լավ էր հասկացել Շենգավիթի «էությունը» և այս հուշարձանի համբավը համաշխարհային մակարդակի հասցրել, ամեն օր պայքար մղել հուշարձանը պահպանելու և սերունդներին փոխանցելու համար, իսկ հոդվածում անգամ նրա անունը չի հիշատակվում:

Արդեն իսկ V հազարամյակ նշելով պարզից էլ պարզ է դառնում, որ Շենգավիթը (հուշարձանի III և IV շերտերը) ոչ թե բրոնզեդարյան, այլ պղնձի դարում ստեղծված հուշարձան է, որի միայն I և II շերտերում է առկա հուշարձանի բրոնզեդարյան մշակույթը (III հազարամյակի սկիզբ - III հազարամյակի վերջ): Մի ճշտում ևս. Շենգավիթը ուշ պղնձեդարյան հուշարձան է, որի պղնձեդարյան մշակույթը թվագրվում է ամենավաղը սկսած IV հազարամյակի սկզբից (Ս. Սարդարյան): Պարսպից դուրս բացված դամբարանների մի մասը վերաբերում են Շենգավիթի III և IV շերտերին: Դրանք զույգային ընտանիքների տոհմական դամբարաններ են, որ վկայում են հայրական ամուր տոհմային ընտանիքների մասին (հայրիշխանությունը Հայաստանում ձևավորվել է IV հազարամյակի վերջերին):

Հոդվածի մեկ այլ մասում կարդում ենք. «…որոշակի տվյալներ կան, որոնց համաձայն, այստեղ բնակվողները եղել են ոչ թե խուռիներ, ինչպես մինչ այժմ ընդունված է…, այլ՝ հնդեվրոպացիներ: Իսկ դա արդեն մեզ ուղղակիորեն կապում է հին շենգավիթցիների հետ,- ասում է Հ. Սիմոնյանը»:

Այն, որ խուռիները Հայկական լեռնաշխարհի բնիկներ են և մեծ դեր են խաղացել թե՛ հայ և թե՛ այլ ժողովուրդների կազմավորման ընթացքում, պարզ է և ոչ ոք չի կարող ժխտել: Նույնիսկ հայ նախարարների գահնամանակում կան մի շարք նախարարական տներ, որ խուռիական ծագում ունեն և մեծ դեր են խաղացել մեր նախնիների կյանքում: Բայց փորձել հրաժարվել դրանից, ցույց տալու համար, թե այս տարածքը ի սկզբանե հնդեվրոպական էր, հայկական, մեղմ ասած, անմտություն է, հակագիտական, կամ էլ այս ամենը հնագիտական շերտերը «շփոթելու» և մշակույթի տարբերությունը չնկատելու արդյունք է:

III հազարամյակի կեսերին Արարատյան դաշտի վաղ-բրոնզեդարյան բլուր-հուշարձանների մեծ մասում կյանքը դադարել է (Ս. Սարդարյան և ուրիշներ): Մեծ թվով բնակավայրեր ավերվել են եկվոր ցեղերի (սրանք հարավ-արևմտյան Հայաստանի կողմերից շուրջ 2300թթ. մ.թ.ա. դեպի հյուսիս և հյուսիս-արևելք տեղաշարժված հնդ-արիական՝ սուբարիական-հայկական ցեղերն էին, գունազարդ խեցեղենի կրողները … Զ. Մ.) ճնշման տակ և տեղի՝ շենգավիթյան մշակույթը կրողներին ստիպել են դիմել տարաբնակեցման: Նրանք թափանցել են հալաֆյան, սիրիա-պաղեստինյան գունազարդ խեցով բնակավայրերը, ուր, այս ժամանակաշրջանից սկսած, շենգավիթյան մշակույթի հետքերը համատարած բնույթ են ձեռք բերում:

Շենգավիթի ավերված բնակարանների կավե պատերի վրա, Ս. Սարդարյանի վկայությամբ, պահպանվել են հրդեհի հետքեր. ավերակների վրա բացվել է նաև մի դամբարան՝ երեք կմախքներով, որոնցից մեկի մատին ոսկե մատանի է եղել, իսկ մյուսի կողքին՝ Թեփե-Սիալկի թեյնիկաձև ամաններին տիպի խեցի: Դամբարանը պատկանում էր այն ժամանակաշրջանին, երբ Շենգավիթի բնակությունը դադարել էր (մ.թ.ա. III հազարամյակի վերջ կամ գուցե II հազարամյակի սկիզբ, երբ զանգվածաբար տարածվում էր գունազարդ խեցին), ինչպես ցույց է տալիս վաղ բրոնզի վերին շրջանի շերտերից պեղված փայտածխի ռադիոածխածնային տարալուծումը - Ս. Սարդարյան):

Շենգավիթի պատմության այս վերջին շրջանը անչափ կարևոր է շենգավիթյան մշակույթը կրողների՝ հնդ-արիական, սուբարիական-հայկական ցեղերի ճնշման տակ դեպի հարավ և հարավ-արևմուտք ու վերջիններիս՝ դեպի հյուսիս և հյուսիս-արևելք տեղաշարժերի մասին, ինչը փաստված է նաև դիցաբանական, տոպոնոմիական տվյալներով, որի մասին, ի վերջո, գրել է նաև Մ. Խորենացին:

Մնում է պեղումների ժամանակ խստորեն պահպանել հնագիտական շերտագրությունը և ինչ - ինչ նպատակների համար հեքիաթների գիրկը չընկնել: Իսկ եթե դա չիմացության արդյունք է…, հարկ է գիտակ մասնագետներին կցել այս անգնահատելի նշանակություն ունեցող հուշարձանի պեղման աշխատանքներին, հակառակ դեպքում՝ պեղումները պետք է դադարեցնել՝ հուշարձանը թողնելով հաջորդ, ավելի ունակ սերունդներին:

Զ. Պ. ՄՈՒՂՈՒՀՅԱՆ
Արևելագետ, պատմաբան - հնագետ

ՀԱՅԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԳՐՔԵՐ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

Անցնող տարիների ընթացքում Գերմանիայում հրատարակվել է հայերին և Հայաստանին առնչվող 5 գիրք, որոնց մասին ստորև տալիս ենք հակիրճ տեղեկություն:

Առաջին երեքի հեղինակները թուրքեր են.

Շահեն Ալի Սոյլեմեզօղլու, «Մեդալիոնի մյուս կողմը», 2005թ., Քյոլն, «Օնել» հրտ., 254 էջ:

Հեղինակը փորձել է պարզաբանել 1915-ի ողբերգության պատճառները՝ հիմք ունենալով եվրոպական, ամերիկյան և հայկական աղբյուրները: Գիրքն ամբողջությամբ ողողված է մեզ՝ հայերիս, հայտնի կեղծիքներով: Գրքի բերած միակ նորությունը գերմաներենով գրված լինելու փաստն է:

Չեմ Օզգյոնոլ, «Մի ցեղասպանության առասպել. Լեփսիուսի փաստաթղթերի քննական ակնարկ և գերմանացիների դերը «Հայկական հարցի» նկատմամբ անցյալում և ներկայում», 2006թ., «Օնել» հրտ., 325 էջ:

Այս գիրքն իր ոգով և բնույթով վերը նշված գրքի շարունակությունն է, միակ տարբերությունն այն է, որ սրա առաջաբանը գրել է ոմն գերմանացի դոկտոր Ուդո Վիցենզը, ըստ որի՝ «1945-46թթ. վտարվել են 15 միլիոն արևելյան գերմանացիներ (Լեհաստանից և Չեխիայից - Ժ. Ք.) շուրջ 2 միլիոն զոհերով, և ոչ ոք չի խոսում ցեղասպանությունից», այնուհետև հանգում է «ցնցող» եզրակացության՝ «հայերի վերաբնակեցումն էլ արդար չի լինի ցեղասպանություն կոչել»: Հեղինակը գրքին առանձնահատուկ կշիռ տալու համար ինքն իրեն գերմանացի-թուրք պատմաբան է կոչում: Այս գիրքը, ինչպես նախորդը, հրատարակվել է «Օնել» հրատարակչության կողմից, տպագրության վայրը հայտնի չէ: Ինչ վերաբերում է «Օնել» հրատարակչությանը, ապա սա թուրքական մի անհայտ հրատարակչություն է, և բացառված չէ, որ երկու գրքերն էլ թուրքական պետության պատվերով են գրվել և հրատարակվել:

Ալփերեն Չելջք, «Հայ ժողովրդի ողբերգությունը, 1915-1918», 2006թ., Վուրցբուրգ, 119 էջ:

Հեղինակը իրավաբանության ուսանող է, իսկ հրատարակչությունը՝ անհայտ: Գիրքը հենված է կեղծիքի վրա և լի է հակասություններով, նախորդ երկուսի նման չի ներկայացնում գիտական արժեք և ավելի շուտ գրված է Գերմանիայում բնակվող 2,5 միլիոն թուրքերի համար:

Եորգ Բեուլին և Ադրիան Քլեններ, «Ցեղասպանությո՞ւն, թե՞ վերաբնակեցում», 2006թ., Համբուրգ, «Փափիռոսսա» հրտ., 410 էջ:

Գիրքը՝ իր 5 քարտեզով, ցեղասպանության մասին լուսանկարներով, հիմնված է համոզիչ փաստերի վրա: Գրքի առաջին մասում տեղ են գտել հայոց պատմության և 1915-16թթ. ցեղասպանության ընթացքին վերաբերվող հարցեր, ինչպես նաև ցեղասպանության պատճառների վերլուծություն: Երկրորդ մասում նյութերը դասավորված են ըստ աղբյուրների: Թուրքական տեքստերի հետ միասին ներկայացվում է նաև հայ, ամերիկացի և գերմանացի ականատեսների վկայությունները: Առաջին անգամ են տպագրվում և արժեքավոր են հատկապես այն ուսումնասիրողների համար, ովքեր զբաղվում են Հայոց ցեղասպանության մեջ Գերմանիայի դերակատարության խնդրով: Այս գրքի մասին մոտ ապագայում գրախոսականով հանդես կգա դոկտոր Թեսսա Հոֆմանը: Գիրքը պատշաճ պատասխան է, վերը նշված 3 թուրք հեղինակներին և արժանացել է լայն հասարակության և հատկապես՝ երիտասարդ ուսումնասիրողների հավանությանը:

Ութե Ֆրիզն և Մարկոս Վուրմլի, «Կովկաս, մշակութային ցնցում», 2006թ., Բիլեֆելդ, «Փեթեր Ռումփ» հրտ., 526 էջ:

Արդարացի են գերմանահայերի և նրանց գերմանացի բարեկամների վրդովմունքը այս գրքի նկատմամբ, քանի որ այն Հայաստանի նկատմամբ փորձում է ձևավորել խիստ բացասական վերաբերմունք: Մեզ՝ հայերիս, համար սովորական երևույթ է դարձել, որ ոչ իրավասու մարդիկ մեր մասին գրքեր գրեն, անպետք խորհուրդներով մեզ «խելքի բերեն»: Այնուամենայնիվ, այս գիրքը գերազանցում է իր բոլոր նախորդներին:

Ութե Ֆրիզնի և Մարկոս Վուրմլիի (այսուհետ՝ Ֆ./Վ.) հրատարակած այս գիրքը ո՛չ տեղեկատվական է, ո՛չ էլ առարկայական: Եթե այսպիսի մի գիրք հրատարակվեր հրեաների կամ թուրքերի մասին, հեղինակները պատասխանատվության կկանչվեին:

Ադրբեջանական «երիտասարդ» ազգն է միակ փառաբանվածը գրքում, որի «հին պատմությանը», հեղինակների վկայությամբ, կարելի է ծանոթանալ արցախյան պեղումներից և Գուբիստանի քարայրների ժայռապատկերներից:

Եթե բոլոր սխալները, անճշտություններն ու վրիպումները քննարկվեին, կստացվի իր ծավալով ավելի մեծ գիրք, քան այս գրքույկն է, ուստի, սահմանափակվենք միայն որոշ կետերի ներկայացումով առանց մեկնաբանությունների:

- Արևմտյան Հայաստանին տրված է «Արևելյան Անատոլիա» անվանումը, որը որոշ եվրոպացի «գիտնականներ» թե՛ անցյալում և թե՛ ներկայում կրկնում են քաղաքական նկատառումներով:

- «...Ուրարտացիները սակայն Հայաստանի առաջին վերաբնակիչները չէին...» և «...նրանց հազիվ թե կարելի է հայ կոչել...»:

- Մ. Խորենացու «Հայոց պատմությունը» համարում են հնարած մի բան, որպեսզի հիմնավորեն հետևյալը՝ եթե չի եղել հայ պատմագրություն, չի եղել նաև հայ ազգ, հետևաբար նաև հայկական պետականություն, եղել են միայն առանձին հայկական համայնքներ:

- Հիտլերի՝ 1939թ. օգոստոսի 22-ի Հայոց ցեղասպանության մասին մեջբերումը ևս խեղաթյուրված է: Չնայած որ բնագիրը գերմաներեն է, հեղինակները իրենց նեղություն չեն տվել ուսումնասիրել այն. ոչ թե «ո՞վ է խոսում այսօր հայերի մասին», այլ՝ «ո՞վ է խոսում այսօր հայերի բնաջնջման մասին» և շարժառիթը ոչ թե հրեաների ողջակիզումն էր, այլ նախատեսված հարձակումը Լեհաստանի վրա և սլավոնական ազգերի բնաջնջումը:

- Ֆ./Վ. բնավ ժլատ չեն քննադատելու և խորհուրդներ շռայլելու մեջ: Խորհուրդ են տալիս հայացք ուղղել դեպի ապագան, «քանի որ դեպի անցյալ ուղղված հայացքը արգելակում է հայ ժողովրդի շարժումը դեպի առաջ»:

- Ֆ./Վ. հայոց լեզուն որակում են որպես «ֆշշոց» և «շչոց»: «Հայերենը պատկանում է հնդեվրոպական լեզուների խմբին, բայց այնտեղ ունի մեկուսացած դիրքորոշում»:

- Արցախի մասին գրելիս՝ Ֆ./Վ. դարձյալ հենվում են այլոց կարծիքների վրա, այս անգամ խոսելով Սաադեթի և Հայկի անուններից, որոնց իսկությունը, անշուշտ, վիճելի է: Ոչ մի խոսք ժողովրդավարության, ազգերի ինքնորոշման իրավունքների մասին, հակառակը՝ հարկ եղած դեպքում էլ ստում են: Օրինակ՝ «...Ադրբեջանի նախագահ Հ. Ալիևը պաշտոնապես ներողություն է խնդրել: Սպանության հարցում ադրբեջանցի սպան որևէ հրահանգ չի ունեցել: Նրա արարքը դատապարտելի է...»:

«Հայաստանում տիրում է ուժեղ հակասեմականություն, թեպետև երկու երկրների պատմությունները իրար շատ նման են»:

Ամփոփում

«Կովկաս, մշակութային ցնցում» գրքույկը անհեթեթ, եվրոկենտրոն գոռոզ դիրքերից գրված, նախապաշարված մի գրքույկ է, որն արժանի չէ, անգամ, ընթերցելու: Աստված հեռու պահի ընթերցողին այս տեսակ գրքերից և հեղինակներից: Աշակերտներն ափսոս են, որ տիկին Ֆրիզնի մոտ գերմաներեն սովորեն, իսկ մեր միջատները չեն ցանկանում դոկտ. Վուրմլի կողմից հայտնաբերվել և ուսումնասիրվել: Ինչ մնում է պատմության կեղծարարությանը, կեղծիքին ու ապատեղեկատվությանը, ապա այն, իսկապես, հնարավոր է կասեցնել միայն իրավական միջոցառումներով:

ԺԻՐԱՅՐ ՔՈՉԱՐՅԱՆ
Բեռլինի Ազատ Համալսարան

ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հետխորհրդային ժամանակաշրջանում, անկախության գործընթացների պայմաններում հայկական պատմագիտության մեջ տեղի ունեցան լուրջ տեղաշարժեր, այսպես կոչված «սպիտակ էջերի» և, հատկապես, Հայաստանի Առաջին Հանրապետության պատմության, նրա հետ կապված մի շարք հիմնախնդիրների ուսումնասիրության ուղղությամբ: Այդ առումով արդիական մեծ հնչեղություն ձեռք բերեցին այն հարցերը, որոնք կապված էին Առաջին Հանրապետության անվտանգության համակարգի ստեղծման ու գործունեության հետ, որոնք բոլորովին չէին ուսումնասիրվել, և ըստ այդմ արժանվույն չէին գնահատվել ոչ հետախուզության և հակահետախուզության, ոչ էլ Ներքին Գործերի նախարարության համապատասխան ուժային կառույցների և այլևայլ մարմինների դերը հայկական պետականության կայացման, երկրի անվտանգության և ազգային-պետական զանազան հիմնախնդիրների լուծման մեջ: Այդ հարցում բացառիկ նշանակություն ունի պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ **Վանիկ Վիրաբյանի «Հայաստանի Հանրապետության պետական անվտանգության համակարգի ստեղծումը և գործունեությունը (1918-1920թթ.)», «Լուսակն» հրատ., Երևան, 2006, 288 էջ ,** մենագրությունը, որը շարադրված է հարուստ և, մեծամասամբ, առաջին անգամ գիտական շրջանառության մեջ մտցված արխիվային փաստաթղթերի հիման վրա:

Նշված մենագրությունը հայ պատմագիտության մեջ տվյալ հիմնախնդրի վերաբերյալ առաջին ամբողջական և ծավալուն աշխատանքն է, որը լույս է սփռում ինչպես պետական անվտանգության կարևորագույն օղակի գործունեության, այս կամ այն օղակի լուսաբանման վրա, այլև հնարավորություն է տալիս ավելի բազմակողմանի պատկերացում կազմել տվյալ ժամանակաշրջանի ռազմաքաղաքական, պետական կառավարման, միջազգային դրության, դիվանագիտական այլ հարցերի վերաբերյալ: Այս առումով կարելի է պատմաբանի սույն աշխատանքը համարել նաև հիմնարար բնույթի աշխատություն:

Օգտագործելով արխիվային նորահայտ վավերագրեր և բազմաբնույթ գրականություն, հեղինակը ընթերցողի ուշադրությանն է ներկայացրել հիշարժան էջեր հայկական հետախուզական ծառայության գործունեության պատմությունից, տեղին մեջբերելով Հայաստանի Առաջին Հանրապետության լավագույն հետախույզներից մեկի՝ Տիգրան Դևոյանցի աքսիոմատիկ խոսքը, ըստ որի հետախուզությունը ամեն մի լուրջ «պետության աչքն ու ականջն է» (էջ 21-43):

Առաջին Հանրապետության հետախուզության և ՆԳՆ մարմինների մասին իր այս ուշագրավ աշխատության մեջ հեղինակը կարևորել է այն տքնաջան աշխատանքը, որը կատարվել է նորաստեղծ պետության պետական ու ռազմաքաղաքական գործիչների, զինվորական այրերի կողմից անվտանգության իրական ու գործող համակարգ ստեղծելու ուղղությամբ և, ըստ այդմ, վերհանվել է այդ գործի կազմակերպման իրական ռահվիրաներ՝ գնդապետներ Մ. Զինկևիչի, Ալ. Շնեուրի, կապիտաններ Տ. Դևոյանցի, Վ. Մուրադյանի, Մ. Դոդոխյանի, Հովհան Խան-Կոտուրսկու (Արտեմի Նիկիտայի Հովհաննեսով) և այլոց հրաշալի ու հերոսական կերպարները, որոնք այսօրվա երիտասարդ սերնդի հայրենասիրական ոգով դաստիարակության տեսանկյունից ունեն անանց նշանակություն, քանզի այդ մարդիկ եղել են իրենց գործին ու գաղափարին, հայրենիքին անսահմանորեն նվիրված ու հավատարմորեն ծառայող անձինք: Հեղինակը ընգծում է, որ աշխատելով ֆինանսական-կադրային ահռելի սովի պայմաններում, այդ մարդիկ մշտապես մտահոգվել են ռազմական շինարարության, այդ թվում՝ անվտանգության կարևորագույն օղակներից մեկի՝ հետախուզության և հակահետախուզության կազմակերպման խնդիրներով, աննկուն կերպով հաղթահարելով տարաբնույթ դժվարություններն ու խոչընդոտները, անշուշտ ունենալով նաև սայթաքումներ և վրիպումներ, որոնք Առաջին Հանրապետության կայացման գործընթացների, խճճված ռազմաքաղաքական իրավիճակի պայմաններում բացատրելի են և պատճառաբանված:

Դեռևս 1918թ. օգոստոսի 13-ին Հայաստանի Հանրապետության նախարարների խորհուրդը, լսելով զինվորական նախարարության իրեն միջոցներ բաց թողնելու միջնորդության վերաբերյալ հարցը (ավիացիայի, հետախուզության և ռադիոհեռագրի վրա ծախսված գումարները ծածկելու համար), որոշում է կայացնում հավանություն տալ ձեռնարկված քայլերին, ինչպես նաև կառավարության վարկի հաշվին բաց թողնել 6 մլն ռուբլի՝ ա) չնախատեսված ծախսերի համար հատկացնելով 20 հազար ռուբլի, բ) հետախուզության համար 20 հազար ռուբլի, գ) հակահետախուզության համար՝ ևս 20 հազար ռուբլի:

Ասենք, հետագայում ևս, թեկուզ և սուղ, սակայն հատկացումները շարունակվում են: Այս խոսուն փաստը նաև հերքում է այն թյուր տեսակետը և պատկերացումը, թե իբր Առաջին Հանրապետությունը հատուկ՝ հետախուզություն և հակահետախուզություն չի ունեցել: Հետախուզությունը դեռևս 1918թ. երկրորդ կեսին կատարել է իր առաջին, դժվարին, սակայն պատվաբեր ու հայրենիքի անվտանգության ապահովման տեսանկյունից անհրաժեշտ կազմակերպական քայլերը, փորձելով դառնալ լուրջ ծառայություն: 1919թ ապրիլի 14-ի Զինվորական գերատեսչության հայտնի հրամանով ՀՀ գլխավոր շտաբի Հետախուզական և հակահետախուզական բաժանմունքի ստեղծման հարցն արդեն իրականություն էր, լծվելով տարաբնույթ խնդիրների լուծմանը, ինչպես նաև քիչ թե շատ վստահ գործողություններ մշակելով թշնամական մեքենայությունների կանխարգելման ու վերացման համար: ՀՀ հետախուզական ծառայությունը այդ գեոպոլիտիկ տեսանկյունից բարդ ու խճճված ժամանակաշրջանում գտնվում էր կազմակեպական ոչ միանշանակ ու հակասական գործընթացների մեջ, չունենալով անհրաժեշտ բավարար միջոցներ, այն դեպքում, երբ թշնամական որոշ պետություններ իրենց համապատասխան հետախուզական ծառայություններին հեղեղում էին ֆինանսական-դրամական լուրջ միջոցներով, ձեռքի տակ ունենալով նաև ավելի փորձառու ու թրծված կադրեր՝ վստահորեն հենվելով, իրենց պետականությունների դարավոր փորձի վրա:

Անդրադառնալով ֆինանսական հարցերում առաջացած դժվարություններին, հեղինակը փաստեր է բերում պետական ապարատում արմատավորված, խորացած բյուրոկրատական քաշքշուկների և չինովնիկների կամայականությունների մասին, ընդգծելով, որ աշխատանքները հետախուզական համակարգի բնագավառում կարող էին ավելի արդյունավետ և նպատակասլաց լինել, եթե չլինեին վերը նշված այլանդակ երևույթները, անհարկի քաշքշուկները և անհոգի վերաբերմունքը պետական կարևոր գործի նկատմամբ, և որոնք հետախուզական ծառայությանը կանգնեցնում էին փակուղու առաջ՝ էապես կաշկանդելով հայ հետախույզների գործունեությունը (էջ 59, 60-94):

Եվ չնայած ահռելի դժվարություններին, 1918-20թթ. հետախուզական ծառայությունը ձեռք էր բերում ազգա-

յին անվտանգության ու պաշտպանության տեսանկյունից շատ կարևոր տվյալներ, որոնք ներկայացվում էին ռազմական, ներքին և արտաքին գործերի նախարարություններին, ինչպես նաև նախարարների խորհրդին և վարչապետին, որոնք միշտ չէ, որ անհրաժեշտ լրջությամբ և վստահությամբ էին վերաբերվում ներկայացված հետախուզական ամփոփագրերին, դրանք զմռսելով իրենց կաբինետների գզրոցներում:

Նշվում է, որ այդ տեղեկություններից ու ամփոփագրերից շատերը պարունակում էին տեղեկատվություն ինչպես Կարմիր Բանակի տեղաշարժերի, Վրաստանում և Ադրբեջանում ընթացող գործընթացների, այնպես էլ Թուրքիայում և հարակից տարածքներում տեղի ունեցող իրադարձությունների, անգլո-ամերիկյան ռազմական ներկայացուցչությունների գործունեության և այլ կարևոր պատմական իրադարձությունների ու անցքերի մասին (էջ 95-112, 112-182): Հարկ է, սակայն, արձանագրել, որ Հայաստանի Առաջին Հանրապետության հետախուզությունը չկարողացավ պատնեշվել 1920թ. թուրք-հայկական պատերազմի ամենակուլ հետևանքներից, որի մեղքը ծանրանում է ոչ միայն վերջինիս, այլև ռազմա-քաղաքական շրջանների վրա, որոնք անհեռատես գտնվեցին, անհրաժեշտ հոգատարություն և ուշադրություն չցուցաբերեցին սեփական թեկուզ և երիտասարդ, սակայն նվիրյալ հետախուզական ծառայության հայթայթած փաստերին, որոնք բավարար էին լրջմիտ ռազմա-քաղաքական եզրահանգումների համար՝ հնարավորինս ձերբազատելու ՀՀ բանակին և ժողովրդին այլևայլ սայթաքումներից ու սխալներից:

Հեղինակը հերքում է այն թյուր տեսակետները, թե հայկական հետախուզական ծառայությունը աղոտ պատկերացում է ունեցել թուրքերի տեղաշարժի մասին հայ-թուրքական սահմանագծում, ընդհակառակը, զանազան վավերագրերի մեջբերումով փաստում է, որ հայ հետախույզները հավաքել են որոշակի կարևոր տվյալներ այդ մասին (իրենց բոլոր թերություններով ու հակասական շերտանստվածքով հանդերձ), որոնք, սակայն, լիովին ու լիարժեքորեն չհաշվառվեցին, ավելի ճիշտ՝ անտեսվեցին կուսակցական-քաղաքական ու պետական վերնախավի կողմից, քանզի իշխում էր Սևրյան շլացման ու ոգևորության ոգին, ինչն էլ հանգեցրեց Հայաստանի Հանրապետության աշխարհագրական մեկուսացմանը, Ազգերի Լիգայի երկրների կողմից դավաճանական լքմանը և վերջին հաշվով՝ սովետիզացիային:

Այնպես, որ ըստ հեղինակի, զուր են որոշ հեղինակներ և պատմաբաններ 1920թ. թուրք-հայկական պատերազմում ունեցած աղետալի անհաջողությունները պատճառաբանում միայն հետախուզության գործունեության բացակայությամբ, ռազմաքաղաքական իրավիճակի մասին անտեղյակության և պատերազմի հանկարծակիության մասին ոչ ճիշտ գաղափարներով ու վարկածներով, ինչպես նաև բոլոր մեղքերը բոլշևիկների վրա բարդելու, փոխանակ սեփական սխալները վերհանելու և անաչառությամբ դատելու պատմական այդ կարևոր անցքերի վերաբերյալ (էջ 112-182):

Այս աշխատանքը մեզ հնարավորություն է տալիս ոչ միայն իրական պատկերացումներ ունենալ Առաջին Հանրապետության անվտանգության

համակարգի կարևորագույն կառույցներից մեկի՝ զինվորական նախարարության Գլխավոր շտաբում գործող Հետախուզական և հակահետախուզական բաժանմունքի և նրա կողմից ծավալված բազմապլան գործունեության մասին, այլև հաղորդակից դառնալ ժամանակաշրջանի աշխարհաքաղաքական իրավիճակին ու նրանից ծնված բարդություններին, էապես ընդլայնելով մեր մտահորիզոնը՝ այն լրացնելով հետախուզության և հակահետախուզության մասին արխիվային տվյալներով:

Պատմաբանը հատուկ նշում է, որ 1918-20թթ. քայլեր են ձեռնարկվել արտաքին գործերի նախարարության և Հայաստանի Առաջին Հանրապետության հատուկ ծառայությունների միջև աշխատանքները համաձայնեցնելու և ուղղորդելու ուղղությամբ, բերելով փաստ, որ 1920թ. մայիսի 8-ին նախարարների խորհուրդը, լսելով զինվորական նախարարի զեկուցումը արտասահմանում հետախուզական և հակահետախուզական գործի մասին, որոշում է կայացնում այդ գործունեությունը ենթարկել ՀՀ դեսպանների հսկողությանը (էջ 31-32): Փուլ առ փուլ գործադրվում էին ջանքեր անվտանգության համակարգի այդ կարևորագույն օղակների՝ հետախուզական ծառայությունների աշխատանքները կազմակերպելու և ավելի լիարժեք դարձնելու համար: Արդեն 1919թ. ապրիլի 8-ին ՀՀ Նախարարների խորհրդի նիստում լսվում է զինվորական նախարարի զեկուցումը Թիֆլիսում և Բաքվում Հայաստանի դիվանագիտական միսիաներին կից զինվորական ներկայացուցչություններ հիմնելու մասին հարցը, որին դրական լուծում է տրվում (էջ 32-52):

Մենագրության մեջ ոչ միայն հետաքրքրական փաստեր են բերվում Հայաստանում թուրքական, ադրբեջանական, անգլիական և այլ հատուկ ծառայությունների գործունեության մասին, այլև, մասնավորապես, ընդգծվում է, որ հայկական շահերին հատկապես վնասակար են եղել անգլիական զինվորական և հատուկ ծառայությունների գործունեությունը և կեցվածքը (էջ 95-112, 182-197): Արխիվային փաստաթղթերի և այլ վավերագրերի միջոցով հաստատվում է, որ ՀՀ հետախուզական ծառայությունը իր ճյուղավորումներն է ունեցել Հայաստանի տարբեր շրջաններում, այդ թվում Լեռնահայաստանում (Սյունիք-Զանգեզուր և այլուր) և փորձել է հակազդել օտար ծառայությունների գործունեությանը:

Ամփոփելով նշենք, որ հեղինակին հաջողվել է ստեղծել Հայաստանի Առաջին Հանրապետության հատուկ ծառայությունների՝ հետախուզության և հակահետախուզության ՆԳՆ մարմինների ստեղծման և գործունեության վերաբերյալ համակողմանի մի աշխատություն, որն իհարկե կարիք ունի հետագա լրամշակման, հղկման և հարստացման:

Կարելի է անվարան եզրակացնել, որ պատմաբան Վանիկ Վիրաբյանը Հայաստանի Առաջին Հանրապետության անվտանգության համակարգի, մասնավորապես, հետախուզության պատմությանը նվիրված սույն մենագրությունը իրենից լուրջ գիտական նորույթ է ներկայացնում, ունի որոշակի պատմագիտական արժեք, և թեմայում շոշափված հարցախմբի նկատմամբ ունեցած նորովի մոտեցման շնորհիվ կարող է միանգամայն արժանիորեն իր տեղը գրավել հայկական պատմագրության մեջ, հարստացնելով և թարմացնելով այն, ինչպես նաև լրացնելով այն բացը, որ կա Հայաստան Առաջին Հանրապետության վերաբերյալ պատմագրության մեջ:

ՄԵՐ ԴԺՎԱՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ նախագահի մրցանակի գրականության հանճնաժողովի նախագահ, Գրողների միության նախագահության անդամ, ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն, գրականագետ, դոկտոր պրոֆեսոր, բազում գրքերի հեղինակ («Գեղարվեստական թարգմանությունը և ժողովուրդների մերձեցումը», «Поэт и перевод», «Գեղարվեստական պատում», «Մարդը ներսից», «Թումանյանի պոետիկան և հայ ժողովրդական ակունքները», «Չարենցի պատմությունը», «Սասնա Մհեր էպոսի պոետիկան», «20-րդ դարի հայ գրականություն», «Հայոց նորագույն գրականություն», «Պատմության ուրվագիծ», «Պատմության երգեհոնը») Ազատ Եղիազարյանը մերօրյա հայ գրականությանը տալիս է իր գնահատականը:

- Մենք այսօր ունենք շփոթված մշակույթ, շփոթված գրականություն, ինչը կապված է վերջին հարյուրամյակում մարդկության կյանքում տեղի ունեցող էական տեղաշարժերի հետ: Դեռևս 1930-ական թվականներին գերմանացի փիլիսոփա Շպենգլերն իր «Արևմուտքի մայրամուտը» (մեզ մոտ թարգմանում են «Եվրոպայի մայրամուտը») գրքում պնդում է, որ Եվրոպայի մշակույթը «մեռնում է»: Եվրոպական մշակույթի «մեռնելը» նաև մեզ համար է կարևոր խնդիր, որովհետև մենք կապված ենք եվրոպական մշակույթի հետ: Գրականությունը չի կարող հեշտությամբ հարմարվել այդ շրջադարձին, և քանի որ գրականությունն արտացոլում է մարդկային կյանքն ու մտածողությունը, այն ևս դառնում է շփոթված գրականություն:

- Որո՞նք են 20-րդ դարի մշակույթի, գրականության շփոթության պատճառները:

- Նախ, երկու մեծ պատերազմները հիասթափության զորեղ ալիք առաջացրին եվրոպական հասարակության մեջ: Շատ ու շատ պատկերացումներ, բարոյական արժեքներ արմատապես փոխվեցին: Մյուս կողմից, եվրոպական մշակույթը կարծես հոգնեց մեծ նվաճումներից, դասական ավանդներից, որոնք իրենց ծանրությամբ, լրջությամբ ճնշում են ժամանակակից մշակույթի զարգացումը: Սկսվեց անվերջ պայքարի գործընթաց՝ պայքար դասական ավանդների ճնշման դեմ: Պետք էր ինչ-որ նոր բան ասել: Բայց նորի փնտրտուքը միշտ չէ, որ հաջողությամբ է պսակվում: Արդյունքում առաջացան նոր վեպեր, աբսուրդ գրականություն և այլն:

Եթե խորհրդային ժամանակաշրջանում հնարավոր չէր արվեստի մեջ մեծ փոփոխություններ կատարել, ապա այսօր հետխորհրդային գրեթե բոլոր ժողովուրդների մշակույթները ձգտում են դեպի եվրոպականը: Բայց միշտ չէ, որ Եվրոպայից դրական ազդակներ են գալիս:

20-րդ դարի արվեստում շատ արժեքավոր բաներ կան, բայց շատ բաներ էլ Եվրոպան կորցրեց: Օրինակ՝ Ռոդենի կերտած Բալզակի արձանի կողքին այսօր տեսնում ես մետաղե ինչ-որ կոնստրուկցիաներ՝ ինչ-որ ձողեր են, մետաղե թիթեղներ՝ ներկված տարբեր գույներով: Եվ դա պիտի ընդունես՝ որպես քանդակ: Վիեննայում՝ «Ժամանակակից արվեստի թանգարան»-ում, վերևում Պիկասոն է, ներքևում մերօրյա արվեստի մի դրսևորում՝ բրդի հակ է դրված՝ որպես քանդակ:

Իհարկե, մեր ներկայիս գրականությունն այսքան ծայրահեղ չէ. ստեղծում ենք գրական գործեր, հեղինակներն իսկապես լրջորեն փորձում են հասկանալ, պատկերել այսօրվա կյանքը, բայց միևնույնն է, եվրոպական միտումների ազդեցությունը զգացվում է՝ և՛ դրական, և՛ բացասական: Այսօրվա գրականությունը երբեմն այնքան է հեռանում հայ դասական գրականության ավանդներից, որ զամանում ես, արդյո՞ք սա է հայ նոր գրականությունը:

- Հայ գրականությունը կարո՞ղ է վերադարձնել իր նախկին փառքը:

- Նախկին փառքը վերադարձնելը դժվար է, բայց հուսանք՝ կգա մի շրջան, երբ հայ գրականությունը դարձյալ սիրելի կդառնա զանգվածային ընթերցողին: Այսօր գրողները հաճախ են մեզ մեղադրում. «Դուք՝ քննադատներդ, լավ չեք պրոպագանդում, դասախոսները մեր մասին չեն խոսում»: Սրանք մասնակի պատճառներ են: Հիմնական պատճառներն ավելի գլոբալ խնդիրների հետ են կապված: Նորի փնտրտուքը եվրոպական գրականության մեջ ծայրահեղ ձևեր է ընդունում, իսկ ընթերցողն այդ նորություններով շատ չի հետաքրքրվում: Ընթերցողին պետք է գրականություն մարդու մասին, նրան հետաքրքրում է մարդու ճակատագիրը, կյանքը: Եվ երբ նա տեսնում է շատ տաղանդավոր գիրք, որի մեջ ինչ-որ կառուցումներ, էսթետիկական խաղեր կան, այս խաղերը հաճախ վանում են ընթերցողին: Ասօրվա գրականությունը շատ դժվար է հասկանալ: Անշուշտ, լավ աշխատանքներ կան, որոնք երևի կմնան գրականության պատմության մեջ, բայց քչերը կկարդան:

- Այսօր ստեղծվում են նաև գրքեր, որտեղ միտք չկա, բառակույտ է, ի՞նչ կասեք այս մասին:

- Դուք ասում եք բառակույտ, իրենք ասում են ինտելեկտուալ մտքեր, դուք ասում եք անբարոյականություն, իրենք ասում են... Այստեղ դժվար է դատավորի դեր ստանձնել: Չեմ ուզում անուններ տալ, բայց գրքեր են տպագրվում, որոնցում օգտագործված են բոլոր չարտասանվող բառերը: Իրենց ընկալումով դա մայրենի լեզվի «հարստացում է»:

Խոսքի ազատությունն ընկալում են այնպես, թե առանց սահմանափակման կարելի է գրել ամեն ինչ: Ամբողջ հարցն այն է, թե այս հոսքի մեջ ինչպե՞ս կբյուրեղանա նորը, իսկական արվեստը: Առաջ էլ էր այդպես. ինչ ասես գրել ու հրատարակել են, բայց դրա մեջ առանձնացել է տաղանդավոր գրականությունը:

- Ներկայիս գրականության մեջ ի՞նչ դեր է կատարում գրաքննադատությունը:

- Գրաքննադատությունը հասարակության կարծիքը, հասարակության արձագանքն է գրքի վերաբերյալ: Մարդիկ պիտի կարդան և արձագանքեն: Գրաքննադատությունը նաև ուղղություն է տալիս: Նախկինում գրաքննադատի խոսքը շատ ազդեցիկ էր: Հիմա այդպես չէ: Սակայն այսօր էլ, ինչպես միշտ, տպագրված կարծիքը գրողներին հետաքրքիր է, որովհետև նրանք, ի վերջո, հասկանում են, որ քննադատությունը հասարակության վերաբերմունքն է: Միայն թե այսօրվա գրաքննադատությունն էլ է շփոթված: Պիտի հստակ չափանիշներ լինեն, որոնք չկան, զգացողություններն են մնում. զգում ես՝ տաղանդավոր է, թե՝ ոչ: Այս շփոթը կապված է մեր ընդհանուր բարոյական, մտավոր խնդիրների հետ: Այս դեպքում գրաքննադատը չի էլ կարող որևէ բան փոխել: Ինձ մոտ տասնյակ գրքեր կան, Գրողների միությունում գուցե ավելի շատ: Թույլ գրքեր են: Միևնույնն է՝ ասես, թե չասես, նա պիտի տպագրի: Մենք դեռ չենք վարժվել այս ազատությանը:

- Այս ընթացքում ի՞նչ աշխատանքներով է զբաղված եղել ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը:

- Մեր ինստիտուտի գլխավոր ուղղություններն են՝ հայ գրականության պատմությունը, հայ դասականների երկերի հրատարակությունը, տեսական հարցերը և մեր առնչությունը աշխարհի գրականությունների հետ: Տպագրում

ենք Ավ. Իսահակյանի երկերի ակադեմիական հրատարակությունը 14 հատորով: Արդեն պատրաստ են Լ. Շանթի երկու հատորները, շուտով մյուսներն էլ կլինեն: Պատրաստում ենք նաև Նիկոլ Աղբալյանի երկերի ակադեմիական հրատարակությունը: Տպագրել ենք բազմաթիվ աշխատություններ: Ընթացքի մեջ են հայ գրականության նոր պատմության ստեղծման աշխատանքները: Մենք ունենք հայոց հին գրականության պատմություն (հեղինակ՝ Մանուկ Աբեղյան), նոր գրականության պատմություն (5 հատոր), նորագույն գրականության պատմություն երկու հատորով (հեղինակ՝ Սուրեն Աղաբաբյան): Այս բոլորի հիման վրա, հաշվի առնելով նոր մոտեցումները, նոր նյութերը, գրում ենք նոր պատմություն՝ հին ժամանակներից մինչև մեր օրերը, որովհետև բոլոր շրջանները վերանայելու, վերագնահատելու խնդիր կա: Այս նոր աշխատության 3 հատորները պատրաստ կլինեն 2009թ.: Եղիշե Չարենցի նոր ակադեմիական հրատարակության խնդիրն է առաջացել, քանի որ շատ նյութեր են կուտակվել: Եթե հին հրատարակությունն ամբողջացել է 6 հատորում, ապա նորը կամբողջանա 8-10 հատորում:

- Ի՞նչ խնդիրների հետ եք առնչվում:

- Ամենակարևոր խնդիրը պետության, հասարակության վերաբերմունքն է գիտության և հատկապես հայագիտության նկատմամբ: Հայագիտությունը, որի կենտրոնը Հայաստանն է, չունի համապատասխան ֆինանսավորում: Մեր բարձրաստիճան այրերն ասում են, որ հայագիտությունը պիտի զարգանա, բայց նրանց կողմից արված քայլերը շատ աննկատ են: Եթե ուսուցիչը ստանում է 70 հազար դրամ աշխատավարձ, նա դրան արժանի է, բայց դոկտոր պրոֆեսորն էլ դրանից պակաս չպետք է ստանա, սակայն ստանում է 55-57 հազար:

- Ձեր կարծիքով, ՀՀ նախագահի գրականության մրցանակը դեր կատարո՞ւմ է հայ գրականության խնդիրների լուծման գործում:

- Կարծում եմ՝ պիտի ավելի լավ քննարկվեն մրցանակին ներկայացված գրական գործերը, հանձնաժողովները կազմով պիտի ավելի մեծ լինեն, որոնցում մշակույթի տարբեր բնագավառների ներկայացուցիչներ պիտի լինեն, քանի որ գրականությունը ստեղծվում է ոչ թե քննադատների, այլ ամբողջ հասարակության, ժողովրդի համար: Տարբեր խավերի ներկայացուցիչներ՝ մտավորականներ ու գիտնականներ պիտի իրավունք ունենան իրենց կարծիքն արտահայտելու գրականության, գրականության մրցանակի մրցույթին մասնակցող ստեղծագործությունների մասին:

Մի կողմից բոլորը սպասում են, որ մրցանակ կստանան, մյուս կողմից գրականության նկատմամբ չկա նախկին սերն ու հետաքրքրությունը: Հիմա գիրքը տպագրվում է, ընթերցողը նույնիսկ տեղյակ էլ չէ: Այսպես դժվար է հասարակության մեջ կարծիք ձևավորել: Փորձում ենք իրավիճակը շտկել, բայց սա բարդ խնդիր է, որովհետև հասարակության հոգեբանության, նրա վերաբերմունքի մեջ պետք է փոփոխություններ կատարվեն:

- Եթե ավարտական դասարաններում հայ գրականությունը պետական քննություն դառնա, գրականության նկատմամբ վերաբերմունքը կփոխվի՞:

- Դպրոցում անպայման պետք է գրականության դերը շեշտել, բայց գնալով գրականության ժամերը կրճատվում են: Այս մասին շատ ենք խոսել, բայց այստեղ բախվում ենք խնդիրների. Բոլոնիայի համաձայնագիր կա, պահանջներ կան, որ աշակերտին և ուսանողին չպետք շատ ծանրաբեռնել: Այսպես ծրագրից դուրս են մնում մեծ հեղինակներ, որոնցով մարդիկ, սերունդներ են դաստիարակվել: Չպետք ՝է մոռանանք, որ մեր գրականությունը մեր ժողովրդի կյանքում շատ մեծ դեր է խաղացել:

- Երիտասարդ կադրերի խնդիրն ինչպե՞ս է լուծվում:

- Բարեբախտաբար, այդ խնդիրը հիմա լուծվում է: Ակադեմիայում մի պահ այս խնդիրը սրվեց: Երբ աշխատավարձը պակասեց, գիտության հեղինակությունն ընկավ, տաղանդավոր երիտասարդները սկսեցին հեռանալ: Այս տարի 25-30 տարեկան 4 երիտասարդ ենք աշխատանքի ընդունել: Լավ երիտասարդներ ունենք ի դեմս Արքմենիկ Նիկողոսյանի, Տերյանի թոռ Գևորգ Էմինի Տերյանի, Քրիստինե Հովհաննիսյանի: Ես հիշատակեցի միայն ամենաերիտասարդներին, բայց ինստիտուտում երիտասարդները բավականին շատ են: Մեր երիտասարդները նույնիսկ ցածր աշխատավարձի պայմաններում ձգտում են զբաղվել հայ գրականությամբ: Նրանք գիտակցում են, որ գրականությունը ոչ միայն մշակույթի կարևոր մասն է, այլև իրենց հոգևոր գոյության նախապայմաններից մեկը: Գրականությամբ նրանք իմաստավորում են իրենց կյանքը:

ՎԻԿՏՈՐՅԱ ԲՈՒՌՆԱԶՅԱՆ

ՄՇԱԿՈՒՅԹԱՅԻՆ ԱՅՑԵՔԱՐՏ

Հայաստանի պատմամշակութային արժեքները՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի ցանկում

Զբոսաշրջության զարգացման տեսանկյունից ցանկացած երկրի համար կարևոր է, թե ինչով ու ինչպես է այն ներկայացվում: Հայաստանի պարագայում պատմամշակութային հուշարձանները մեր կարևորագույն այցեքարտերից են:

1993թ. Հայաստանը վավերացրել է համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պահպանության կոնվենցիան: Վավերացման պահից Հայաստանի երեք մշակութային հուշարձաններ՝ Հաղպատի և Սանահինի վանքերը, Էջմիածնի Մայր տաճարը և եկեղեցիները, Զվարթնոցի հուշահամալիրը, Գեղարդի վանքը և Ազատ գետի վերին հոսանքները ներառվեցին ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում: Դրանում մշակույթի և բնության օբյեկտների ներառման արարողակարգի համաձայն՝ օբյեկտը պետք է ներառվի հայտացանկում:

Այսօրվա դրությամբ Հայաստանի մշակույթի տասը հուշարձաններ ներառված են հայտացանկում, այդ թվում՝ Դվին քաղաքի ճարտարապետական հուշարձանները, Երերույքի տաճարը, Նորավանքը և Ամաղուի դաշտավայրը, Տաթևի և Տաթևի մեծ անապատի վանքերը, Ողոտանի դաշտավայրը: **«Հայաստանի Հանրապետություն»,** 22.03.2008թ.

Հովհաննես Այվազովսկի

ԾՈՎԻ ԵՐԳՉԻ ՀԱՅՏՇՈՒՆՉ ԿՏԱՎՆԵՐԸ

«Ինքնատիպությունը ես-ի էության խորհրդանիշն է: Եթե մարդն իր գործունեության մեջ չի փնտրում սեփականը, անհատականը, յուրօրինակը, նա չի կարող մեծատաղանդ լինել: Ինքնուրույնության հաստատումը կարևորագույն խնդիր է տաղանդավոր մարդու համար:

Հովհաններս Այվազովսկին, օժտված լինելով բնածին տաղանդով, փոքր տարիքից արդեն մեծ սեր է ցուցաբերում դեպի նկարչությունը: Ոսկե մեդալով ավարտելով Պետերբուրգի Գեղարվեստի ակադեմիան՝ նա մեկնում է Իտալիա, որտեղ էլ գտնում է իր ուրույն ոճը՝ ինքնուրույնությունը, անհատականությունը: Իտալիայի բնությունը, իտալական արվեստն ու թանգարանները Այվազովսկու համար դարձան երկրորդ և, իրավամբ, իսկական ակադեմիա: Նրա բազմաթիվ ծովանկարներում միշտ առկա զգացմունքայնությունը, մարդասիրությունը, մարդափրկությունը նրա արվեստի բովանդակությունն են: Սա, իհարկե, գալիս է իր հայկականությունից»,- ասում է Հայաստանի Ազգային պատկերասրահի և Մարտիրոս Սարյանի տուն-թանգարանի նախկին տնօրեն, արվեստագետ Շահեն Խաչատրյանը:

2007թ. լույս տեսավ Շահեն Խաչատրյանի «Այվազովսկի: Խաղաղության և մարդասիրության առաքյալը» գիրքը, որը կոչված է մատնանշելու և մոռացության չտալու Հ. Այվազովսկու հայկական արմատները: Այս գիրքը միտված է, որպես վահան դիմակայելու բոլոր այն մարտահրավերներն ու գրոհները, որոնք կփորձեն կասկածի տակ դնել հանճարեղ ծովանկարչի հայկական ծագումը: «Ոչ ոք չի ժխտում Այվազովսկու ռուս մեծ նկարիչ լինելը, բայց չի կարելի ժխտել նրա հայ լինելը, ինչը տարիներ շարունակ արել են օտարները: Դժբախտաբար, անգամ հայերը գրքեր, ամսագրեր հրատարակելիս, չեն անդրադարձել Հ. Այվազովսկու հայկական ծագմանը, կրկնել են այն, ինչ գրել են ռուս հեղինակները»,- ցավով է նշում Շ. Խաչատրյանը:

Տասնամյակներ շարունակ ակնհայտ զգացվել է նկարչի հայկական ծագման, նրա հայ արմատների մասին լռելու և հայերին նվիրված նրա կտավները թաքցնելու միտումը: 1901-ին՝ նկարչի մահից անմիջապես հետո, Ս. Պետերբուրգում լույս տեսավ մի գիրք, ծավալուն մի աշխատանք՝ նվիրված Հովհաննես Այվազովսկուն (հրատարակիչ՝ Ֆ. Բուլգակով, «տեքստի հեղինակ»՝ Ն. Կուզմին): Այս գրքում Այվազովսկու հայկական արմատների մասին ոչինչ չի ասվում, ընդհակառակը՝ նույնիսկ խոսվում է նրա թուրքական արմատների մասին: Ն. Կուզմինը չի հիշատակում Թուրքիայում կատարված ջարդերը պատկերող Այվազովսկու նկարների մասին, որոնք ժամանակին ցուցադրվել են աշխարհի տարբեր երկրներում և մեծ աղմուկ են բարձրացրել: Վերջապես, չկա ոչ մի տող նկարչի եղբոր՝ Գաբրիելի մասին, ով ժամանակի հայ նշանավոր գիտնականներից մեկն էր (պատմաբան, «Բազմավեպ» հայտնի ամսագրի խմբագիր):

«Կասկածից վեր է, որ եթե ծովի երգչի վաստակած համաշխարհային համբավն ու մեծությունը չլինեին, իհարկե, ավելորդ պիտի համարվեր նրա ծագման մասին պատմություններ հորինելը, կամ նրանով հետաքրքրվելը: Ն. Կուզմինը իր գիրքը «Այվազովսկու կյանքն ու ստեղծագործությունը» սկսելով «Ռուսսկայա ստարինա» հանդեսի առաջին տողերով և «հիմնավոր» համարելով ոմն Բլուդովայի արտահայտությունը, մինչև լեգենդի իր տարբերակին անցնելը՝ անմիջապես եզրահանգել է. «...այսպիսով՝ Այվազովսկու երակներում հոսել է թուրքական արյուն, չնայած, մեզ մոտ, չգիտես ինչո՞ւ, ընդունված է նրան համարել զտարյուն հայ»: Պարզից էլ պարզ է, որ Կուզմինը իրազեկ է եղել Այվազովսկու հայկական ծագմանը, սակայն խուսափել է գիտեցածը ներկայացնել, թեկուզ, ինչպես կրկնել է, հայուհի է եղել նկարչի մայրը: Այս գրքի արագ հրատարակման բուն պատասխանը կարող է տալ միայն ժամանակը: Անսպասելի փոփոխված քաղաքական մթնոլորտի պահանջն էր՝ ռուս մեծ նկարչի վրայից թոթափել հայկական ամեն ինչ՝ ավելի ռեալ դարձնելով նրա կապը «թուրք նախնիների հետ»... Մի խոսքով՝ Այվազովսկուն յուրովի «փրկել»»,- ասում է Շահեն Խաչատրյանը:



Թեոդոսիայի Սուրբ Սարգիս եկեղեցում պահպանված այն գրքի էջն է, որտեղ գրառել են նորածիններին ու մկրտվողներին: Հովհաննես Այվազովսկու անունը կարող եք կարդալ սլաքի ուղղությամբ:

Ցավոք, Ն. Կուզմինի գիրքը հետագայում հիմք է հանդիսացել Հ. Այվազովսկու արվեստը ուսումնասիրողների համար:

Այվազովսկուն «փրկելու» քաղաքականությանը հակառակ՝ մեծ ծովանկարչի արվեստն ինքնին պատասխանում է պատմության բոլոր հարցերին: Հ. Այվազովսկին միշտ կապված է եղել իր ժողովրդին, դեռ ստեղծագործական վաղ շրջանում բազմաթիվ նկարներ է նկարել ազգային թեմաներով. նա հաճախ է այցելել եղբորը՝ Գաբրիելին, Վենետիկի Սբ. Ղազար կղզում: Այստեղ՝ «փոքրիկ Հայաստանում», նա ծանոթանում է Մխիթարյան միաբանության գործունեությանը, գրադարանին, տեսնում է հայկական ձեռագրեր՝ հարուստ հայկական մանրանկարներով, Բայրոնի սենյակը, որտեղ վերջինս հայերեն է սովորել վանահայր Հ. Ավգերյանի մոտ: Հ. Այվազովսկու հայկական շնչով առաջին աշխատանքը **«Մխիթարյան հայրերը Սբ. Ղազար կղզում. Վենետիկ. Մայրամուտ. 1843»** կտավն է: Նկարի կոմպոզիցիոն կենտրոնը Հայկազյան բառարանն է, որն այդ տարիներին գիտական բացառիկ նշանակություն ուներ հայության համար: Այս կտավով Հ. Այվազովսկին շեշտել է Մխիթարյան հայրերի հայրենանվեր գործունեությունը: Մայրամուտի շողերով ողողված՝ աջ կողմում Այվազովսկին պատկերել է բառարանի հեղինակներից մեկին՝ Մ. Ավգերյանին, ձախ կողմում՝ աբբահայր Ս. Սոմալյանին և իր հոգևորական եղբորը՝ Գաբրիել Այվազյանին: Հ. Այվազովսկին, լինելով Սբ. Ղազար կղզում, բազմիցս նկատել է հայ վաճառականներ: **«Լուսնյակ գիշեր. Վենետիկի տեսարանը Սբ. Ղազար**

կղզուց. 1847» կտավում Այվազովսկին պատկերել է կղզի ժամանած հայ վաճառականների, ովքեր միաբանների համար հազվագյուտ գրքեր էին բերել:

1968թ. Այվազովսկին այցելում է իր նախնիների հայրենիքը: Այսպես, ճամփորդելով Անդրկովկասում, Այվազովսկին նկարում է սարեր, լճեր **(«Սևանա լիճը. Արևածագ.1869»)**, թիֆլիսյան տեսարաններ (նշենք, որ այն ժամանակ Թիֆլիսի բնակչության կեսը հայեր էին)՝ նպաստելով հայկական կերպարվեստում պեյզաժի ժանրի զարգացմանը: Թիֆլիսում ապրող հայերի կենցաղը պատկերող կտավներից է **«Թիֆլիսյան տեսարանը.1869»**, որտեղ տեսնում ենք տանիքի վրա պարող հայկական տարազներով մարդկանց: Ուրախության ժամանակ տանիքների վրա պարելը շատ հին ավանդույթ էր, որին Այվազովսկին ծանոթ է եղել մանկուց:

1882-ին՝ առաջին անհաջող ամուսնությունից հետո, Այվազովսկին 64 տարեկան հասակում ամուսնանում է 26 տարեկան մի այրի կնոջ՝ Աննա Բուռնազյանի հետ: Այվազովսկու երկրորդ ամուսնությունը շատ երջանիկ է լինում և նա գրում է. «Ատով ավելի նորեն ազգիս մոտիկցա»: Իսկապես, այդ տարիներին Այվազովսկին ստեղծագործական եռանդով է լցվում, ավելի շատ է նկարում ազգային, կրոնական և պատմական թեմաներով կտավներ: Դրանք են՝ **«Հայ ժողովրդի մկրտությունը. 1892», «Հայ զորավարի երդումը (Վարդան Մամիկոնյան). 1892», «Խրիմյան հայրիկը էջմիածնի շրջանում. 1895»** և այլն: Այս տարիներին Այվազովսկին ստեղծում է նաև իր կնոջ պատկերով նկարների շարք, որտեղ Աննային պատկերել է՝ որպես իսկական հայուհու՝ հայկական տարազով:

Աննա Բուռնազյանի դիմանկարը

Գալով Հայաստան, տեսնելով հայոց սրբազան լեռը՝ Արարատը, Հ. Այվազովսկին չէր կարող այն չհավերժացնել: Այդ կտավներից են՝ **«Արարատը և քարավանը. 1868», «Արաքս գետը և Արարատը. 1875», «Արարատ. 1885»** և ամենաշանավորը՝ **«Նոյը իջնում է Արարատից. 1889»**: Հանրահայտ այս վերջին նկարը Այվազովսկին Փարիզի «Դրուան Ռուել» սրահում ցուցադրելով իր հայրենակիցների հետ զրույցի ժամանակ ասել է. «Սա է մեր Հայաստանը…»:

Այստեղ է հանգչում Հովհաննես Այվազովսկին

1890-ական թվականների կեսերին Աբդուլ Համիդը Հայկական հարցին վերջ դնելու համար կազմակերպեց հայերի զանգվածային կոտորածները. Կոստանդնուպոլսի, Տրապիզոնի, Էրզրումի, Մարաշի, Տիգրանակերտի հայերը դաժան կոտորածի զոհ դարձան, ավերվեցին հայկական եկեղեցիները, դպրոցները, մշակութային օջախները: Այվազովսկու խորին ցավով վշտացած սիրտը, լսելով Արևմտյան Հայաստանից գաղթած հայերի պատմածները դաժան կոտորածների մասին, չէր կարող անտարբեր մնալ: Այս շրջանում նա ստեղծում է ջարդերի թեմաներով կտավներ՝ արտահայտելով իր զայրույթը թուրք ոճրագործների դեմ: Դրանցից է **«Հայերի ջարդը Տրապիզոնում. 1895»** կտավը:

Հայերի ջարդերը պատկերող մյուս կտավներն են՝ **«Հայերին լցնում են նավերը. 1897», «Ուղևորների թափումը Մարմարա ծովը. 1897»**: Այվազովսկին Թուրքիայից գաղթած հայերից լսել է, թե ինչպես են թուրքերը կենդանի հայերին նետել ծովը: Եվ դաժան այդ վայրագությունները իրենց արտացոլումն են գտել այդ կտավներում: Հայկական կոտորածների թեմաներով նկարները Այվազովսկին ցուցադրում է Օդեսայում, այնուհետև՝ Մոսկվայում: Այս ցուցահանդեսներից ստացված հասույթը նա տալիս է հայ գաղթականներին:

Հ. Այվազովսկու հայտնի հայաշունչ կտավներից է **«Բայրոնի այցը Սբ. Ղազար կղզի. 1899»:** Այս կտավն ապացուցում է, որ ազգային հարցերը նկարչին հուզել են մինչև իր կյանքի վերջին օրերը: Նկարում պատկերված է, թե ինչպես են Բայրոնին դիմավորում Մխիթարյան հայրերը Ղևոնդ Ալիշանի գլխավորությամբ: Սակայն Բայրոնի այցի ժամանակ Ղևոնդ Ալիշանը դեռ չէր ծնվել: «Հայ ժողովուրդը սերնդեսերունդ (ոչ միայն բայրոնյան շրջանում) երազել է մայր երկրի ազատագրումը, կոփվել հայրենասիրության ոգով: Ալիշանը այդ ոգու խորհրդանիշներից է, և նա ընդգրկվել է Այվազովսկու մտահաղացման մեջ: Այդ նշանավոր կտավում մեծ ծովանկարիչն ու հայրենասերը խտացրել է իր և իր ժողովրդի երազանքը»,- ասում է Շ. Խաչատրյանը:

Կյանքի վերջին տարիների Հովհաննես Այվազովսկուն հուզող թեմաներն արտահայտված են այդ շրջանում ստեղծված կտավներում: **«Նապոլեոնը Սբ. Ելենա կղզում. 1897»** կտավում Նապոլեոնը պատկերված է ժայռի վրա, կարծես հենց ինքը՝ նկարիչն է՝ հայացքը հառած հարազատ տարերքին՝ ծովին: Այվազովսկու վերջին՝ անավարտ կտավն է **«Թուրքական նավի պայթյունը. 1900»**, որը կարծես արտահայտում է նկարչի զայրույթն ու հոգու պոռթկումը:

Մեր ունեցած տեղեկություններով, 1890-ական թվականներին հայության կոտորածների արտացոլումով Հ. Այվազովսկին վրձնել է 14 կտավ: Սակայն, Շահեն Խաչատրյանն ասաց, որ իր ունեցած տվյալներով դրանք 17-ն են եղել:

Այն, որ այսօր Հայաստանի Ազգային պատկերասրահում պահպանվում են Այվազովսկու նշանավոր գործերից **«Նոյը իջնում է Արարատից», «Բայրոնի այցը Սբ.Ղազար կղզի»** և էլի շատ նշանավոր գործեր, դրանում իր մեծ ներդրումն ունի Շահեն Խաչատրյանը, ում Մարտիրոս Սարյանը անվանել է «Թանգարանի զինվոր»: Շ. Խաչատրյանը, տարիներ շարունակ «տարբեր ճանապարհներով»՝ «մեկին համոզելով, փոխանակելով», «մյուսից գնելով», Հայաստանի Ազգային պատկերասրահը հարստացրել է 500 հարյուր գեղանկարչական և գրաֆիկական աշխատանքներով:

Հովհաննես Այվազովսկու կտավները տարածված են աշխարհով մեկ, հուսանք, որ Հայաստանին և հայությանը նվիրված մեր հանճարեղ ծովանկարչի բոլոր կտավները մի օր կցուցադրվեն Հայաստանի Ազգային պատկերասրահում:

ԴԻԱՆԱ ՄԱԿԻՆՅԱՆ

ԱՐՄԵՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅՔ

(Բնազանցական հիմք, ուրվագծեր եւ դիմաստվերներ)

ԱՐՄԵՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԳԻՏԱԿՑՈՒՄԸ ԿԱՐԱՎԱՆԱՊԵՏԵՐԻ ՃԱՆԱՉՄԱՄԲ

(Սկիզբը՝ թիվ 4/10-ում)

Բ-2. ԱՐԱՐԱՏՅԱՆ Մշակույթ ԿԱՄ ԱՐՄԵՆԱԿԱՆ
ինքնագիտակցություն՝ ամեն
բանից էլ առավել

ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆ

ՄԵՆՔ ՉԵՆՔ ՃԱՆԱՉՈՒՄ ԱՅԼ ԿԵՐՊ ԵՒ ԿԱՄՈՒՐՋ ՄԱՐԴՈՒ ԵՒ ԱՍՏԾՈ ՄԷՋ ՔԱՆ ՑԵՂԸ: ՑԵՂԸ... ՅԱՒԻՏԵՆՈՒԹԵԱՆ ՈՒՂԻ է: ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ... ԴԱ ԵՐԿՈՒՆՔ է ԱՐՄԵՆԱԿԱՆ ՑԵՂԻ ՈԳՈՒ: (Տե՛ս, ՀԱՅԿ ԱՍԱՏՐԵԱՆ, Հատընտիր, Երեւան, 2002, էջ 53)

....բարոյապես մեռցնելու համար անտաղանդներն ու սնոտիները, գեղեցկութեանց մուրճ կը շարժուի արդարութեան հարուածներով...: (Կոստան Զարեանին ուղղված Սիամանթօյի նամակից. գրված 1914-ին, ԺՆԵԻՑ). տե՛ս, ավելի մանրամասն Արեւմտահայ գրողների նամակաների, «Գրական ժառանգություն», գիրք 6-րդ, պրակ 1-ին, Երեւան, 1972, ԵՊՀ հրատ., էջ 298):

ՈՒ ՑԵՂԸ հոգի է. ԱՇԽԱՐՀԸ լուսավորող ներքին ԱՐԵՒ, ..., քաոս կազմակերպելու արարչական ԿԱՄՔ, որ արտադրելու եւ ունենալու սկզբունքայնութեանը հակադրում է լինելու եւ գոյատեւելու, արարելու սկզբունքներ:[15] ԱՅԼ խոսքով՝ այսօրինակ ձեւում հաստատվում է այն, ինչը վաղուց ասված էր «ՄԵՀԵԱՆ»-ի հանգանակում. «ՑԵՂ մը, որ կ'ուզէ ապրիլ, պարտավոր է ստեղծել», այսինքն՝ գտնել ստեղծագործականի իր կերպը:[16]

Ցեղայինի գիտակցման հիմքից, անցում կատարելով մտածումի բուն ինքնագիտակցական աստիճանին (զուտ ազգային արժեքներ), տեսնում ենք, որ այդօրինակ հոգեկանությունը Կ. Զարեանի աշխարհայեցումներում իրականացել է... սկեպսիսի, վեճերի[17] եւ տարաբախտ գիտակցության հաղթահարումի՝[18] բուն բանականի առաջադրումներով, երբեմն էլ «քիչիկ մը խոշոր հավակնոտութեան»[19] ո՛չ անհրաժեշտ գիտելիքների միջնորդավորման շրջանակներում, որոնք ո՛չ միշտ է, որ դրական հետեւանքներ են ունեցել, սակայն էականն այն է, որ հանճին Կ. ԶԱՐԵԱՆԻ ՀԱՅԸ ԵՒ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ՝ որպես ԱՐՄԵՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՅՔԻ կրող-գիտակցող, ունեցել է իր հոգու մեկ հզոր ներկայացուցիչը: Այլ խոսքով. ԻՆՔԶԻՆՔԸ գիտակցելու ընթացքի հետ ունենալիք անմիջական փոխհարաբերություններում, ինչպես գտնում է Կ. Զարեանը, ՀԱՅԸ անհատական եւ հասարակական մտածմամբ առաջին հերթին պետք է գիտակցի **ԳԱՂԹԱԿԱՆ եւ ՏԱՐԱԳԻՐ** հասկացությունները՝ որպես այդպիսին. գիտակցի եւ.... «պատառոտելով մի կողմ նետի ավելորդը»:

Գաղթականը նա է,- իմանում ենք Հրաչյա Աճառյանի արմատական բառարանից,- ով, հայրենիքը թողնելով, փախչում է ուրիշ տեղ, երբ մի որեւէ ժողովրդի տեղահան անելով, քշում-վտարում են՝ դարձնելով նույն այդ ժողովրդին փախստականների խումբ: Հրաչյա Աճառյանից իմանում ենք նաեւ, որ **«ԳԱՂԹ»** նշանակում է **«գաղտնիք պարզել»՝ բնակիչներին դուրս վտարելով՝ ծածկոց հանել, երկիր դատարկել: Իմանում ենք նաեւ, որ ԳԱՂԹԱԿԱՆ, ԱՐՏԱԳԱՂԹ, ՆԵՐԳԱՂԹ բառերը ունեն բնիկ ՍԵՄԱԿԱՆ ծագում:**[20]

Այսօրինակ հասկացումը ճանաչելու ժամանակ, հատկանշական է Կ. Զարեանի մեկ հաղորդագրումը «ՍՊԱՆԻԱ»-յում.

- Հիշում եմ՝ առաջին օրերին ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ փողոցի անկիւնում կանգնած մի խումբ կանայք, ինձ վերից վար զննելուց հետո բարձրաձայն եւ ռուսերեն հարց տվեցին ինձ-ների գլխարկ կրող մի պարոնի. «Ո՞վ է այդ մարդը»:

Մարդը զիստը նստեցրեց ձեռքում բռնած գավազանի ծայրին, գլուխը դարձրեց ինձ, արհամարհական մի նայուածք նետեց եւ դառնալով կանանց.

«Է-ՄԻ-ԳՐԱՆՏ»...

Այդ էմիգրանտը (ՏԱՐԱԳԻՐ) իմ իսկ երկրում, մտքիս մեջ մինչեւ հիմա դրոշմվել է՝ իբրեւ դժնդակ հիշատակ:

ԱՅՍՏԵՂ՝ ՉԷ:[21]

Այժմ «Է-ՄԻ-ԳՐԱՆՏ» (ՏԱՐԱԳԻՐ) բառը, ըստ Հրաչյա Աճառյանի, ՊԱՆԴՈՒԽՏ, ՀԵՌԱՑԱԾ լինել, ՕՏԱՐՈՒԹՅԱՆ մեջ գտնվել-ճամփորդել, նշանակության տարբերության պատճառով անցնել եւ վանել իմաստով, որը մերժում է պատահող դժվարությունները:[22] Վտարանդին ռուսերենից թարգմանաբար՝ ՏԱՐԱԳԻՐ-ն է, ուր բառի արմատն է ՏԱՐ-ը. հեռու, հեռավոր, հեռվում կանգնած լինելը, **«գտնվել սահմանից այն կողմում»-ը, նաեւ «ծովից այն կողմում գտնվել»-ը,** «վրայից այն կողմում գտնվել»-ը, որը ՀԱՅՈՑ մերձավոր բոլոր բառարանները նայելիս հաստատվում է, որ այս բառի արմատը բնիկ հայկական ծագում ունի:[23]

Իսկ այժմ Կ. Զարեանի բուն «սահմանումները», որ իրականացել է «ՆԱՎԱՏՈՄԱՐ»-ներից մեկում. ունենալով առաջին հերթին ներկայում՝ ՀԱՅԻ գիտակցման տեսանկյունից, հոգեբանական ճշմարտություններ բացահայտելու նշանակություն.

«Պետք է զանազանել ԳԱՂԹԱԿԱՆ-ը եւ ՏԱՐԱԳԻՐ-ը, որոնք երկու իրարամերժ վիճակներ են,- պնդում է Կ. Զարեանը:

Գաղթականը, անողոք պարագաներից մղուած, տեղափոխվում է մի որեւէ երկիր եւ ճիգ է անում զետեղուել ուրիշների կեանքում: Տնտեսականի հրամայականի տակ, գաղթականը պարտադրուած է հարմարուելու, նորաձեւելու, կապիկանալու, թութականալու: Լինելու ո՛չ թե ինքը, այլ ուրիշ:

Գաղթականը ստվեր է, որ որոնում է նոր բարոյական մարմին, նոր լեզու, գոյանալու եւ ապրելու նոր կերպ, նոր ձեւ: Եվ, երբ նա գտնում է այդ նոր մարմինը, անհետանում է:

Ուրիշ է ՏԱՐԱԳԻՐԸ:

ՏԱՐԱԳԻՐԸ ժամանակավոր այցելու է, անցորդ, որի անհատականութիւնը հավիտենապես խարսխուած է իր իսկ իսկութեան մէջ, իր դարավոր հավաքական ուրույն կազմում, իր իսկ ցեղային ենթագիտակցականում:

ՏԱՐԱԳԻՐԸ հոգեպես, մտավորապես շարունակում է ապրել մտայնական եւ ժառանգական այն ծովում **(այստեղ կարելի է ավելացնել՝ կապելու համար այն նյութերին, որոնք գրվել է տողերիս հեղինակի կողմից «ՎԱՍՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ»-ում ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ եւ ՄՏԱԾՈՒՄԻ ԿՐՈՂ հասկացականները), որի թաքնված հոսանքները կրակով եւ երկաթով ծեծուած փոթորիկներ են եւ ներկա են իր արիւնի, մկանունքների եւ ուղեղի ծալքերում»:**[24]

Այլ խոսքով դժվար չէ հետեւություն անել, որ տարագրի ՈԳԻՍԱԿԱՆԸ ունի նպատակ՝ վերադառնալ «ԻՓԹԱՔԱՅԻ ՏՈՒՆ», այն դեպքում, երբ գաղթականը.... փոշիանալու է.... վերանալու՝ որպես նախկինում ինքնին գոյություն...

ՏԱՆԴԵՆ (Դանթէ), Բայրոնը, Շելլին, Թ. Մանը եւ Ղ. Ալիշանը, ..., ըստ Կ. Զարեանի, տարագիրներ էին... եւ ո՛չ թէ....

<u>ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄ ԵՒ ՃԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ</u>

1. Սարաֆեան Ն., «Տեսարանները, մարդիկ եւ ես», Երեւ-

ան, «ԵՐԿ» ,1994, էջ 242:

2. Տե՛ս, նույն տեղում, էջ 243:

3. Տե՛ս, Զարեան Կ., «Դեպի ԱՐԱՐԱՏ», Երեւան, «Սարգիս Խաչենց», 2001, էջ 255:

4. Տե՛ս, մեր նախորդ գրությունը նույն ամսագրի մեջ:

5. Տե՛ս, Զարեան Կ., «Դեպի ԱՐԱՐԱՏ», Երեւան, «Սարգիս Խաչենց», 2001, էջ 288: Տե՛ս, նաեւ «Անցորդը եւ իր ճամբան», Երկեր, Տպարան Կաթողիկոսութեան ՀԱՅՈՑ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ, Անթիլիաս, Լիբանան, 1975, էջ 120:

6. Մեր ձեռքին ունենալով պարոն Մ. Նշանեանի մեկ գրությունը, անհրաժեշտ համարեցինք որոշ գրառումներ, մեջբերումներ անել նրա հետազոտությունից, որ կոչվում է «Եղեռնի լռութիւնը Կոստան Զարեանի արձակին մէջ»: Իսկ բուն մեջբերման հետ ընթերցողը կարող է հարաբերվել Կ. Զարեանի «Անցորդը եւ իր ճամբան» գրությունում. տե՛ս, ԵՐԿԵՐ, Տպարան Կաթողիկոսութեան ՀԱՅՈՑ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ, Անթիլիաս, Լիբանան, 1975, էջ 108-109: Լեւինը եւ իր կողմնակիցները «ՌԱԴՈՒԳԱ» անունով թերթ են հրապարակել, եւ 17-ամեա Կ. Զարեանն այնտեղ տպագրել է մի քանի (ռուսերեն) բանաստեղծություն, «Կ. Մարքսի մորուքը թաթախելով ՄԱԽԻ փիլիսոփայության մեջ», տե՛ս, նույն տեղում:

7. Տե՛ս, Զարեան Կ., «Դեպի ԱՐԱՐԱՏ», Երեւան, «Սարգիս Խաչենց», 2001, էջ 326-327:

8. Միջնորդավորումն իրականացել է նույն աղբյուրից, որի մասին խոսվեց վեցերորդ հոման մեջ:

9. Տե՛ս եւ խորամուխ եղի՛ր Վարուժանի ԵԼԺ 3 հատորով, Երեւան, ԳԱԱ հրատարակության հ. 3-ի, էջ 93 և 147 գրություններում:

10. Միջնորդավորումն իրականացել է ինչպես նույն աղբյուրից, այնպես էլ «ԱՆԿԱՐԵԼԻ ԹԱՏՐՈՆԸ» Կ. Զարեանին նուիրուած հետազոտությունից:

11. Զարեան Կ., «ՍՊԱՆԻԱ», Երեւան, «Նաիրի»,1998, էջ 18:

12. Տե՛ս, Կոստանյան Ա., «Բացարձակի որոնումը», Երեւան, «Սարգիս Խաչենց», 2004, էջ 129: Տե՛ս, հատկապես Զարեան Կ., ԵՐԿԵՐ, Տպարան Կաթողիկոսութեան ՀԱՅՈՑ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ, Անթիլիաս, Լիբանան, 1975, էջ 29-30:

13.Տե՛ս, Զարեան Կ., «Դեպի ԱՐԱՐԱՏ», Երեւան, «Սարգիս Խաչենց», 2001, էջ 299:

14. Տե՛ս, նույն տեղում, էջ 302:

15. Տե՛ս, նույն տեղում, էջ 304-305, 309:

16. Տե՛ս, «ՄԵՀԵԱՆ» Հանդես գրականութեան եւ Արուեստի, Կ. Պոլիս, 1 Յունվար 1914թ. էջ 3: Տե՛ս, Վարուժան Դանիէլ, ԵԼԺ 3 հատորով, Երեւան, 1987, հ. 3, էջ 213:

17. **Կ. Պոլսում ես եւ Վարուժանը Կոմիտասի** հետ բանավէճ ունեցանք: Ես եւ Վարուժանը այն համոզմունքն ունէինք, որ ապագայի ՀԱՅ երաժշտական արուեստը հիմնուելու է ՀԱՅԿԵԱՆ մշակոյթի վրայ, իսկ Կոմիտասը սկզբնական շրջանում համոզուած էր, որ մեր երաժշտութիւնը զարգանալու է բանահիւսութեան հիմքի վրայ». տե՛ս, Կոմիտաս Վարդապետ «Ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ», Երկու գրքով, Երեւան, «Սարգիս Խաչենց», 2005, Գիրք Ա, էջ 9: «Ամեն մի արատ, նույնիսկ պատահական արատ, կարելի է զարդի վերածել: Հիշում եմ մեր վիճաբանությունները Մարիենետտիի հետ,- պնդում է Կ. Զարեանը: Զարդանկարչականի եւ նկարչականի մեջ ո՛չ մի տարբերություն չկա,- ասում էր նա: Խնդիրը լույսի եւ գույնի բաժանման մեջ է եւ մնացածը նշանակություն չունի: Ես պնդում էի, որ զարդանկարչականը երբեք ամբողջականություն չէ, այլ մաս է: Նա չի արտահայտում, այլ զարդարում է, շոյում է աչքը, լցնում է տարածությունը, ինչպես Տիտորետտոյի՝ Ռոկոյի նկարների ծայրերում զետեղված պտուղները կամ ծաղիկները», տե՛ս, առավել մանրամասն «Դեպի Արարատ», Երեւան, «Սարգիս Խաչենց», 2001, էջ 312:

«Իր (**Վարուժանի, մեկ անգամ եւս հիշեցնենք, որ ում տաղերը մեր ՑԵՂԻ սրտին զարկերն են**) բաժանումը խումբէն (**ՄԵՀԵՆԱԿԱՆՆԵՐ**),- հաղորդագրում է Յ. Օշականը,- արդյունք էր ո՛չ թէ արուեստի հակամարտ կեցուածքներու, այլ աւելորդ դիւրազգայութեան, Կ. Զարեանի քիչիկ մը խոշոր յավակնութիւններուն, որոնք տանելի էին ինծի, ու Գեղամ Բարսեղեանին»..., տե՛ս, ավելի մանրամասն, «Համապատկեր Արեւմտահայ գրականութեան», տասը հատորով, Պեյրութ, «ՀԱՄԱԶԳԱՅԻՆ», 1968, հ. 6, էջ 187:

18. Այսօրինակ հանգուցային հարցի մասին խոսելիս՝ տարաբախտ գիտակցության հաղթահարմամբ՝ մտածումի բանական աստիճանից, առաջարկվում է սերտել հատկապես Ն. Սարաֆեանի արդեն ակնարկված հոդված - գրությունը, ուր հստակ սահմաններ է գծված օրինակի համար տարագիր եւ վտարանդի հասկացությունների միջեւ, ինչպես ինքը՝ Կ. Զարեանն է, որ առաջարկում է ՍՓԻՒՌՔ հասկացությունը փոխարինել հայութիւն կամ հայկականութիւն հասկացականով, ինչպես բուն ՄԵՀԵՆԱԿԱՆՆԵՐՆ էին, որ առաջարկում էին վտարել ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ԵՒ ԱՐԵՒԵԼԱՀԱՅ տարազները՝ որպես այդպիսին: ...եւ ամենեւին էլ պատահական չէ, որ Յ. Օշականը Վահան Թէքէեանին նվիրած աշխատութեան մէջ ունի այսպիսի դիրքորոշում. «**...խոսիլ Վ. Թէքէեանի վրայ, զբաղիլ է արեւմտահայ գրականութեամբ, Կ. Զարեանի վրայ՝ կը նշանակէ ՍՓԻՒՌՔԸ վերլուծել**». տե՛ս, Օշական Յ. «Համապատկեր Արեւմտահայ գրականութեան» տասը հատորով, Կաթողիկոսութիւն ՀԱՅՈՑ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ, Անթիլիաս, Լիբանան, 1980, հ. 9, էջ 427:

19. Տե՛ս, Օշական Յ., «Համապատկեր Արեւմտահայ գրականութեան», տասը հատորով, Պեյրութ, «ՀԱՄԱԶԳԱՅԻՆ», 1968, հ. 6, էջ 187:

20. Տե՛ս, Աճառյան Հր., «Հայերենի արմատական բառարան», չորս հատորով, Երեւան, «Երեւանի համալսարան», 1971, Հ.1, էջ 505:

21. Տե՛ս, Զարեան Կ., «ՍՊԱՆԻԱ», Երեւան, «Նաիրի», 1998, էջ 53:

22. Տե՛ս, Աճառյան Հր., «Հայերենի արմատական բառարան», չորս հատորով, Երեւան, «Երեւանի համալսարան» 1979, Հ. 4, էջ 351:

23. Տե՛ս, նույն տեղում, էջ 381:

24. Զարեան Կ., «Դեպի ԱՐԱՐԱՏ», Երեւան, «Սարգիս Խաչենց», 2001, էջ 303:

ՎԱՐԴԱՆ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
Փիլիսոփայական գիտությունների թեկնածու

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանում այս տարի կանցկացվեն մի շարք միջազգային փառատոներ: Ըստ «Արմենպրեսի», կկազմակերպվեն իտալական ֆիլմերի, Ազգային պատկերասրահում՝ երաժշտական չորրորդ, Առնո Բաբաջանյանի երգի, «21-ի հեռանկարներ» դասական երաժշտության փառատոները: Անցկացվելու են նաև «Արմմոնո», «Հայ ֆեստ», Ծաղկաձորում՝ Մնջախաղի թատրոնի միջազգային փառատոները, Դսեղում՝ «Թումանյանական հեքիաթի օր» տիկնիկային միջազգային թատերական չորրորդ փառատոնը: Հայաստանի մշակութային խմբերն իրենց հերթին կմասնակցեն արտերկրում անցկացվող միջազգային փառատոների, մասնավորապես՝ Ստրասբուրգում՝ «Ռոմանական ձայներ և ճանապարհ» փառատոնի շրջանակներում: «Ազգ», 18.03.2008թ.

«ՀԱՅ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԱՇՏԸ»

Պրոֆեսոր Ռ. Բ. Դիքսոնի վկայությունները

(Սկիզբը՝ թիվ 4/10, 5/11)

3. Անչափ երկարատև եղան դատարանում պրոֆեսոր Ռոլանդ Բրիջ Դիքսոնի վկայությունները: Պրոֆեսոր Դիքսոնը Ամերիկայի Միացյալ Նահանգների ամենահայտնի գիտնականներից մեկն էր, ուստի, դատապաշտպան Ջորջ Ուիլիս Մըքգեմենքը փորձ արեց ամբողջական պատկերացում ներկայացնել դատարանին հայերի մասին: Պետք է ասել, որ փաստաբանի փորձը պսակվեց հաջողությամբ: Փորթլենդի օկրուգային դատարանի նիստերի դահլիճը հայագիտության մասին բավական սպառիչ և հանգամանալից գիտական մի զեկուցում լսեց, որն իր տեսակի մեջ առաջինն էր Միացյալ Նահանգների պատմության մեջ:

Հարվարդի համալսարանի պրոֆեսոր, մարդաբանության մասնագետ 49-ամյա Ռոլանդ Բրիջ Դիքսոնը, ով ընդհանուր առմամբ 27 տարի Հարվարդի համալսարանում զբաղվում էր մարդաբանության տարբեր ճյուղերի ուսումնասիրություններով և դասախոսություններով, 1915 թվականից համալսարանի պրոֆեսոր էր: Արվեստագիտության դոկտոր, փիլիսոփայության մագիստրոս Դիքսոնը 1924-ին, այսինքն՝ Փորթլենդի դատավարության ժամանակ, Ամերիկյան մարդաբանական ընկերակցության անդամ էր: 1918 թվականին նա ընկերացել էր ԱՄՆ-ի նախագահ Ուիլսոնին Խաղաղության համաշխարհային վեհաժողովի ժամանակ, որն անցկացվում էր Փարիզում: Լինելով ամերիկյան պատվիրակության ցեղաբանը՝ Դիքսոնը Համաժողովի ժամանակ ընտրվում է ցեղաբանության բաժնի պետ:

Գիտական մի շարք աշխատությունների հեղինակ պրոֆեսորը 1923 թվականին հրապարակել էր «Մարդու ցեղային պատմություն» երկասիրությունը, որում անչափ կարևոր տեղեկություններ կան նաև հայերի ծագման, պատմության և ցեղային խմբավորումների մասին:

Ինչպես իր երկասիրությունում, այնպես էլ դատավարության ժամանակ պրոֆեսորը բազմաթիվ օրինակներ է բերում հայերի ինքնությունը ճշգրիտ ներկայացնելու համար:

Հերոդոտ ու Ստրաբոն, Բլումենբախ ու Մեդիսոն Գրենտ, Բրինտոն ու Լինչ… Վկայակոչված բազմաթիվ հեղինակների օգնությամբ Դիքսոնը դատավարության ժամանակ կարողանում է ապացուցել իր մենթալիտետով եվրոպական ազգ լինելու հայերի իրավունքը:

Այս վկայության ժամանակ պարզորոշ երևում է, որ պաշտպանական կողմի ներկայացուցիչ, փաստաբան Ջորջ Ուիլիս Մըքգեմենքը հիանալի է տիրապետում նյութին, լավ գիտե հայոց պատմությունը: Ուստի, Մըքգեմենքի և Ռոլանդ Դիքսոնի հարցն ու պատասխանը ավելի շատ հիշեցնում է գիտական զրույց: Մանրամասն վերլուծելով հայերի մասին եղած գիտական աշխատությունները, նրանք խոսում են ավելի մոտ ժամանակների՝ XIX դարավերջի և XX դարասկզբի գիտական աշխատությունների մասին:

Լսելով շատ ու շատ հեղինակների՝ հայերի ազգային տիպի մասին արտահայտած կարծիքները, Մըքգեմենքը Ռոլանդ Դիքսոնին հարցնում է, թե կարո՞ղ է ուրիշ հեղինակներ ու աշխատություններ էլ ներկայացնել:

- Մինչև Հ. Ֆ. Լինչի «Հայաստան ճամփորդություններ և ուսումնասիրություններ» գործին անցնելը կարողանամ թերևս մատնանշել մեկ-երկու ուրիշները:

- Այն, ընդհանրապես, հեղինակավոր և վստահելի աշխատությո՞ւն է:

- Այո՛, այն հեղինակավոր աղբյուր է Հայաստանի մասին,- ասում է Ռոլանդ Դիքսոնը: - Իր աշխատության երկրորդ հատորում՝ 67-րդ էջում, Լինչը հետևյալ կերպ է արտահայտվում.

«Բոլոր ապացույցները հավաստում են եզրակացությունը, թե նրանք (հայերը) իրենց հայրենիք մուտք գործեցին արևմուտքից, իբրև հնդեվրոպական ժողովուրդների գաղթականության կարևոր մեկ ճյուղ, անցնելով Եվրոպայից Փոքր Ասիա ու թերևս սկզբնական շրջանում գալով Սև ծովի հյուսիսային բնակավայրից»: Այստեղ կուզեի հիշատակել Ու. Զ. Ռիպլիի «Եվրոպայի ցեղերը» գիրքը, որի 448-րդ էջում ասվում է. «Սրա (այսինքն՝ հայանման տիպի) նույնությունն Արևմտյան Եվրոպայի մեր ալպյան ցեղերի հետ մասնավորապես շեշտել է պրոֆեսիոնալ, հեղինակավոր Ֆոն Լուշանը… Ալպյան ցեղախմբի շարունակությունը Փոքր Ասիայի մեկ ծայրից մյուսը բնավ տարակուսելի չէ»:

- Ո՞վ է Ֆոն Լուշանը:

- Գերմանիայի ամենակարկառուն մարդաբաններից մեկը, որ մահացավ անցյալ տարի: Մի ամբողջ սերունդ նրան համարել է Գերմանիայի և Եվրոպայի երկու կամ երեք լավագույն մարդաբաններից մեկը: Նա մոտ 20 տարի մասնավոր ուսումնասիրություններ է կատարել Փոքր Ասիայում:

- Ֆոն Լուշանը ո՞ր կարգում է դնում կամ որտե՞ղ է տեղ հատկացնում հայերին:

- «Արևմտյան Ասիայի նախնական բնակիչները» իր աշխատության մեջ, որ հրատարակվել է Մեծ Բրիտանիայի և Իռլանդիայի Արքայական մարդաբանական ինստիտուտի օրգանում (1911թ., հ. 41, էջ 243) իր ընդհանուր խորհրդածություններում այսպես է արտահայտվում. «Կենտրոնական Եվրոպայի ալպյան ցեղախումբը որոշակիորեն ազգակից կամ խնամի է նրանց (այսինքն՝ Փոքր Ասիայի հին ժողովուրդներից մեկն են) եկան Կենտրոնական Եվրոպայի՞ց, թե՞ ալպյան ցեղախումբը եկավ Արևմտյան Ասիայից»:

- Աստվածաշնչից արված մեջբերումներում նշմարում եմ «հայատիպ խումբ» ոճի գործածությունը: Կբարեհաճեք ասել, թե ի՞նչ է նշանակում «հայատիպ»:

- «Հայատիպ» եզրույթ է, որը, կարծեմ, առաջին անգամ գործածում է Ֆոն Լուշանը՝ Փոքր Ասիայի տարածքում գտվող ժողովուրդներից մեկին, որը նմանվում է հայերին, նկարագրելու համար:

- Ուրիշ ճանաչված հեղինակներ կուզեի՞ք նշել:

- Եվս մեկը պետք է ավելացնեմ: Անգլիայի Քեմբրիջ համալսարանի մարդաբանության պրոֆեսոր է. Ս. Հադդընի «Մարդկային ցեղերն ու նրանց տարածվածությունը» գրքի 15 և 16 րդ էջերում արված նկատառումը: 1914 կամ 1916 թվականներին է լույս տեսել այս գիրքը՝ առանց հրատարակության տարեթիվը իր առաջին էջին (տիտղոսաթերթին) ունենալով:

- Նա հայերին համարում է ալպյան ցեղախմբերին պատկանող, նրանց միացնելով սեվենոլների ու բալկանների դինարյան խմբի հետ, որոնց նկատում է որպես «անատոլյանների հավանական շառավիղներից մեկը», որը, իր կարծիքով, էապես նույնանման է հային:

- Գիտնականներն առաջին անգամ ո՞ր թվականից են սկսել գործածել «ճերմակ ցեղ» բացատրությունը:

- Հին, այսինքն՝ 19-րդ դարի առաջին կեսի գիտնականները գործածել են այս բացատրությունը: Կարող եմ մեկ-երկու մեջբերումներ կատարել, եթե ցանկանում եք: Օրինակ, Օմալիու դը Հալլեյը 1845 թվականին Փարիզում հրատարակել է «Մարդկային ցեղերը կամ Տարերք ցեղագրության» գիրքը («Des Racec Humanies ou Elements d'Ethnographie», Omalius d'Halley), որի 78-րդ էջում հայերին համարում է պարսկական խմբին պատկանող «ճերմակ ցեղ»: Այս կապակցությամբ կուզեի ավելացնել, որ այս դասակարգումը կրկնակի իմաստ ունի: Նա «պարսկական» բառը գործածել է այստեղ զուտ լեզվաբանական իմաստով, որովհետև այն ժամանակ՝ 19-րդ դարասկզբին, հայերենն ավելի շատ աղերսված էր նկատվում արիական լեզվի պարսկական ճյուղի, քան եվրոպականի հետ: Նորագույն ուսումնասիրությունները ցույց են տվել, որ անճիշտ է այդ

տեսությունը, և հայերենն անվիճելիորեն աղերսված է ասիական բարբառի եվրոպական ճյուղին: Նմանօրինակ ուրիշ օրինակներ էլ կուզե՞ք:

- Կցանկանայի, որ Ֆյուգիեից մի վկայակոչություն անեիք:

- Ֆյուգիեն իր «Մարդկային ցեղերը» աշխատության մեջ («Les Racec Humanies» Fuguie, Paris, 1872 թ., էջ 216) հայերին դասում է «ճերմակ ցեղի» Արամյան ճյուղի տակ: 1907 թվականին հրատարակված կաթոլիկ հանրագիտարանում, որը գիտական ու հեղինակավոր մի հրատարակություն է ճանաչված, Ա հատորի 726 էջում ասում է. «Որքան մեզ հայտնի է, Հայաստանի հնագույն բնակիչները «ճերմակ ցեղին» էին պատկանում»:

- Պարոն Դիքսոն, կբարեհաճեի՞ք, ըստ կարելվույն, հակիրճ կերպով բացատրել հայ ազգի՝ իբրև առանձին ազգային խմբակցության պատմությունը:

- Ես միայն ընդհանուր կերպով եմ ծանոթ պատմական իրողություններին և մանրամասնությունները չգիտեմ: Բայց ցեղաբանությանը գալով, կարող եմ ասել, որ հայ ժողովուրդը կազմված է վերևում ակնարկված այս երկու տարրերի՝ հինավուրց սկզբնական ալպյան խմբի և հայ ժողովդին իր լեզուն տրված հնդեվրոպական փռյուգիական խմբի միաձուլումից: Հայերը, որպես ազգ, խիստ մեծ կարևորություն ստացան իրենց պետությունն ունենալով Փոքր Ասիայի մեջ: Նրանք Ք. ծ. ի. վեցերորդ կամ յոթերորդ դարում մեծ հարձակումների ենթարկվեցին Փոքր Ասիայով հաղթականորեն արշավող թուրքական և կենտրոնական ասիական ծագում ունեցող այլ խմբերի կողմից: Հայերը պահեցին իրենց ազգությունն ու ազգային հատկանիշներն ընդդեմ այս հաղթական անցնող ցեղերի: Պահեցին դարերով: Նրանք քրիստոնեությունն ընդունած գրեթե առաջին ազգն են և պահել են իրենց հավատքը 4-ը դարից մինչև մեր օրերը:

- Իբրև ազգ, նրանք ո՞ր թվականին ընդունեցին քրիստոնեությունը:

- Կարծեմ 4-րդ դարի սկիզբին կամ 3-րդ դարի ամենավերջում:

- Նախքան քրիստոնեությունը հայերը ճանաչվա՞ծ էին իբրև անկախ և զորավոր ազգ:

- Այո՛:

- Քանի՞ դար, որքա՞ն կարող եք հիշել:

- Պատմաբան չեմ, բայց վստահաբար պիտի ասեի՝ շատ դարեր:

- Իրողություն է, չէ՞ որ Հայաստանի թագավորությունը Հռոմեական կայսրության մաս է կազմել:

- Այո՛:

- Եվ պատմական իրողություն է, չէ՞ որ զանազան հայեր բյուզանդական կայսրեր են եղել:

- Այո՛:

- Երբևէ ուսումնասիրե՞լ եք խաչակիրների ազդեցությունը Հայաստանի վրա և նրանց մուտքը այդ երկիր:

- Խաչակիրների կապակցությամբ ուշագրավ հանգամանքներից մեկն այն է, որ հայերը հեշտությամբ ձուլվեցին նրանց հետ և եվրոպական ինքնական միություն ստեղծեցին: Որոշակի ապացույց ունենք, որ այդ շրջանում հայ արքայական գերդաստանն ազատորեն փոխադարձ ամուսնություններ կնքեց Ֆրանսիայի և արևմտաեվրոպական խաչակիրների հետ:

- Իրողություն է, չէ՞ որ պատմության մեջ ուրիշ ժողովուրդներից առավել հայեր են պահել անհատականությունը, կրոնը և իրենց ազգային հատկանիշները՝ ընդդեմ հաղթական թուրքերի:

- Այո՛, անշուշտ:

- Առիթ ունեցե՞լ եք քննելու, թե հայերն ի՞նչ համեմատությամբ են ձուլվում ուրիշ երկներում, և եթե ունեցել եք, բարեհաճեք տեղեկություններ տալ եվրոպական երկրների մասին:

- Վստահելի փաստեր կան այն մասին, որ հայերը գաղթեցին և բնակություն հաստատեցին Մարսելում, հարավային Ֆրանսիայում, Գերմանիայում, Ռուսաստանի ինչ-որ տարածքներում ու, կարծեմ, Իտալիայում, դարերի ընթացքում ազատորեն խառնվեցին բնիկ տարրերին, փոխադարձ ամուսնություններ կնքեցին նրանց հետ, ինչպես նաև հռչակվեցին գրականության, գեղարվեստի ու գիտության ոլորտներում:

- Որևէ հետազոտություն ունե՞ք Միացյալ Նահանգներում հայերի ձուլման մասին:

- Ունեմ մի շարք ապացույցներ, որոնք հիմնված են Կոլումբիա համալսարանի հրատարակած պատմության, տնտեսագիտության և օրինագիտության մատենաշարի համար Դրեշլերի հեղինակած «Փոխադարձ ամուսնությունները Նյու Յորք քաղաքում» մենագրության վրա (Intermariage in New York City, Drochslr): Մատենաշարի 1921 թվի 2, 94-րդ հատորում նա, ուսումնասիրելով Նյու Յորք քաղաքի նախապատերազմյան շրջանի 6 տարիների մոտ 100 հազար ամուսնական արտոնագիր, նա իր ուսումնասիրությունում մատնանշում է հայոց և այլ ազգերի միջև կնքված փոխադարձ ամուսնությունները: Հաշվելով միայն առաջին և երկրորդ սերունդների տղամարդկանց, Դրեշլերը հետևյալ թվերն է բերում. հայ տղամարդկանց 17.5 տոկոսը ամուսնացել է այլ ազգի կանանց հետ: Այս թիվն արժե բաղդատել. իռլանդացիների մոտ այն կազմում է 17,4, հյուսիսային իտալացիների մոտ՝ 14,8, բոհեմացիների մոտ՝ 12, շվեդների մոտ՝ 26 տոկոս: Հայերը հիմնականում ամուսնացել են կանադացիների, անգլիացիների, գերմանացիների, իռլանդացիների և շվեդների հետ: Հայերի երկրորդ սերունդն արդեն հիմնականում խառն ամուսնություններ է կնքել:

Դատախազի խորհրդական Քրուքսը հարցնում է.

- Պրոֆեսոր, ուրեմն, անվարան կարող եք ասել, թե հայերը «ճերմակ անձեր» են, այս բառի քաղաքացիական օրենսգրքի մեջ գործածված իմաստո՞վ:

- Այո՛, կարող եմ ասել առանց վարանումի:

…Ապա անչափ հետաքրքրական, գիտականորեն հիմնավորված հայանպաստ վկայություններ են տալիս դոկտոր Ջեյմս Լ. Բարթընը (Բոստոն), ով 1885-1919 թվականներին բազմիցս այցելել է Հայաստան, Թուրքիա, Մերձավոր Արևելք, հիանալի խոսում էր հայերեն, լավ ծանոթ էր տարածաշրջանի և հատկապես, հայերի ազգային առանձնահատկություններին: Սա ևս որևէ արգելք չի տեսնում հայերին «ճերմակ անձերի» շարքում տեղավորելու համար, այն իմաստով, ինչ պահանջում է Ամերիկայի Միացյալ Նահանգների սահմանադրությունը:

Դատավարության ժամանակ անչափ կարևոր և հավաստի տեղեկություններ է հրապարակում Կոլումբիայի համալսարանի մարդաբանության պրոֆեսոր Ֆրանս Բոազը: Ելնելով իր ուսումնասիրությունների արդյունքներից, ինչպես նաև բազմաթիվ գիտական այրերի աշխատությունները վկայաբերելով, պրոֆեսոր Բոազն այն հաստատ կարծիքն է հայտնում, որ հայերին առանց վերապահության կարելի է կոչել «ճերմակ անձ»:

Մեր ձեռքի տակ գտնվող այս դատավարության ամբողջական սղագրությունը (ավելի քան 100 էջ ծավալով) անչափ հետաքրքրական է ցույց տալու համար, թե ինչպես հայերը շահեցին դատը և ԱՄՆ-ի լիիրավ քաղաքացի դառնալու իրավական հիմքն ունեցան: Դատավարության ժամանակ արձանագրված հարցաքննություններն ու ճառերը հայոց պատմության հարցերով զբաղվող գիտական այրերի համար լուրջ նյութերը կարող են ծառայել:

Եվ այսպես, 1925 թվականի հուլիսի 27-ին հրապարակվեց դատավճիռը, որով օրինական ճանաչվեց ԱՄՆ-ի քաղաքացիության իրավունք ստանալու համար ցանկացած հայի դիմումը: «Սոված հայեր» արտահայտությունը, որը մինչ այդ պաշտոնական կարծիք էր ԱՄՆ-ում, վերացվեց:

ՍԵՐԳԵՅ ԳԱԼՈՅԱՆ

ԹԵՈԴԻԿԻ ԵՂԵՌՆԱՊԱՏՈՒՄԸ

4. Երբեմն անհավատալի թվալու աստիճան զարմանք է հարուցում այն հանգամանքը, որ մի կարճ, բայց բուռն ազգային նվիրագործությունների ժամանակաշրջանում (1890-1915թթ.), ինչո՞ւ չէ, նաև ազգային ողբերգության դարձակետային տարիներին, իրար հետ, կողք-կողքի ապրել և ստեղծագործել են հայ մտքի, ոգու, բազկի բազում նվիրյալներ: «Անձինք նվիրյալք» այս գիտակցումի կարևորությունը խորապես են ապրել, ի գին ամեն ինչի հավատամքով ծառայել ի վերուստ տրված աստվածատուր կոչմանը:

Ռուբեն Զարդարյանը այդ խնկելի անուններից էր, գրող և խմբագիր: Ազգային գործչի իր համբավն ու երևույթները կշռադատելու ունակությունը տակավին 1909թ. նրան ստիպեց հիմնադրել «Ազատամարտ» օրաթերթը, որը հետագայում պիտի համարվեր հայ ազգային կյանքի իրավ բեմ: Ժամանակի բազմաթիվ գրողներ, մշակույթի, հասարակական, քաղաքական գործիչներ իրենց ազգային-քաղաքական մկրտությունը ստացան «Ազատամարտ»-ում, ձևավորվեցին գաղափարապես և, ըստ ամենայնի, իրենց նպաստը բերեցին դժվարագույն ժամանակներ ապրող հայության կյանքի դույզն-ինչ բարելավմանը: Չհաջողեցի՞ն նրանք, եղա՞ն ականջալուր թուրքական վերնախավի սին խոստումներին: Բարեկորոգությունների լայն ծրագիր պահանջելով հավատացի՞ն Ռուսաստանի և Եվրոպայի խոստումներին: Թե՞ թուրքական խարդավանքներին էին անպատրաստ: Սրանք բոլորովին այլ խնդիրներ են՝ բազմիցս արծարծված թե՛ ժամանակի և թե՛ հետագա շրջանի պատմաբանների կողմից:

«Ժողովուրդներու արյունը այնքան առատ ու անհաշիվ հոսած է՝ որքան անօրինակ, աննախընթաց ու հազվադեպ եղած է խղճահարությունը բռնապետին մութ հոգիներին մեջ: Բայց բռնապետին արցունքը չէ կաթած երբեք պատմության մեջ: Ահա թե ինչու համար վշտակիր մարդկության Տառապանքը ու Արյունը՝ իբրև նախատինք ու վրեժխնդրություն պիտի շարունակեն պղպջալ ու վեր ժայթքել միշտ բռնավորների պալատներուն սեմին վրա և բազմատեսակ բազմությանց ընդդեմ, մինչև որ ընկերական արդարության ու ազատության մեծ Գաղափարը գա վերջ դնելու մարդկային ստրկության և շահագործության, խնայելով Բռնավորներուն պղնձե աչքերը՝ կարեկցության արցունքներե, և մարդկությունը՝ իր հով արյունե»:

Ռ. Զարդարյանի այս մտածումները իր պատմական հայրենիքում իբրև վտարանդի ապրող ազգային գործչի, գրողի ապրումներ չեն սոսկ, որ ապրելով դժոխային ներկան, ապագան չէր տեսնում, և եթե տեսնում էր, ապա ներկայի զարգացումների հոլովույթում միայն: Համենայն դեպս, քաղաքական իրավիճակն այլ բան չէր հուշում: Մանավանդ, երբ խնդրահարույց է դառնում նժարի վրա դրվող մի ողջ տեղաբնակ ժողովրդի ճակատագիր: Ընդհանրապես, հանրագիտարանային նշանակություն եւ մնայունություն ունեցող թեոդիկյան վավերագրապատումներում ներկայացված մտավորականության գերակշիռ մասն իր անցյալ գործունեությամբ, ստեղծարար աշխատանքով մեր պատմության մեջ ոչ միայն խոր հետագիծ է թողել, այլեւ ստեղծած մնայուն արժեքներով իր ժամանակի ոգու կրողն է եղել՝ մշտապես ազգային մտահոգություններով ներշնչուն, ազգային խնդիրներով բազմազբաղ, հնարավորինս իր գործունեությամբ նպաստելով ամենալայն առումով հայ կյանքի դժվար պայմանների բարելավմանը: Սակայն իրականության եւ իդեալի սահմանագծին ժամանակն այլ մարտահրավերներ էր հրամցնում:

«Իրականություն եւ իդեալ, առանց այդ երկվորյակ ըմբռնումներուն ազգ մը միշտ ենթակա է անկումներու եւ դառն հուսախաբութեանց: Մեկով միշտ կյանքին շփումը կունենաք, մյուսով մեր աչքերը հեռանշող աստղին կհառեք»: Խմբագիր, հանրային գործիչ, ազգային երեսփոխան **Սարգիս Մինասյանը**, որ քաջահմուտ էր նաեւ ֆրանսերեն լեզվին, «աշխատասիրած է Ֆրանս-հայերեն բառարան մը», իր փորձառությամբ եւ իրականությունը ըստ ամենայնի արժեւորելու «իրատեսական ճիգով մը» չէր կարող «անկումներու» կանխատեսությունը եւ ներքին տագնապը չունենալ: «Իրականության մարդ մը»՝ ինչպես նա բնորոշել է մեծ հայդուկապետ Աղբյուր Սերոբին (Սերոբ Վարդանյան), որի կենսագրապատումը հրատարակել է 1990-ական թթ., Ժնեւում, Արամ Աշոտ գրչանվամբ:

Մտավորականի ուրույն նկարագրով եւ «հոգվո վեհությամբ» օժտված այս հայորդին, տակավին «Դրոշակ»-ում տպագրած հոդվածներում, հայ-թուրքական հարաբերությունների մասին իր եզրահանգումներում իրատեսորեն այն համոզմունքն էր հայտնում, որ հնարավորինս պետք է հոգածու լինել հայ ազգաբնակչության նկատմամբ՝ որոշակի անվտանգության երաշխիքների ապահովմանը: Տարբեր տարիներ ապրելով արտասահմանյան մի շարք երկրներում, քաջ ճանաչելով արեւմտյան դիվանագիտության «խարդավանալից եւ սնանկ նկրտումները, որով երեւութապես օգտակար ըլլալու ճիգեր ցույց կուտան»՝ Ս. Մինասյանը երբեք այն համոզմանը չհանգեց, որ «հայուն վերջին եւ տեսանելի-փրկարար հույսը Եվրոպայի կողմե տարփողվող բարեկորոգութեանց շնորհիվ կարելի կըլլա ազգ ապրեցնել»:

ԱՐԹՈՒՐ ԱՆԴՐԱՆԻԿՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու



Չհագեցած վրեժ

Ես համբուրո՞ւմ եմ
Քո վրիժառու ձեռքը, իմ
ժողովուրդ.-
Քոնը՝ Թեհլերյան,
Քոնը՝ Շիրակյան,
Քոնը՝ Երկանյան-
Վրեժնե՛ր-մարդու
կերպարանք
առած...

Եվ խոնարհվում եմ,
Չեր,-
Անհնարին հնարից ծնված
քաջության առաջ...

ԳԵՎՈՐԳ ԷՄԻՆ

22 դեկտեմբերի, 1982թ., Երևան

ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆԻ ՊԱՏԿԱՌԵԼԻ ԿԵՐՊԱՐԸ



Երբ ինչ-որ գործ ես ուսումնասիրում, միշտ փորձում ես գտնել արժանիքներն ու առավելությունները, Ալեքսանդր Թոփչյանի «Եվ անգամ մահից հետո» վեպի առավելությունը թերևս այն է, որ զերծ է գրականության դարերից եկող այն չգրված օրենքից, համաձայն որի, գլխավոր հերոսի կերպարը զտում են, մաքրում, ուռճացնում նրա արժանիքներն ու հատկանիշները: Վեպում երիտասարդ Ռուբենի (նույն ինքը՝ արևմտահայ հայտնի մտավորական, 1915թ. Հայոց ցեղասպանության նահատակ, ազգային հերոս, Ռուբեն Սևակը) թուլությունների ու թերությունների կողքին հստակ երևում է, թե ինչպես է հասունանում պատասխանատու մարդն ու քաղաքացին, և ակնհայտ է դառնում հայ մտավորականի իրական՝ պատկառելի կերպարը: Մարդ, ով իր գործում ձգտում էր հասնել հնարավորինս ավելիին: Մարդ, ում քաղաքացի, ընկեր, ամուսին, զավակ, հայր լինելու նշանաձողը, երբեք չէր զիջում սոսկ մասնագետի նշանաձողին:

«Եվ անգամ մահից հետո» վեպը պետք է ընդունել ոչ միայն, որպես բանաստեղծի կենսագրություն, այլ որպես հաջողված վարքագրություն, որն իր մեջ նրբությամբ ու զգուշությամբ ամբարում և կողք-կողքի է դնում չգիտակցված կեղծ ու անկեղծ, անթերի զգացմունքները և զգուշորեն տարանջատում դրանք:

Ռուբենի կերպարը լրացնում է նաև նրա կնոջ՝ Յաննի Ապելի կերպարը: Եվ որպես կանոն, կնոջ մասին խոսելիս, անպայման շեշտվում է ազգությունը: Հերոսուհին՝ Ռուբենի կինը, հայ չէր, գերմանուհի էր: Նա մի պարզ կին էր, ով գիտեր սիրել, նվիրվել և երջանկության դռներ բացել: Կին, ով մինչև կյանքի վերջ պահպանեց իր ուխտը՝ հոգեպես մնալով իր սիրելիի՝ Ռուբենի հետ:

Այն օրերին, երբ գերմանացի դիվանագիտները թուրքերի հետ իրենց դիվային քաղաքականությունն էին ի գործ դրել, հայերին իրենց իսկ հարազատ հողում կործանելու, Յաննին ամուսնու, երկու երեխաների հետ եկավ Պոլիս: Ռուբենը քաղաքացի էր, հայության կարկառուն ներկայացուցիչ, բժիշկ և հետո միայն ամուսին ու զավակ: Դա է վկայում նրա պահվածքը. սպանդի՝ մահվան ճանապարհին նրա կողմից մերժվեցին փրկության երեք հնարավորություններն էլ, նախ՝ կարող էր մնալ Գերմանիայում՝ չմնաց, երկրորդ՝ կարող էր օգտագործել գերմանուհու ամուսին լինելու փաստը՝ չօգտագործեց և երրորդ՝ արդեն մահվան երախից կարող էր դուրս պրծնել թրքուհու միջոցով, դուրս չեկավ: Ռուբեն Սևակին, իր պատվին, հանուն իր փրկության անգամ, անհարիր էր «օգտագործել» կնոջը, թեկուզ և՝ թրքուհուն:

Վեպի ընթերցումը, սոսկ ընթերցանություն չէ. թվում է, ընթերցում ես քաղաքացի ու մարդ լինելու այբուբենը: Հեղինակը գտել և շատ նրբանկատորեն օգտագործել է ներգործելու ձևը: Այս գիրքը միշտ թարմ կլինի, միշտ «ժամանակակից», հետաքրքիր ու հուզումնալից, քանի դեռ կա մարդկությունը, քանզի վերջինիս բարեմասնություններն ու թերությունները կրկնվում են: Փոխվում է միայն ժամանակը, իսկ այդ ամենը շտկելու և ուղղելու ճանապարհը մեկն է...:

Դեռ երկար ժամանակ այս գիրքը յուրաքանչյուր ընթերցողի հետ այդ ժանապարհով պիտի ընթանա արևմտահայ բանաստեղծ, բժիշկ, հայ, հայր, իրավ մտավորական Ռուբեն Սևակը ու շատերի հետ պիտի տա նույն հարցը՝ «ԻՆՉՈ՞Ւ...»

ԱՐՓԻՆԵ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

Հայ պատանիներն ու աղջիկները զոհվում էին, իսկ միջազգային բառացանկում շրջանառության մեջ էր դրվում մտնում «Հայկական ահաբեկչություն» արտահայտությունը, որի դեմ պայքարը վերածվեց Երկիր մոլորակի հզորների կիրառած դաժանությունների համակարգի՝ դատավարություն դատավարության հետևից, կախաղաններ, բանտախցեր, հալածանքներ, հետապնդումներ: Դա նաև մեծ տերությունների հանցապարտություններից ծնված դաժանություն էր:

Ովքե՞ր էին այդ ահաբեկիչները՝ Մեծ եղեռնից փրկվածների ժառանգները, որոնց մեջ արթնացել էր արյան հիշողությունը և առաջացրել էր անհաղթահարելի ձգտում՝ հայ մնալ, տեր դառնալ ապօրինաբար խլված հայրենիքին:

ՍՏԵՓԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ
«Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմություն. Նահատակներ հավերժության», Երևան - 2005



ՀԱԿՈԲ ՏԱՐԱԳՉՅԱՆ
1958-1981: Նահատակվել է Լիբանանում՝ մարտի 17-ին:
Ցեղասպանությունից 60 տարի անց, երբ խոսքի ասպետները մեր ժողովրդին միայն գունավոր երազներ էին խոստանում, Հակոբը, տակավին դեռ չբոլորած իր 19 գարունը, հայկական նորագույն պատմության մեջ առաջին անգամը լինելով, Թուրքիայի մի շարք քաղաքներում իր ռմբահարումներով արար աշխարհին ավետեց, որ կա՛ հայ ժողովուրդ, կա՛ հայկական պահանջատիրական պայքար, կա՛ իրավազուրկ ժողովրդի ոտնահարված իրավունք: Դժբախտաբար, նրա կյանքի թելը շատ վաղ կտրվեց: Անողոք հիվանդությունն ավելի քան մեկ տարի նրան անկողնում էր գամել:

ՍԻԼՎԱ ՉԻԼԻՆԿԻՐՅԱՆ
1958-1984: Նահատակվել է Լիբանանում՝ 12 մարտ 1984-ին: Ուսուցչուհի...



ՄՈՎՍԵՍ ԲԵՔԱՐՅԱՆ
1954-1985: Նահատակվել է Լիբանանում՝ 13 մարտ 1985-ին:

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆ
ԱՐԱՐԱՏ ԼԵՌԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅԱՆ ՎԵՐՀՈՒՇԸ

(Սկիզբը՝ թիվ 5/11-ում)

29. Այստեղ արեգակի երկնարձակ պայծառ լույսի ծոցում ընկղմված,
Զմայլված նայում եմ ձորն ի վար, որպես թե մի նոր աշխարհ:
Այստեղ երկնքի պարն է շառագունում երկնակամարի ծագերից ամպամած,
Ուր ամեն կողմից քստմնելի մութն է գիշերվա ամբոխվում խարխափուն:

30. Հանդիպակաց դաշտի դյութական տեսքը միգապատ,
Ինձ հիշեցնում է հին աշխարհի ազգերի կործանման օրհասը դժբախտ:
Այնտեղ գետերն են ծփում, դաշտերը զվարթանում նոր ընտանիներով,
Նորոգ փոփոխմամբ՝ թշնամիներին պարտության մատնած հզոր իշխանների:

31. Դարձավ արեգակն իր սահմաններին երկնակամարում հորիզոնի,
Ես էլ ուշքի եկա, իմ շուրջը զգալով սարսափը փախուստի:
Վա՜յ, ավա՜ղ է ինձ, ո՜վ այստեղ բերեց ինձ գագաթը Մասիսի,
«Կորչում եմ այստեղ» ուղղեցի Բարձրյալին կանչս թախծագին:

32. «Առաջնորդս եղի՛ր, անհուն և անճառ միշտ Տերդ հավիտյան,
Ուղեկից եղի՛ր մոլորյալ տարագրիս իր տեղը դառնալու:
Վերցրու այստեղից տար ինձ, ուր մերձ են ահա ոտքերս ջախջախված ներքև սահելու,
Վերցրու այստեղից տար ինձ, քանի չեն պատել ինձ գիշեր կամ խավար:

33. Ո՜վ անհուն, անհաս վերին էակիդ խնամարկությանը,
Ո՜վ, ում խորին, անճառելի իմաստությանը բնավ չկա չափ,
Որքա՜ն անմատույց, որքա՜ն դժվարին սահմաններ անքննին,
Քո արարչատես խորաթափանց աչքին բաց են ու հայտնի:

34. Ո՞ւր են ձգվելու Քո մատները ճարտար կերպարանք տվող, որ չշտկվի ամեն խորդուբորդ,
Ո՞ւր պիտի ցոլան Քո սրատես դիտման շողերը թափանցող, որ ծածկվածները չբացահայտվեն:
Քեզ օվկիանոսն է բացում իր խորին անհունն անդունդի,
Քեզ երկինք ու ծով, և արարածներն են խոնարհվում գետին:

35. Ո՞ր աչքերը կարող էին հուսալ տեսնել սկզբնական գավառը Մասիս,
Թե Քո հրաշագործ նախասահմանող կամքը չգործեր:
Նրա ամպածին լուսահրաշ գագաթները բարձրավանդակ,
Երկնակամարի սահմանների ծագերին Քեզնով համբարձված վերև հառնեցին:

36. Այստեղից թող հանի ինձ երեսիդ լույսը Քո բարերար Փրկիչ,
Որ միայն Դու ես գովվում անհույս նեղվածներին հնարելով ճար,
Գնամ և ընդունեմ առողջությանս համար հանգիստ ու դադար տվող դարման,
Որից զրկվեցի, ընկնելով այս անելանելի արկածի մեջ դառնահնար:

(Վերջ) **Թարգմանությունը՝ ԱՐԱ ՋՈՀՐԱԲՅԱՆԻ**

ՀՐԵԱ ՑԵՂԱՍՊԱՆԱԳԵՏՆԵՐԻ ՎՐԴՈՎՄՈՒՆՔԸ ԴԵՍՊԱՆ ԼԵՎԻԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԹԻՎ

Հրեա ճանաչված ցեղասպանագետներ պրոֆ. Յաիր Օրոնը, պրոֆ. Իսրայել Չառնին եւ պրոֆ. Էլիհու Ռիխտերը բաց նամակ են հղել Իսրայելի արտգործնախարար Ցիպի Լիվնիին, արտահայտելով իրենց վրդովմունքը Թուրքիայում Իսրայելի դեսպան Գաբբի Լեւիի այն հայտարարության առթիվ, թե «այն, ինչ մենք (Իսրայելը) Գազայում իրագործեցինք, ցեղասպանություն չէր, ճիշտ այնպես, ինչպես ցեղասպանություն չէր հայերի հետ կատարվածը»:

Ինչպես գրել էր «Ազգը», Թուրքիայում Իսրայելի դեսպանը նման հայտարարությամբ հանդես էր եկել, երբ Թուրքիայի վարչապետ Էրդողանը խստորեն քննադատել էր Իսրայելի հարձակումները Գազայում:

«Դեսպան Լեւիին անարգանք պատճառելու աստիճան սխալվում է, եթե ժխտում էր հայերի ցեղասպանությունը: Նրա հայտարարությունները ծայր աստիճան վիրավորական են եւ ինքնակործան: Նրա առաքելությունը Իսրայելին հարգալից եւ արժանապատվությամբ ներկայացնելն է եւ ոչ թե պատմական ճշմարտությունների վերանայումը: Նման ժխտողական հայտարարությամբ հրապարակավ հանդես գալով, նա (դեսպանը) ճանապարհ է հարթում անտեսելու կամ ժխտելու բոլոր այն ցեղասպանական սպառնալիքները, որոնցից մի քանիսը սպառնում են ներկայիս Իսրայելին»,- գրել են նրանք արտգործնախարարին, շեշտելով, որ պատմական ծանրակշիռ ապացույցներ կան հաստատելու, որ հայերի հետ կատարվածը «այդ ժամանակվա թուրքական կառավարության մտադրված եւ ծրագրված քաղաքականությունն էր», որը լիուլի համապատասխանում է ՄԱԿ-ի ընդունած ցեղասպանության կոնվենցիայի դրույթներին:

«Իսրայելի դեսպանը նվաստացուցիչ աստիճանի ապատեղեկացված է նաեւ Գազայի իրադարձությունների վերաբերյալ: Այնտեղ «Համասն» է, որ ահաբեկչական գործողություններ է ծավալում, իսկ Իսրայելը պարզապես պաշտպանվում է ցեղասպանական արարքներ հրահրողներից: «Համասի» օգտագործած «Գրադ» տիպի հրթիռները մատակարարվել են Իրանից, որը երդվել է աշխարհի երեսից սրբել Իսրայելի պետությունը», այնուհետեւ գրել են միջազգային ճանաչման արժանացած հրեա ցեղասպանագետները, նամակի վերջում նշելով, որ ինչքան էլ Թուրքիայի հետ հարաբերությունները կենսական նշանակություն ունենան Իսրայելի համար, չարժե հրապարակային շողոքորթական հայտարարություններ անել եւ մասնակից դառնալ ցեղասպանական ժխտումներին: **«Ազգ»**, 03.03.2008թ. **Հ.Ծ.**

ԿԻՐԱԿՈՍ ԵՐԶՆԿԱՑԻ

Պատմական Հայաստանի եկեղյաց գավառի նշանավոր կենտրոն Երզնկան սերնդեսերունդ փոխանցել է դարավոր ավանդույթներ, եղել է մշակութային խոշոր կենտրոն, հայ ժողովրդի հոգևոր կյանքում ունեցել է նշանակալից դեր՝ շնորհիվ տասնյակ վանքերի և կրթօջախների: Երզնկայի վանքերում կրթվել և գործունեություն են ծավալել միջնադարյան հայ մշակույթի նշանավոր բազում գործիչներ՝ Հովհաննես Երզնկացին Պլուզը, Կոստանդին Երզնկացին, Հովհաննես Երզնկացի Ծործորեցին, Մովսես Երզնկացին, Կիրակոս Երզնկացին և այլոք: Երզնկայի վանքերում գրվել ու ընդօրինակվել են հարյուրավոր ձեռագրեր:

Վարդապետ, աստվածաբան, մատենագիր, իմաստասեր, մեկնիչ, բանաստեղծ, մանկավարժ, րաբունապետ Կիրակոս Երզնկացին, որը ապրել է մոտ 1270-1356-ական թթ., գրել է մեկնություններ, լուծմունքներ, շարականներ, ներբողներ, խրատական գործեր, զբաղվել է երաժշտությամբ: Նրա մասին առաջին հիշատակությանը հանդիպում ենք 1315թ. մի ձեռագրում, որպես ձեռագրի ստացող և գրիչ: Եսայի Նչեցու օրոք ուսանել է Գլաձորի համալսարանում և Երզնկայում, որտեղ ծավալել է գիտամանկավարժական բեղուն գործունեություն: Կրթական գործունեություն է ծավալել Կայփոսի և Երկանի վանքերում, մահացել է հավանաբար 1356թ. և թաղվել Երզնկայի Ս. Սարգիս եկեղեցում:

«Արդիւնական եւ հոգիաներկ վարդապետ» Երզնկացու գրչին են պատկանում «Նախերգան Տեառնընդառաջին», «Թուղթ առ Կարնեցիս», «Խրատ առ ուղղափառ հաւատացեալս», «Խրատ վասն խոստովանութեան», «Քարոզ վասն ոռոգմանց, սերմանց և հնձոցը» «Մեկնութիւն Հարիւրաւորացն Եւագրեայ», «Յաղագս Ը խորհրդոցն Եւագրեայ» գործերը, «Անձինք Աստուածածին» շարականը: Նա իր երկերում քննության է առել փիլիսոփայական այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ մարմնի և հոգու, անցավորի և հավիտենականի, նյութի և ստեղծագործության, եզակիի և ընդհանուրի փոխհարաբերության, իմացության միջոցների ու աստիճանների վերաբերյալ խնդիրները:

«Հարիւրաւորք վեցերորդք»-ի Կիրակոս Երզնկացու Լուծմունքը կարևորվում է երկու տեսանկյունից. մի կողմից այն մեզ համար ավելի մատչելի և ըմբռնելի է դարձնում 4-րդ դարի բյուզանդական մատենագիր Եվագր Պոնտացու խորհրդապաշտական աստվածաբանության հիմնական գծերը, իսկ մյուս կողմից՝ բացահայտում է հենց իրեն՝ Երզնկացի իմաստասերին:

Երզնկացին ճանաչողության առաջին աստիճանը համարում է զգայականը, ամբողջական ճանաչման համար անհրաժեշտ են հինգ հիմնական գործոններ՝ զգայություն, երևակայություն, կարծիք, տրամախոհություն, միտք, որոնցից ամենակարևորը միտքն է: Եվագր Պոնտացին իր երկում շեշտում է այն գաղափարը, որ մտքի լույսը երեք մասի է բաժանվում՝ տեսնել Աստծուն, անմարմիններին՝ այսինքն հրեշտակներին և մարմնավորներին՝ մարդկանց: Երզնկացին հետաքրքիր լուծումներով է մեկնաբանում Եվագրի այս միտքը: Ինչպես լույսը երեք մասի է բաժանվում՝ արեգակ (ցերեկվա իշխան), լուսին և աստղեր (գիշերվա) և ճրագի լույս. և ամենայն լույս նախ ինքն իրեն է տեսնել տալիս, ապա իր շուրջը, և աչքը, թեպետ առողջ է, սակայն առանց լույսի չի կարող տեսնել, և լույսն էլ իր հերթին օգտակար չի կարող լինել, եթե աչքը վնասի կամ կուրացնի: Զարգացնելով այս միտքը, ասում է, որ նույն կերպ և աչքերին իմանալի լույս իբրև արեգակ Աստծո գիտությունն է, երկրորդ լույսը իբրև լուսնի և աստղերի՝ անմարմինների գիտությունն է, և իբրև ճրագի լույս՝ մարմնավոր աշխարհի գիտությունը, որը տեսություն է և քննություն: Նրանք են ընդունակ տեսնելու, **ովքեր առողջ են հավատով, բարի՝ գործով և մաքուր՝ մտքով**: Աստծուն տեսնելը, այսինքն՝ Աստված ճանաչողությունը հասու է միայն վերջիններիս: Իսկ պիղծ և անհավատ մարդիկ կույրի նման օտար են այս լույսին: Երբ հարցը վերաբերում է մարմնի բնությունը քննելուն, ապա մարդը մաքուր և հստակ միտք ունենալու կարիք ունի, սակայն անմարմինների ճանաչողությունը պահանջում է մտքի մաքրություն, իսկ Երրորդության ճանաչողության համար արդեն կատարյալ և գրեթե անհնարին մաքրության կարիք է զգացվում:

Փաստորեն, Երզնկացին շեշտադրում է մարդու առաքինությունների և հոգևոր գործերում մտքի մաքրագործման դերը: Կիրակոս Երզնկացու՝ «Եվագրեայ Հարիւրաւորք վեցերորդք»-ի մեկնության մեջ շեշտադրվում է այն գաղափարը, որ մեղքը մարդու անձնիշխան կամքի արտահայտությունն է: Արդարները լույսի ճանապարհով են գնում, իսկ անմիտները՝ խավարի: Սակայն Տերը ոչ թե տանջում է վերջիններին, այլ ժամանակ է տալիս ապաշխարելու և դեպի ճշմարիտ գիտություն գալու: Աստված ողորմած է և նրա ողորմությամբ է մարդն արժանանում շնորհի և այդ շնորհով էլ ստեղծվել են արարածները: Բանականների գիտության սնունդով, այսինքն աշխարհաճանաչողությամբ աշխարհը փոփոխվում է: Ինչպես որ տունկն է ջրով սնվում, այնպես էլ բանական արարածները՝ իմաստությամբ: Քանի որ Տերը մարդկանց ապրեցնում է ոչ միայն «հացիւ», այլ նաև՝ «բանիւ», որ Աստծուց է գալիս: Ինչպես զգեստն է մարմնի մերկությունը ծածկում, այնպես էլ՝ առաքինությունը՝ հոգու:

ԱՇԽԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Գրականություն

1. Մ. Մ. Ձեռագիր թիվ 518, «Եվագրեայ Հարիւրավորք վեցերորդք», Մեկն. Կիրակոսի Երզնկացու:
2. Քիւրտեան, «Երիզա եւ Եկեղեաց գավառ», Վենետիկ, 1953:
3. Ստեփանյան Գ., «Երզնկա», Երևան, 2005:

ԿՆՇՎԵՆ ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆԻ ԵՒ ՎԻԿՏՈՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿՆԵՐԸ

ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից հովանավորվող՝ հռչակավոր մարդկանց եւ կարեւոր իրադարձությունների տարեդարձերին նվիրված միջոցառումների շարքում 2008-2009թթ. համար ընդգրկված են հայ անվանի գրող Վիլյամ Սարոյանի եւ աստղաֆիզիկոս Վիկտոր Համբարձումյանի ծննդյան 100-ամյակների տոնակատարությունները: Վ. Սարոյանի հոբելյանին նվիրված միջոցառումներ կանցկացվեն Հայաստանում եւ ԱՄՆ-ում, մասնավորապես՝ Ֆրեզնոյում, որտեղ ապրել եւ ստեղծագործել է մեծանուն գրողը: Ինչպես «Արմենպրեսին» հաղորդեցին ՀՀ ԱԳ նախարարության միջազգային կազմակերպությունների վարչության ՅՈՒՆԵՍԿՕ-ի բաժնից, Վ. Համբարձումյանի հոբելյանին նվիրված միջոցառումների ցանկն ու ժամանակացույցը դեռ քննարկման փուլում է:

Հայաստանը շարունակելու է մշակութային դիվանագիտությունը, որի շնորհիվ նախորդ տարի հաջողությամբ մի շարք միջոցառումներ են իրականացվել այլ երկրներում Հայաստանի դարավոր մշակույթն ու հոգեւոր կյանքն ըստ արժանվույն ներկայացնելու ուղղությամբ: Նախորդ տարի ՅՈՒՆԵՍԿՕ-ի միջոցառումների շարքում ընդգրկված են եղել հայտնի նկարիչ Ժան Գառզուի (Գառնիկ Զուլումյան) եւ ականավոր գիտնական Նորայր Սիսակյանի ծննդյան 100-ամյակի տոնակատարությունները: **«Հայաստանի Հանրապետություն»,** 12.03.2008թ.

ՉԻՆԱՑԻՆԵՐԻ ԿՐՈՆԸ

Ա. Չինական կրոնը ոչ թե մի բազմաստված ժողովրդական կրոն է, այլ պետական կազմակերպությանը հարմարեցրած ոգիների հավատ, որի մեջ աստվածները կազմում են իշխող ընտանիքների նախահայրերի հոգիները՝ բարձրագույն հոգիների հետ միանալով: Դրա համաձայն, ոգիները (Շին) բաժանվում են 3 խմբի՝ երկնային, երկրային և մարդկային: Բոլորի գլուխն է երկինքը (Տիեն), բայց պետության կողմից կատարված պաշտամունքի իսկական առարկան բարձունքների կայսրն է՝ Շանգ-տին, որը համարվում է բոլոր կայսրերի հավիտենական նախահայր և պետության գաղափարի մարմնացում:

Տեսանելի երկինքը (Ճապոնիայում՝ փայլող արևը) համարվում է բարձրագույն տիեզերական զորություն, միևնույն ժամանակ մի հոգևոր, բանականությամբ ու կամքով օժտված էություն, որ վերին կայսր է կոչվում (ունենալով հինգ ուրիշ կայսրեր իր կողքին և իրենից ցածր) և կարգավորում է ու իշխում բնության ու մարդկանց վրա: Բացի նրանից կան և ուրիշ ոգիներ՝ արևի, լուսնի, աստղերի և համաստեղությունների: Առանձին նշանակություն ունի երկրի ոգին (Հեու-տու), որը մեծ մասամբ իգական է համարվում և ամենքի կողմից պաշտամունքի առարկա է, որովհետև հանգուցյալները բնակվում են երկրի տակ: Իսկ հանգուցյալների և շիրիմների պաշտամունքը չինական կրոնի ամենաէական հատկանիշներից մեկն է: Ոգիներ ունեն նաև սարերը, գետերը, հացահատիկները և այլն: Մարդիկ զգում են ոգիների ներկայությունը, առանց տեսնելու և լսելու նրանց, թեև նրանք ապրում են տեսանելի իրերի մեջ և հաճախ են կենդանիների կերպարանք ընդունում: Չար ոգիների մասին խոսք չկա: Նրանք բոլորն էլ Շանգ-տիի ծառաներն են և մարդկանց հետ ունեցած հարաբերությունների ժամանակ մեծ նշանակություն են տալիս ընդհանուր և ընտանեկան կյանքի առաքինություններին:

Ինչպես որ ոգիները կապվում են նախահայրերի հոգիների հետ, այնպես էլ միանում են նրանց պաշտամունքները: Նախահայրերի համար աղոթք են անում, ճաշկերույթներ կազմակերպում, որոնց մասնակցելու համար դեռ այսօր էլ, հին սովորության համաձայն, հրավիրում են ոգիներ: Այդ ոգիները տեսանելի կերպով ներկայացնելու համար, ճաշկերույթի ժամանակ տան երեխաներից մեկին հագցնում են ննջեցյալ պապի զգեստը և նստեցնում սեղանի գլխին՝ ամենապատվավոր տեղում, որպեսզի նա, իբրև «ննջեցյալների երեխա», տան նախնիների ամբողջ խումբը ներկայացնի և նրանց մասնակցության տեսանելի գրավականը լինի:

Յուրաքանչյուր ոք ազատ է աղոթելու նաև բարձրագույն ոգիներին, բայց այսպիսիների համար հանդիսավոր պաշտամունք կատարելը պետության իրավունքն է: Գարնան և աշնան տոներին կայսրն անձամբ բաց երկնքի տակ զոհ է մատուցում ոչ միայն Շանգ-տիին, որին զոհ մատուցելու իրավունք միայն կայսրն ունի, այլև երկնքի և երկրի որդիներին, ինչպես և տարբեր երկրների իշխանները զոհ են մատուցում իրենց նահանգների ոգիներին, հատկապես հողի և դաշտային պտուղների ոգիներին: Ամենամեծ տոնը սակայն կայսեր նախնիների տոնն է, որի ժամանակ կայսրը, շրջապատված պետության ամենաբարձր իշխանավորներով, իր տան նախահայրերին և իր արքայական նախորդներին տարբեր տեսակի զոհեր է մատուցում: Այդ զոհաբերություններին ևս մասնակցելու համար երաժշտության և երգեցողության միջոցով հրավիրվում են նաև հոգիները, իսկ կայսերական ընտանիքից մի երեխա ներկայացնում է պետության բարձրագույն նախնիներին: Այս տոնը, առհասարակ, չինական պաշտամունքի գագաթնակետն է և խիստ բնորոշ է չինական կրոնի համար: Պաշտամունքի ժամանակ ոչ մի քահանա չի մասնակցում իբրև միջնորդ գերբնական զորությունների և մարդկանց միջև, այլ պետական պաշտոնեությունն է հանդիսավոր կերպով, իբրև չին ազգի ներկայացուցիչ, շնորհակալություն և խնդիրք մատուցում պետության պաշտպանության համար: Այդպիսով, կայսրն ու իր մանդարինները և ընդհանրապես իշխանավորներն են քահանայական պարտավորությունները կատարում և ամբողջ պաշտամունքը ենթարկվում է չինական վեց նախարարներից մեկին՝ իր բոլոր պաշտոնյաներով:

Չինական կրոնը միակն է բոլոր կրոնների մեջ, որն ամբողջությամբ ծառայում է պետության նպատակներին և սերտորեն կապված է նրա կազմակերպման խնդիրների հետ: Չինացիների պատկերացմամբ՝ բնության կարգավորումը և պետության կազմակերպումը համապատասխանում են միմյանց:

Չինական կրոնում ամբողջ հայացքն ուղղված է անցյալին, որի մեջ կաղապարներ ու օրինակներ են որոնվում ներկայի համար: Այդպիսի կողմնորոշումը որքան, որ օգտակար է՝ եղածը պահպանելու տեսանկյունից (ապացույցը՝ չինական 5000-ամյա պետությունն է), այնքան, և ավելի վնասակար է անհատական գործունեության, ազատ քաղաքակրթական առաջադիմության համար:

Չինական կրոնում բացակայում են ոչ միայն քահանաները, այլև մարգարեները՝ հավիտենական իդեալների այդ ոգևորված ներկայացուցիչները: Չինաստանում պակաս չէին իմաստուն ուսուցիչները, որոնք խոր ազդեցություն են թողել իրենց ժողովրդի մտածողության վրա: Այդպիսիների մեջ ամենագլխավոր տեղն են զբաղեցնում Կուն Ցզին և Լաոձեն (երկուսն էլ՝ Քրիստոսից առաջ VI դար), առաջինի գործունեությունն ու վարդապետությունը ավելի մեծ հետևանքներ ու շատ հետևորդներ ունեցավ, քան երկրորդինը:

Կուն Ցզին կամ Կոնֆուցիոսը («Կոնգ»՝ վարդապետ) ծնվել է 551թ. մ.թ.ա.՝ Լու նահանգում, ազնվական ծնողներից և սկսել է իր ուսուցչական գործունեությունը քսաներկու տարեկան հասակում: Նա թափառական կյանք է վարել, մի ժամանակ երկրի իշխանին հաճելի լինելով բարձրագույն պաշտոն ստացել, բայց շուտով համոզմունքների մեջ հաստատուն լինելու համար, զրկվել է պաշտոնից և տարիներ շարունակ անհայրենիք շրջել է այս ու այն կողմ՝ ապրելով բարեկամների օժանդակությամբ: Արդեն ծերացած Կ. Ցզին կրկին պատիվների է արժանացել, սակայն ոչ մի պաշտոն չի ստանձնել, և շրջապատված մեծաթիվ աշակերտներով ու բոլորի կողմից հարգված, վախճանվել է մ. թ. ա. 478-ին:

Նա ավելի բարոյախոս էր և պետական գործիչ, հրապարակախոս ու պատմաբան, քան մարգարե կամ մինչև իսկ կրոնի հիմնադիր: Կրոնի մասին քիչ էր խոսում և այդ քիչն էլ ոչ թե ջերմեռանդությամբ, այլ միայն պատկառանքով: Կրոնը նրա համար միայն հասարակական կազմակերպությունը պահպանելու միջոց էր: Այդ պատճառով էլ նա զուտ կրոնական զգացմունքին և հաղորդակցությանը թերահավատորեն էր վերաբերվում, աղոթքին նշանակություն չէր տալիս և գերբնական խնդիրներով չէր զբաղվում: Չինական ոգու ամենաազնիվ մարմնացումը լինելով՝ նա արժանի է Չինաստանի ամենամեծ որդին համարվելուն, ինչպես և կոչվում է: Իր ժողովրդի հավատի և սովորույթների դեմ նա երբեք չի վիճել, որովհետև պահպանողական բնավորություն ուներ և իր համար պատվո տիտղոս էր համարում, ոչ թե նորարար, այլ ավանդապաշտ լինելը: Հին, պատկառելի սովորություններն ու արարողությունները պիտի ճշտությամբ կատարվեն, որովհետև նրանք միացնում են նոր ժամանակը անցյալի հետ: Սակայն նա սրտով այնքան էլ կապված չէր կրոնական

→

Ա Ն Ա Շ Ա

Անաշա - Կոջակալե - բերդ Լեռնային Կիլիկիայում՝ Պոդանդոն գյուղաքաղաքից 5կմ հյուսիս-արևելք, Անաշա լեռան սեպածև մի բարձունքի անտառոտ գագաթին, Ցախուտ գետի և Գուգլակի լեռնանցքի միջև:

Ղևոնդ Ալիշանը գրում է. «Ժամաւ հեռի ի Պոդանդեայ ի գագաթան սեպացեալ լերինն Անաչայ՝ կանգնեալ կայ բերդ համանուն Անաշա-գալէսի ի 4000 բարձու յերեսաց գետոյն, հանդէպ Աքտաղ լերին»:

Անաշա բերդը, հավանաբար, հիմնադրվել է 9-րդ դարում բյուզանդացիների կողմից: Կառուցված է սև սրբատաշ քարով: Կիլիկյան հայկական թագավորության շրջանում համարվել է երկրի հզոր ու անմատչելի ամրոցներից մեկը: Ջուրը ամրոց է հասցվել կավե խողովակներով: Անաշայի ստորոտին է գտնվել բերդավանը, հետագայում՝ Անաշա գյուղը, այնտեղ միչև 1915-ի Մեծ եղեռնը նաև հայեր են ապրել: Ղ. Ալիշանը գտնում է, որ Անաշան հին հայկական վանք պետք է եղած լիներ և, միաժամանակ, նա անհնար էր համարում Անաշային Անդոշծի բերդի հետ նույնացնելը, քանի որ վերջինս, հավանաբար, պետք է գտնվելիս լիներ Ծովային Կիլիկիայում:

Անաշա բերդը ձևով նման էր Կուկլակ բերդին: Այնտեղ կարելի էր բարձրանալ սոճիների միջով գալարվող նեղ քարուտ մի ուղիով: Ըստ Ալիշանի, բերդից անջատ, ավելի բարձր քարաժայռի վրա, տեսանելի էին բազմաթիվ փոքր խաչաքանդակներ: Բերդը՝ Անաշա լեռան գագաթի տարածքում, համապատասխան երկայնանիստ մի կառույց ուներ և պարիսպները մեծ մասով տակավին կանգուն էին 19-րդ դարի սկզբին: Արևելյան և հարավային կողմերը պարիսպ չունեին՝ բնականից անմատչելի էին: Բերդի կիսավեր տարածքում մինչ օրս զանազան շինությունների հետքեր են պահպանվել:

Լանկլուան Անաշա բերդը բյուզանդական շինություն էր համարում, նկատելով նրա չորս մեծ աշտարակները, որոնց դռները երկաթից էին: Բերդն ուներ մարտկոցներ, ամբարտակներ, ջրամբարներ, որոնք 19-րդ դարի առաջին քառորդին տակավին շեն էին:

Թվում, թե Անաշան Կիլիկիայի Հայոց իշխանության շրջանի նշանավոր և հզոր բերդերից մեկն է եղել: Սակայն, դժբախտաբար, մեր պատմիչները նրա մասին չեն խոսել, չեն հաստատել կամ ժխտել այս կարծիքը: Գուցե հին ժամանակներում մեկ այլ անունով է ճանաչված եղել: Սմբատ Սպարապետը անվան հնչումով Անաշան նույնացնում է մերձավոր՝ Անդոշծի բերդի հետ, որի իշխանը Պաղտին էր. «Իշխան Անդօշծին եւ կուպային Պաղտինն», որը ներկա է եղել 1198թ. Լևոն Մեծի թագադրությանը:

ՋԵՄՄԱ ԲԱՂԴԱԴՅԱՆ

Գրականություն

1. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Ա-Դ
2. Հ. Միքայէլ Վ. Յովհաննէսեան, Հայկական Կիլիկիոյ բերդերն ու բերդաքաղաքները, Վենետիկ, 1970թ.
3. Ռոբերտ Էդվարդս, «Հայկական Կիլիկիայի ամրու թյունները», ԱՄՆ, 1987թ.

ավանդությունների հետ և շատ ավելի մեծ հետաքրքրություն է ցույց տալիս բարոյական սկզբունքներին: Ոգիների մասին նա ասում է. «Պատվեցեք նրանց բարեպաշտ կերպով, բայց հեռու կացեք նրանցից»: Իսկ երբ նրան հարցնում են, թե՝ պե՞տք է նրանց զոհեր մատուցել և արդյո՞ք նրանք կհասկանան ու օգուտ կունենան դրանից, նա պատասխանում է. «Պատվիր նախնյաց հոգիներին և այնպես գործի՛ր, իբր թե նրանք միշտ քո բոլոր գործերի վկան են, բայց մի՛ աշխատիր նրանց մասին ավելին իմանալ»:

Այնուամենայնիվ, նա սոսկ բարոյախոս չէր, իր բարոյականության կրոնական էր: Ուսուցանում էր, որ մարդու կյանքը պետք է կանոնակարգվի երկնքի կողմից բնական և հասարակական կյանքի համար անփոփոխելի կերպով որոշված կարգավորության համաձայն: Երկնքի այդ որոշումը, որ ցույց է տալիս նաև անհատին իր պարտականություններն ու ճակատագիրը, պետք է հարգվի իմաստունների կողմից. նրան պետք է հնազանդվել և երբեք չբարկանալ երկնքի վրա:

Իբրև իր ժողովրդի հարազատ զավակ՝ Կուն Ցզին ամենաբարձր պարտականություն էր համարում որդիական պատկառանքը (Հզիտո) կյանքի բոլոր պարագաներում. ծնողների, նախնյաց, ազգականների, բարեկամների և իշխանության նկատմամբ: Հատկապես՝ ծնողների նկատմամբ, որոնցից ամենաթանկագին բանը՝ կյանքն է ստացված, արտաքին վարվեցողության մեջ ամենամեծ պատկառանք պետք է ցույց տալ, ամենամեծ ուրախությունը պետք է համարել նրանց կերակուր, սնունդ մատակարարելը, նրանց հիվանդ ժամանակ պետք է ամենամեծ երկյուղը զգալ, մահվան դեպքում՝ ամենախորին հուսահատությունը. իսկ զոհամատուցումը պիտի կատարել ամենամեծ հանդիսությամբ: Թեև խոստովանում է, որ չորսից ոչ մեկը ամբողջությամբ չի իրագործել. Հորն այնպես ծառայել, ինչպես ինքն է ցանկանում իր որդիներին, իշխանին այնպես, ինչպես դա իր նախարարներից է պահանջում, մեծ եղբորն այնպես, ինչպես նա փոքրից, և բարեկամի հետ այնպես վարվել, ինչպես որ ինքն է ուզում: Բոլոր գործողությունների, նաև հին սովորույթների, մեջ պիտի իշխի չափավորությունը, մեղմությունն ու լուրջ վանականությունը. անմարդասեր սովորությունները պիտի վերանան պաշտամունքից. օրինակ՝ թանկության ժամանակ չպետք է մեռելներին պատվելու հետևից ընկնել՝ ի վնաս ապրողին: Պետք է վերջացնել սնապաշտական սովորությունները, ինչպես հարցման միջոցներով մեռելներին դուրս կանչելը և ամբողջ կյանքի նպատակը՝ հավասարակշռությունը, ոսկի միջին ճանապարհը իրականացնել: Եթե մարդն այդպես վարվի, ապրած կլինի երկրի օրենքների համաձայն:

Կ. Ցզին հավաքեց, գրեց ու խմբագրեց այն հինգ դասական գրքերը, որոնք չինական գիտության և աշխարհայացքի հիմքն են կազմում: Դրանք են՝ Յիհ-Կինգ (Գիրք իմաստության մասին), Շու-Կինգ (Գիրք պատմության մասին), Շի-Կինգ (Գիրք երգերի մասին), Լե-Կե (Կրոնական և աշխարհիկ սովորությունների գիրք) և Խուն-Տսեու (Լու երկրի՝ Կուն Ցզիի հայրենիքի, տարագրության մասին գիրք):

Կուն Ցզիի նշանավոր հետևորդներից էր Մենգծեն (371-288 Ք. ա. Մենցիոս). երևելի իմաստասեր, որ մեծ հմտությամբ կարողացավ Կուն Ցզիի վարդապետությունը պաշտպանել և նրա սկզբունքները ազատությամբ գործադրեց պետական կյանքի մեջ: Նրա գործունեության արդյունք էր անշուշտ, որ 3-րդ դարի ծանր հալածանքներից էլ Կոնֆուցիոնիզմը չոչնչացավ թեև, նրան բոլորովին հակառակվեցին նոր հարստությունների մի քանի կայսրեր:

(Շարունակելի)

ԱՐՇԱԿ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱԹԱՓ ԷՐԶՐՈՒՄԸ

Մութը արդէն ինկած է երբ կը մօտենանք էրզրումին: …Ահա Այծպտուքը, Հաւատամք եւ էյրալի գագաթները, Ծաղկաւէտ լեռները: Առանձին անուշութիւն մը կը զգամ երբ կ'իմանամ որ Սուրբ Նշան բլուրը կայ: Կամաց-կամաց քաղաք կը մտնենք: Քանի որ լեռներու եւ դաշտերու մէջ էինք, փոքր գյուղերէ կ'անցնէինք, մոռցեր էինք մեծ քաղաքները: Աջին քաղաքի մուտքի ցուցանակն է. «Էրզրում՝ Նուֆուս 295000»:

Անձրեւոտ օր է…: Իրաւ որ օրը ծուռ կը սկսի, եւ ամէն բան ծուռ կ'երթայ: Ծրագիր ունինք անշուշտ: Մուտուրկու Սուրբ Լուսաւորիչ, Հինձքի Կարմիր վանք, Խաչկավանք: Քաղաքն ալ պիտի պտտինք: Ու կը սկսինք: Բայց չենք հասնիր: Մեր առաջին հանգրուանը կ'ըլլայ Մուտուրկու գիւղը՝ քաղաքին հիւսիսը, գրեթէ անոր կցուած: Գիւղը կայ, ժամը չկայ: Դժուարութեամբ երիտասարդ մը կը ճարենք, որ մեզի կը խոստանայ յաջորդ՝ Հինձք գիւղը տանիլ եւ մխիթարել մեզ: Հինձքի՝ այսօրուան անուամբ Դումլուի քաղաքապետարանի մէջ պաշտօնեայ ազգական մը ունի: Երկուքով ալ բան մը չեն կրնար ընել: Հինձքի վայրն ալ չկայ, յիշատակն ալ չկայ: Բայց՝ տարօրինակ կերպով, մարդը կը յիշէ «Ռոմսիմեան» անունը: Հռիփսիմեանք: Ճիշտ է, այն քաղցր օրերուն էրզրումի հայերը, ամառ կիրակիներուն կ'երթային դէպի հիւսիս ու բնութեան գեղեցիկ գրկին մէջ, ջրվէժի մը հարեւանութեամբ, կը վայելէին «Հռիփսիմեանց» անուն քարայրները:

Սանասարյան վարժարան


Սուրբ Աստվածածին

Ըստ աւանդութեան՝ այս կոյսերը Հռոմէ դէպի Հայաստան իրենց փախուստի ընթացքին, քանի մը օր այստեղ պահուըտած են, ատկէ ալ ժողովուրդի աւանդութեան մէջ մնացած է «Հռիփսիմեանց քարայրները»: Հիմա թուրք պաշտօնեան ինծի կը յիշեցնէ այդ, եւ իսկապէս անկեղծ կերպով կը ջանայ օգտակար ըլլալ, որ կարենանք այցելել այդ քարայրները: Խնդիրը այն է, որ զինուորական գօտի է: Բազմաթիւ հասցէներու դիմելէ յետոյ հիմա հեռախօսի վրայ է շրջանի կայազօրի պետի հետ: Գնդապետը անգլերէն ալ կը խօսի, եւ ուրեմն հեռախօսը ձեռքս է, որ ես ալ համոզեմ, որ մենք անմեղ զբօսաշրջիկներ ենք, եկած ենք պտտելու եւ աղօթելու: Մաքուր անգլերէնով կը շարունակէ հետս, եւ կը պնդէ, որ իրեն յայտնեմ «the real reason», ի՞նչ է իրական պատճառը այս այցելութեան: Կը պատասխանեմ, կը համոզեմ, կը համոզուի երեւի, եւ կ'արտօնէ, որ առաջնորդի մը օգնութեամբ երթանք եւ այցելենք Հռիփսիմեանց մատուռները, բայց նկարել՝ «եասաք» (չի կարելի)…: Ասոր ալ փառք. ինքնաշարժերը կը նստինք եւ կը սուրանք դէպի առաջ: Ըսի՝ օրը ծուռ էր, այնպէս որ երբ տեղ մը հասանք, ինքնաշարժերը իշու յամառութեամբ կանգ առին, եւ ա'լ չկրցան բարձրանալ: Քարայրները կը գտնուէին բարձունքի մը ետին: Եւ առաջին անգամի համար մենք կամովին հրաժարեցանք…

….Մեր վիզը կախ՝ կը դառնանք քաղաք: Չենք իսկ փորձեր Խաչկավանք երթալ:

Խաչկավանքը էրզրումէն 20-23 քիլոմեթր հիւսիս-արեւմուտք կը գտնուի: Ըստ աւանդութեան՝ Հերակլ կայսր, երբոր 628թ. Քրիստոսի խաչափայտը ազատագրած կը դառնար Կ. Պոլիս, օր մը հանգչեցաւ այդ բլուրի վրայ, ի պատիվ զորքով եւ բանակով իրեն օգնութեան եկած հայոց Մժեժ Գնունի իշխանին: Այնտեղ ալ աղբիւր մը բխեցաւ եւ տեղը՝ գիւղը կոչուեցաւ Խաչկավանք: 1830ին Խաչկավանքի հայերը գաղթեցին դէպի Ախալքալաքի Խանդօ գիւղը:

Էրզրումի մէջ պարտադիր գործեր կան - գրադարան մտնել, քարտէս վերցնել, յիշատակի նուէրներ գնել: Եւ փնտրել հայկական էրզրումը՝ որ գրեթէ չկայ: Շատ ցաւալի է, բայց այս է իրականութիւնը: Էրզրումի մէջ հայու յիշատակը նուազագոյնի իջած է, մինչ, գէթ Սփիւռքի մէջ. «Չայն մը հնչեց»ը այնպէս կարծել կուտայ մեզի՝ թէ էրզրումը հայաշունչ քաղաք է, քանի այնտեղ կայ «հայ տիկինը», «հայ օրիորդը», «հայ գիւղացին», «հայ ծերուկը»: Սուրբ Աստուածածին եկեղեցին, Սանասարեան վարժարանը չենք կրնար գտնել: Միջնաբերդ կ'երթանք: Այնտեղ կը գտնուի Սուրբ Սարգիս եկեղեցին՝ որ 1600-ական թուականներուն մզկիթի է վերածուած: Այս բոլորին մէջ՝ ուրախութիւն մը ունիմ - շուկային մէջ, հնավաճառի մը մօտ կը գտնեմ կնօջական արծաթեայ փոքրիկ պայուսակ մը: Վստահաբար Վանայ գործ է. տուփին վրայ քանդակուած է «Մայր Հայաստանը»: Այն ծանօթ պատկերը՝ ուր հերարձակ հայուհին աւերակներու մէջ նստած է, ու տարիներով մեզի տուած է պատկերը հեռաւոր Հայաստանին: Հիմա՝ էրզրումի հնավաճառը ինծի կը յանձնէ մեր հայրենիքի պատկերը: Ողբը Հայաստանին: Անմիջապէս կը գնեմ: Կարծես թէ փրկեր եմ այդ նշխարը:

Մեր ուղին շատ հետաքրքրական կը դառնայ, մեր աշխարհագրագէտները կը շարունակեն լիցքաւորել զիս, կը փորձեն վերաորակաւորել զիս: Եւ ինչ համով է լսել զիրենք: …Փալան-Տէօքէն, չէ, Այծպտուքը, ու յետոյ՝ էրզրումի դաշտը, պատմութեան քառուղիները, Հովիւի կամուրջը՝ ուր Մուրցաչայը կը խառնուի Երասխին, հեռու՝ Խնուսն է, աւելի հեռուն՝ Բիւրականեան լեռները, Լեառն Սուկաւէտ, Սուքիասանց նահատակութեան վայրը: Այո՜. շարական պէտք չէ՞ երգել. «Ահա տեսաք զՍուկաւէտ լեառն դիտակ - բնակարան վկայիցն» որոնք իրենց Փրկիչէն՝ Աստուծմէ ողորմութիւն գտան: Քանի հայ գիտէ Սուքիասանց անունը, Սուկաւէտ լեռը: Ու կ'անցնինք Հայոց պատմութեան գաւառներէն՝ Վերին Բասեն, Հասան Գալէ…..

Ճամբան քիչ մը կը շեղինք, ու պահ մը կանգ կ'առնենք: 1878թ. ռուս-թուրքական սահմանին կը մօտենանք: Կարաուրկան յունական գիւղն է, երբեմնի հայտնի հայկական Պաշգիւղի հարեւանութեամբ: 1890թ. Սեպտեմբերի 28-ին Սարգիս Կուկունեան այս կէտէն փորձեց անցնիլ երկիր եւ ազատել Հայաստանը: Քաղցր միամտութիւն: Փողով- թմբուկով ճամբայ ելաւ, ռուսները մատնեցին, եւ կամուրջին վրայ դէմ դիմաց գտնուեցաւ թուրք բանակին, որ անխնայ հարուածեց զիրենք եւ սպաննեց իրենց կապոյտ երազը: Ֆիտայիներէն ոմանք ալ իրենք զիրենք գտան Սիբիրի Սախալին կղզին: Մենք զիրենք կը յիշենք «Կուկունեանի» երգով. «Երբ ալեկոծ ծովի վրայ իմ մակոյկը խորտակուի՝ ես փրփրադէզ ալեաց մէջը դեռ իմ յոյսը չեմ կտրի…»: Մեր ճամբան կը հետեւի Արաքսի հմայքներուն: Վերջալոյսը կը մօտենայ, Հրայրն ու Զաւէնը կը փորձեն ամէն րոպէ ինքնաշարժը կեցնել եւ այս կամ այն կէտը, քարը, բլուրը արեւի կտորը նկարել: Թոյլ չեմ տար եւ վաղը, երբոր ես իրենցմէ հրաշք - նկարներ ուզեմ, պիտի ըսեն. «չծգեցիր որ նկարենք»: Բայց պետք է աճապարենք, մեր վերջին հանգրուանը Կաղզուանն է, եւ Արտագերս ամրոցը:

Մեսրոպ արք. Աշճյանի հուշերը տպագրության պատրաստեց ՅՈՎԻԿ ՄԿՐՏՉՅԱՆԸ

Էրպրում

Այս կտավները պատկանում են աշխարհահռչակ հայ ծովանկարիչ՝ Հովհաննես Այվազովսկու վրձնին:

Սևանա կղզի. Արևածագ, 1869

Բայրոնի այցը Սբ.Ղազար կղզի. 1899

Թուրքական նավի պայթյունը. 1900